

ԱԿԱԴԵՄԻԿ
Ե. ՏԱՐԼԵ

1812 թվ.ի
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ
ԵՎ
ՆԱԳՈՒԼԵՈՆԻ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ
ՃԱԽՃԱԽՈՒՄԸ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

9(47)

4428

S-26

Sample 15

0/2 p. 2 suggests the inf. was inf. in -

not . . .

277

9(47)18

5-26

ԱԿԱԴԵՄԻԱ
Ե. ՏԱՐԼԵ

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1967 թ.

1812 թվի
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ԵՎ
ՆԱԳՈԼԵՈՆԻ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ
ԶԱԽԶԱԽՈՒՄԸ

4428 A II
32623

Թարգմանեց
Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ



ՀԱՅԿԱՆ ՄԱՐԿՈՒՄԻ
ԵՐԵՎԱՆ
1 9 4 1

Ֆաշիստական ավանտուրիստների հարձակումը Սովետական Միության վրա՝ անպայման կոստոնա պատմական սկիզբ՝ լիովին լիկվիդացիայի ենթարկելու հիտլերյան ռերագործ շայկան, որ այսֆան տարիներ խայտառակում է մարդկութանը հենց իր գոյության փաստով:

Հսկայի նմանվել ցանկացող ֆաշիստական այդ գաճաճ ծաղրանկարային կերպարը մեզ ստիպում է հիշել մի շատ սուր և ճիշտ դիտողություն, որ 1941 թվի գարնանն արված էր անգլիական ռադիկալ մամուլում. գերմանական «երկուրդ կայսրությունը» հանդիսանում է Նապոլեոնի կայսրության պարողիան, Հիտլերի «նվաճումներն» ինչ-որ ո՛չ «խսկական», այլ «կեղծ» նվաճումներ են, դրանք, ինչպես ասում է հիշյալ անգլիական հրապարակախոսը, շատ ավելի քան են նմանվում նապոլեոնյան նվաճումներին, քան փչացած մարգարիներ, որով սնվում են Հիտլերի դժբախտ հպատակները—քարո՛յ յուզին:

Փորձենք այստեղ քեկուզ համառոտակի վերհիշել, քե ինչու հարյուր քան հինգ տարի առաջ այնպես կտրուկ կերպով խզվեց մեծ տրագեդիան: Այդ մեզ կօգնի հասկանալու, քե ինչո՞ւ չի կարելի կասկածել նաև այն պարագիայի մոտադուր վախճանի մեջ, որ, ահա, արդեն մի քանի տարի մեր աչքերի առաջ խաղում են ֆաշիստական ճիվաղները:

Академик Е. ТАРАЕ
Отечественная война 1812 г.
и разгром империи Наполеона
(на армянском языке)
Армгиз Ереван, 1941

Պատ. խմբագիր՝
Հ. Ա. Դ ա ն ո յ ա ն

ՎՖ 10278. Պատվեր 933. Տիրած 5000. Տպագր. 5¼
մամ. Հեղ 4 մամ. Մեկ մամ. 37440 նշ. Ստորա-
գրված է տպագրության համար 6/XI—41 թ.

Հայկեանրատի տպարան, Երևան, Ահնինի 65.

ՆԱԿՈՒԵՈՒՆԻ ՆԵՐՍՈՒԺՈՒՄԸ ՌՈՒՍՍՏԱՆՆԵՐԻՆ

Նապոլեոնի բոլոր պատերազմներէն 1812 թվականի պատերազմը հանդիսանում է ամենաբացահայտ իմպերիալիստական պատերազմը, որ ամենից ավելի անմիջականորեն թեւադրել էին Փրանսիական խոշոր բուրժուազիայի շահերը:

Ռուսաստանի համար Նապոլեոնի հարձակման դեմ ուղղված պայքարը միակ միջոցն էր՝ պահպանելու իր տնտեսական ու քաղաքական անկախութիւնը, փրկելու ոչ միայն այն քայքայումից, որ իր հետ բերում էր ռուս-անգլիական առևտուրին խոչընդոտ հանդիսացող նապոլեոնյան քաղաքականութիւնը, այլև ապագա մասնատումից. վարչապետում լեհերը հույս ունեին Փրանսիական կայսեր օգնութեամբ ոչ միայն ստանալ Լիտվան ու Բելոռուսիան, այլև հասնել Սև ծովին: Այս պայմաններում 1812 թվականի պատերազմը Ռուսաստանի համար բառիս լիակատար իմաստով հանդիսացավ դոյութեան կռիվ, սաշտպանութիւն իմպերիալիստական գիշատչի հարձակումից:

Այստեղից էլ բղխում է համաժողովրդական ընդլայնումն այն մեծ պայքարի, որ ռուս ժողովուրդն այնպես հերոսաբար մղեց համաշխարհային նվաճողի դեմ:

Այդ պատերազմի մասին գիտլմատները խոսել ու մտածել սկսեցին առաջին անգամ 1810 թվի սկզբից:

Դեռ 1805 թվի դեկտեմբերի 2-ին Նապոլեոնն Աուստրիայի մոտ սոսկալի պարտութիւն էր պատճառել ավստրիական և ռուսական զորքերին, բայց արդեն այնտեղ էլ Փրանսիացիները

1) Ներկա բրոշյուրն իմ «Նապոլեոնի արշավանքը» գրքի կրճատ շարադրումն է:

չատ լավ տեսան, թե ինչպիսի տարբերություն կա ուսւ գիրն-
վորներէ վարքի և անհամեմատ ավելի քիչ տոկուն ու ավելի
քիչ քաջարի ավատրիացիներէ վարքի միջև: 1807 թվին ուսա-
կան դրոքերը, որոնց ցարն ուղարկել էր Պրուսիան վերջնական
նվաճումից փրկելու, Նապոլեոնի դեմ կռիւնցին սկզբում էյլա-
ուի արյունահեղ ճակատամարտում (փետրվարի 8-ին), որի
բախտն անորոշ մնաց, հետո էլ Ֆրիդլանդի ճակատամարտում
(հունիսի 14-ին), ուր Նապոլեոնը մնաց որպէս հաղթանակող:
Այդ իսկ ժամանակ Ալեքսանդր 1-ը Նապոլեոնի հետ ոչ միայն
հաշտություն, այլև դաշինք կնքեց: Այդ տեղի ունեցավ Ֆրիդ-
լանդի ճակատամարտից մի քանի օր հետո, երբ Նապոլեոնը
Տիլզիտ քաղաքում անձամբ տեսակցություն ունեցավ Ալեք-
սանդրի հետ: Նապոլեոնն Ալեքսանդրին ստիպեց հարել այս-
պէս կոչված՝ «կոնտինենտալ բլոկադային», այսինքն այլ խոս-
քերով ասած՝ Ռուսաստանը պարտավորվում էր ոչինչ չդնել
անգլիացիներէ, ոչինչ չծախել անգլիացիներին, սրանց չթողնել
Ռուսաստան և Անգլիային պատերազմ հայտարարել: Անգլիա-
յին խեղդելու և քայքայելու համար մտածած Նապոլեոնի այս
միջոցից ուսւ հողատերերն ու վաճառականները խիստ տու-
ժում էին, ուսական առևտուրը բոլորովին ընկավ, Ռուսաս-
տանի պետական ֆինանսներն ամենածանր դրության մեջ ըն-
կան:

1810-թվի հունիսին Հոլլանդիայի միացումը Փրանսիական
կայսրությանը, նույն թվականի օգոստոսին Փրանսիական և-
րեք դիվիզիաների փոխադրությունը Հարավային Գերմանիայից
դեպի Հյուսիսային Գերմանիա, դեպի Բալթիան ծովը, Փրան-
սիայից 50 հազար հրացան ուղարկելը Վարչայի հերցոգու-
թյուն¹⁾, — մոտեցող նոր փոթորիկի այս բոլոր ահարկու նշան-
ները ուսական դիպլոմատիան անմիջականորեն կապում էր
Նապոլեոնի «ավատրիական ամուսնության»²⁾ և ավատրիական
դաշինքի հետ: Ռուսաստանն այլևս հարկավոր չէր Նապոլեո-
նին, նրա իշխանությունը Եվրոպայի վրա՝ նոր հենակետ էր
ստանում Վիեննայում:

Երկու կայսրների հարաբերությունները քանի դնում՝ վա-

¹⁾ Նապոլեոնի ստեղծած լեհական պետությունը, որը գլխավորեց Նա-
պոլեոնին ենթարկվող սարսոնական թագավորը:

²⁾ Նապոլեոնը 1810 թվին ամուսնացավ ավատրիական Ֆրանց կայսեր
աղջկա—Մարիա Լուիզայի հետ:

տանում էին: Որքան չափ էր Նապոլեոնը դորքերով հեղեղում
լեհաստանն ու Պրուսիան, հակառակ Տիլզիտի հաշտության
պայմանների, որոնց համաձայն դրանք պետք է Պրուսիայից
էվակուացիայի ենթարկվեին, որքան չափ էր նա կռախնդրու-
թյամբ և աչալուրջ հետևում բռնադատի կանոնները կատա-
րելուն, այնքան ավելի էր ուսսական կառավարութիւնն իր
դադունի ակնկալութիւնները սերտորեն կապում Անգլիայի հետ:

1811 թվի ամառն Ալեքսանդրը հալանական է համարում
պատերազմը և խկապես, չուտով բանը հասնում է բացահայտ
թշնամական դեմոնտրացիայի: 1811 թվի օգոստոսի 15-ին սո-
վորական հանդիսավոր արարողությամբ տոնվում էր Նապոլեո-
նի անյանակոչության օրը: Ինչպես միշտ, այդ հանդեսի ակ-
տերից մեկն էր բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներէ
հանդիսավոր ընդունելութիւնը Թյուրլըյան պալատի¹⁾ դահա-
կան մեծ դահլիճում: Այստեղ Նապոլեոնը մոտեցավ ուսսական
դեսպան Կուրակինին: Կայսեր և դեսպանի խոսակցութիւնը
չափ չուտով խիստ լարված բնույթ ստացավ: Նապոլեոնն սկսեց
ցարին մեղադրել ռազմական պատրաստութիւնների և ռազմա-
տենչ դիտավորութիւնների մեջ, և ապա անցավ սպառնալիք-
ների: Կուրակինը հազիվ կարողացավ դիտողութիւն անել, թե
Ալեքսանդրը մնում է Նապոլեոնի հավատարիմ բարեկամը և
դաշնակիցը: «Դրանք խոսքեր են» — առարկեց Նապոլեոնը և
սկսեց վանդատվել Անգլիայի ոտնձգութիւններից, որը Ռու-
սաստանին կռվեցնում է Փրանսիայի հետ: Ընդունելութիւնը
վերջացավ: Նվորայի բոլոր ծայրերում լուրեր տարածվեցին,
թե Նապոլեոնն անխուսափելիորեն հարձակվելու է Ռուսաս-
տանի վրա: Դրանից հետո Պետերբուրգում բոլոր առ բոլի
սպասում էին ռազմական դործողութիւններն սկսվելուն:

1812 թվի սկզբում Նապոլեոնին հաջողվեց Ռուսաստանի
դեմ ռազմական դաշինք կնքել Պրուսիայի ու Ավստրիայի հետ:

Ապրիլի 27-ին (15) Նապոլեոնը երկարատև տեսակցութիւն
ունեցավ Կուրակինի հետ: Կուրակինը խնդրում էր Պրուսիայից
էվակուացիայի ենթարկել դորքերը: Նա խոսում էր Նապոլեո-
նի հսկայական սպառազնումների մասին, Պրուսիայի և նրա
«դաշինքի» մասին, որը բացահայտորեն թշնամական էր Ռու-
սաստանի հանդեպ: Նապոլեոնը կամ չէր լսում և իրենն էր

¹⁾ Կայսերական պալատ Փարիզում:

ասում, կամ կրկնում էր իր վճռական մերժումը: Հետևյալ օրը կուրակինն այցելեց արտաքին դործերի մինիստրին, հերցոգ Բասսանոյին: Կուրակինը համաձայնում էր համարյա բոլոր զիջումներին, բայց հայտարարեց, որ Ռուսաստանն առաջվա պես պահանջում է զորքերը հեռացնել Պրուսիայից, ինչպես նաև պնդում է, որ ինքն իրավունք ունի առևտուր անելու չեզոք տերություններին հետ:

Նապոլեոնը չափազանց վրդովվում էր Պրուսիայից զորքերը հեռացնելու պահանջից, այդ անյանում էր հանդուգն ուլտիմատում և հայտարարում էր, թե այդ «ուլտիմատումն» ապացույց է, որ ոչ թե ինքը, այլ ցարն է, որ առաջինն է հարձակման անցել: Բայց նա ուղում էր պատերազմի սկիզբը ձգձգել մինչև հունիս: Իսկ մինչ այդ նա որոշեց իր գեներալ-ադյուտանտին, կոմս Նարբոննին ուղարկել Վիենա, տեսնելու, թե ինչ է կատարվում ռուսական բանակում, ուր այդ ժամանակ զտնվում էր նաև ինքն Ալեքսանդրը:

Նարբոննին ուղարկելով Ալեքսանդրի մոտ՝ Նապոլեոնը նրկատի ուներ ո՛չ միայն պատահական, թերևս և շատ հետաքրքիր տեղեկություններ ստանալ Ռուսաստանի և ռուսական բանակի մասին. դործը տեղի էր ունենում մայիսի սկզբին, ռուսական ուժերն արդեն Նեմանի¹⁾ մոտ էին, և Նարբոննին հանձնարարված էր ամենախաղաղ բնույթի խոսակցություններ ունենալ և «բարի խոսքերով կանգնեցնել (ռուսական բանակի) շարժումը և նորին մեծությունը (Նապոլեոնին) ժամանակ տալ տեղ հասնելու»:

Այն տպավորությունները, որ Նարբոննը ստացավ դեպի Վիենա, Ալեքսանդրի մոտ հետախուզական այդ ճանապարհորդությունը կատարելիս, հանդում էին հետևյալին. ռուսական բանակը ոչ մի դեպքում առաջինը չի սկսի ռազմական դործողությունները, չի անցնի Նեմանը, չի գերավի Մեմելը: Ալեքսանդրն Անգլիայի հետ ոչ մի պայմանագիր չի կնքել, բայց այդ կանի, հենց որ որոտա առաջին թնդանոթային կրակոցը: Այնուհետև Նարբոննը ենթադրում է, որ ճակատամարտը տեղի կունենա անհապաղ, երբ Նապոլեոնը ներխուժի Ռուսաստան, որ Ռուսաստանը դեռ պայմանագիր չի կնքել Շվեդիայի հետ, թեև Շվեդիան, «լատ երևույթին», Նապոլեոնին

¹⁾ Այդ գետն այն ժամանակ Ռուսաստանի և Պրուսիայի սահմանն էր:

դեմ է, վերջապես, Նարբոննը գտնում է, որ հաշտությունը
Ռուսաստանի ու Թուրքիայի միջև դեռ հեռու է:

Վերջին ենթադրությունները սխալ գուրս եկան: Իրական-
ում «առաջին ճակատամարտը» Փրանսիացիների ներխուժու-
մից հետո այնքան էլ չուտ տեղի չունեցավ: Շվեդիայի և Ա-
լեքսանդրի միջև լիակատար համաձայնություն կար, Թուր-
քիայի հետ հաշտություն կնքվեց Ալեքսանդրի մոտ Նարբոննի
գտնվելուց կարճ ժամանակ անց:

Պատերազմը վրա էր հասնում: Նվրոպայի դիվանագետ-
ները մեծամասնությունը հավանում էր Նապոլեոնի հաղթա-
նակին: Բայց կային փաստեր, որոնք չատերին ստիպում էին
մտածածոներին մեջ ընկնել:

Նախ՝ Իսպանիան: Երբ Նապոլեոնը մոտեցավ Բորդոնո-
յին, նրա հետ եղած ամբողջ բանակը երկու անգամ պակաս
էր, քան նրա մյուս բանակը, որը հենց այն ժամանակ, 1812
թվի աշնանը կոչվում էր ու կործանվում Իսպանիայում: Աճա-
թե Նապոլեոնին ինչ էին հաղորդում Իսպանիայում եղած
անվերջ կոտորածի մասին. «Փրանսիան Իսպանիայում ունի ա-
վելի քան 220 հազար զորք, իսկ Փրանսիացիներն իշխում են
միայն այն կետերում, ուր գտնվում են նրանց զորքերը: Հա-
սարակալան կարծիքում ոչ մի բարեկամ չի նկատվում:
Ոչ մի հույս մտքերի հանդստացման, առաջնորդներին դրա-
վելու, ժողովրդին նվաճելու նկատմամբ: Դեռ նոր ուժեր են
գնում դեպի Պիրենեյները¹⁾... 300 հազար հոգի (Փրանսիացի-
ներ) դեռ գործի կղբվեն և դուցե կոտորվեն այս կործանիչ
պատերազմում: Եվ, ըստ այն մարդկանց կարծիքի, որոնք ա-
մենից ավելի իրադեկ են, ամենից հավատարիմ, ամենից ավելի
հաստատապես վճռել են օժանդակել կայսեր նպատակներին,
նրան չի հաջողվի իր կայսրության բոլոր ուժերով նվաճել
Թերակղզին»:

Երկրորդ հանգամանքը, որ թեթևացնում էր Ռուսաստանի
դրությունը, անսկիակա շրջադարձն էր չվեդական քաղաքակա-
նություն մեջ: Նապոլեոնյան մարչալ Բեռնադոտը, որ ընտր-
ված էր Շվեդիայի գահաժառանգ, Շվեդիայում երևան գա-
լուց անմիջապես հետո սկսեց մերձենալ Ալեքսանդրին: Դրա-

1) Լեոնաշլիթա, որը Փրանսիայից բաժանում է Իսպանիան (վերջինս
գրավում է Պիրենեյան թերակղզին):

նում նրան օգնում էր նաև չվեդական արխատոկրատիայի մի զգալի մասը, որ զայրացած էր Նապոլեոնի ինքնադիտության դեմ, Նապոլեոնի, որը սոսկ կարգադրությամբ Շվեդիայից հանդիսակել էր այսպես կոչված՝ Շվեդական Պոմերանիան։ Ալեքսանդրն էլ խոստացավ Շվեդիային նպաստել Նորվեգիան ձեռք բերելու դործում։

Ռուսաստանի համար երրորդ բարենպաստ հանգամանքը թուրքիայի հետ կնքված հաշտությունն էր, որ մայիսի 22-ին Կուտուզովը կնքել էր Բուխարեստում, Ռուսաստանի համար բավական ձեռնտու պայմաններով։ Բուխարեստի հաշտության պլանովոր առավելությունն այն էր, որ աղատվում էին թուրքիայի դեմ կոպիտ մի քանի տասնյակ հազար ռուս զինվորները։ Հիմա նրանց կարելի էր ուղարկել ռուս-ավստրիական սահմանը, Շվարցենբերգի ավստրիական օժանդակ կորպուսի դեմ, որը Նապոլեոնի զորքերի հետ միաժամանակ պետք է ներխուժեր Ռուսաստան։ Նապոլեոնը զայրացավ, երբ լիմացավ ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրելու մասին, թուրքերին ապուշներ անվանեց, և այդ դեռ ամենաքաղաքավարի արտահայտություններից մեկն էր, որոնցով Նապոլեոնը հյուրասիրում էր նրանց։

Սրանք էին համեմատաբար նպաստավոր այն պայմանները, որոնք կարծես թե Ռուսաստանին հույս էին տալիս հաջողությամբ պաշտպանվելու սարսափելի հակառակորդից։ Բայց և այնպես Պետերբուրգի արքունիքում, բարձր աղնվականություն մեջ չփոթություն էր տիրում։

1812 թվի մայիսի 9-ին Նապոլեոնը մեկնեց Դրեզդեն։ Ասում էին, թե նա գնում է Վիսլայի ափերում դոմիդ Մեծ բանակը դիտելու, բայց բոլորն էլ գիտեին, որ նա գնում է Ռուսաստանի դեմ պատերազմելու։

Հաղթական շուքով անցնելով Գերմանիայից, ամեն օր հասնելով ու անցնելով իր անհամար զորքերից, որոնք դեպի արևելք էին գնում, Նապոլեոնը բառիս լիակատար լիազորված էր նաև գնում էր եվրոպական կոնտինենտի դիկտատոր։

Սաքսոնական թագավորն ու թագուհին Դրեզդենից դուրս եկան մոտեցող Նապոլեոնին գլխավորելու։

Իր ամենազոր փեսային ողջունելու համար Դրեզդեն ժամանեց ավստրիական Ֆրանց I կայսրն իր կնոջ հետ միասին։

Պրուսական թագավորը Նապոլեոնից հատկապես թուլլովու-
թյուն խնդրեց նույնպես Դրեզդեն ժամանելու...

Դրեզդենի այդ հանդեսները, վաստակ միապետերի այդ
հսկայական հաւաքը, — այդ ամենը հակառուսական դրանդիոդ
դեմոնստրացիայի իմաստ ունեւ: Հենց այստեղ էլ Նապոլեոնը
զեկուցում լսեց կոմս Նարբոնից, որ եկել էր Վիէնայից:

Հրաժեշտ տալով իր թագակիր վաստակներին, Մարիա-
Լուիզային և իր ամբողջ արքունիքը թողնելով Դրեզդենում՝
Նապոլեոնը մեկնեց Մեծ բանակ, որը մի քանի հոսանքներով
գնում էր դեպի Նեման: Հունիսի 21-ին (9-ի) լուսաբացին նա
ժամանեց Նեմանից մի քանի կիլոմետրի վրա գտնվող Վիլ-
կովիչկի ավանը: Հունիսի 22-ին նրա հրամանով սկսվեց չար-
ժուսը Վիլկովիչից դեպի գետը:

Այդ ժամանակ Նեմանն անցած Մեծ բանակի թվի վերա-
բերյալ ճշգրիտ տեղեկություններ չկան: Ամենից հաճախ կանդ
են առնում հետեյալ թվի վրա, — 420 հազար հոգի, որոնք
անցան Նեմանը (30 հազար ավստրիացիներ մասնակցում էին
պատերազմին, բայց չէին անցնում Նեմանից): Այնուհետև,
հուլիսի և օգոստոսի ընթացքում ռուսական տերրիտորիա փո-
խադրվեց ևս 55 հազար մարդ: Վերջապես, արդեն պատերազ-
մի ետուն ժամանակ նաև մարչալ Վիլտորի կորպուսը (30 հա-
զար հոգի) և կորուստները համալրելու համար՝ երթական
գումարտակները (մոտ 70 հազար հոգի):

Ժամանակակիցների ցուցմունքների մեծամասնությունն
ասում է, որ Նեմանն անցնելու մոմենտին բանակի տրամա-
դրությունը կայտառ էր: Հաղթանակի նկատմամբ ոչ ոք չէր
կասկածում, և մարդիկ ցնծությամբ էին խոսում Հնդկաստա-
նի մասին, որ գնալու էին ռուսներին հաղթելուց հետո, Դեյլի
ու Բենարեսի¹⁾ ոսկու և քիչմիբե դործվածքների մասին:

Նապոլեոնը սլանում էր իր չարժանի գործերի անվերջ չար-
քերի միջով, չքախմբով չըջապատված, ընդունելով հստաֆետ-
ներին ու սուբհանդակներին, թելադրելով և ուղարկելով հրա-
մանները, հասնելով մի կորպուսից մյուսին:

Դեռ իր մղած առաջին մեծ պատերազմի—1796 թ. իտալիան
նվաճելու ժամանակներից Նապոլեոնն, ինչպես ինքն էր ասում,
«մոռացել էր հնադանդվելը» — մարդկանց հնազանդվելը: Բայց

1) Դեյլին ու Բենարեսը Հնդկաստանի հնագույն քաղաքներն են, գտնը-
վում են Գանգես գետի ափին:

1807 թվից, Տիլզիտից հետո նա սկսեց կորցնել նաև հանգա-
մանքներին հնազանդակելու և դրանք հաշվի առնելու ընդու-
նակութունը: «Հիմա ես ամեն ինչ կարող եմ անել» — ասաց
նա Տիլզիտից հետո, իր եղբայր Լյուսենին:

Բացարձակ իշխանութուն Եվրոպայի վրա — սա, այսպես
ասած՝ այն միևնույն ծրագիրն էր, որ Նապոլեոնը մինչև
իր կյանքի վերջն էլ շատ համեստ ու չափավոր էր համար-
ում...

Իսկ 1812 թվի հունիսին, Դրեզդենից Վիլիովելչիի դնալիս,
Դրեզդենում հենց նոր դիտավոր ստուգատեսի ենթարկած լի-
նելով իր առաջ դողացող, ստորաբարչ վասսալներին, ամբողջ
ճանապարհին ցնծաղին ողջուններ ընդունելով իր կես միլիո-
նանոց բանակի Փրանսիական զորամասերից, Նապոլեոնն ան-
համեմատ ավելի շատ բան էր երազում, բայց իր բանա-
կին չէր ասում այն, ինչ որ մտերմական զրույցում ասաց
կոմս Նարբոննին:

Նապոլեոնի մղած անթիվ ու անհամար պատերազմներից
ոչ մեկի ժամանակ չէր եղել նրա ձեռնարկած դործի լիակա-
տար անորոշության և առեղծվածայնության այդ զգացումը:
Նվ այնուամենայնիվ հիմա, երբ անհամար ուժերը ներդաշ-
նակ, փայլուն շարքերով շարժվում էին դեպի Նեման, նույն-
նիսկ անորոշությունն էլ հրապուրիչ էր:

Բայց ահա թե Նապոլեոնն ինչ էր ասում կոմս Նարբոննին,
որը ժամանել էր Վիլնայից. «Հիմա կոչանք Մոսկվայի վրա,
իսկ Մոսկվայից ինչո՞ւ չդառնալ դեպի Հնդկաստան: Թող
Նապոլեոնին չասեն, թե Հնդկաստանը հեռու է Մոսկվայից:
Ալեքսանդր Մակեդոնացու¹⁾ համար էլ Հնդկաստանը մոտիկ
էր Հունաստանին, բայց չէ՞ որ նա դրա առաջ կանգ չառավ:
Ալեքսանդր Մակեդոնացին հասավ Գանդեսին, մեկնած լինե-
լով նույնպիսի հեռավոր կետից, ինչպես Մոսկվան... Իսկ
բավական է, որ Փրանսիական սուրը դեպի Գանդեսին, որ-
պեսզի փուլ դա Անգլիայի վաճառականական մեծության այդ
չենքը»: Նշանակում է, ավելի քան պատերազմի հիմնական
բեկումները Մոսկվան և Հնդկաստանն էին: Բայց ո՞չ: Այդ

1) Հնադարյան հռչակավոր զորավար, որ սկզբում իր կառավարած Մա-
կեդոնիայից արշավելով անցավ Հնդկաստան և նվաճեց այդ ճանապարհին
գտնվող բոլոր երկրները:

նույն օրերին Նապոլեոնն ասում է, թե ցարը նրան պատե-
րազմի է հարկադրում իր «ուլտիմատումով» (Պրուսիան Փրան-
սիական զորքերից մաքրելու մասին), թե պատերազմի նպա-
տակն է խեղճի բերել ցարին և չթողնել, որ նա մերձենա
Անգլիային, թե այս պատերազմը դուռ «քաղաքական» է, այ-
սինքն ձեռնարկվում է դիվանագիտական որոշ նպատակով, և
հենց որ այդ նպատակն իրագործվի, Նապոլեոնը պատրաստ
կլինի հաշտվելու։ Մեթե զարմանալի է, որ Մեծ բանակը
մարչանդից մինչև խոհարարները չգիտեի, թե ինչու են իրեն
տանում։ Ռուսաստան, երբ կայսրն ինքը ոչ մի կերպ չէր կա-
րող ճշգրիտ կերպով պատասխանել այդ հարցին։

Ժամանելով Վիլկովչիկի կալվածատիրոջ տունը, Նապո-
լեոնը հունիսի 22-ին դրեց մի կողմ՝ ուղղված Մեծ բանակին.
«Գնանք դեպի առաջ, անցնենք Նեմանը, զորքերը մտցնենք
նրա (Ռուսաստանի) տերիտորիան...» — ասված էր այդ կո-
չում, որը և հանդիսացավ պատերազմի հայտարարում Ռու-
սաստանին։ Նապոլեոնը ուրիշ որևէ կերպ պատերազմ չհայ-
տարարեց։ Հունիսի 23-ին (11-ին) Նապոլեոնը չրջեց Նեմանի
ափերում։ Կառուցվում էր երեք կամուրջ, երրորդի կառու-
ցումն ավարտվեց հունիսի 23-ից լույս 24-ի դիչերվա ժամը
12-ին։ Չորրորդ կամուրջը, որ գտնվում էր Կոֆույի մոտ,
նույնպես կարող էր օգտագործվել դեռևս անցնելու համար։

1812 թվի հունիսի լույս 24-ի դիչերը Նապոլեոնը հրամա-
յեց սկսել դեռևս անցնելը։ Վիճակը դժված էր։

Չորս կամուրջներով — մեկը հին և երեքը նոր — Փրանսիա-
կան բանակը դուռը դնդի հետևից, մարտկոցը մատկոցի հե-
տեվից, անընդհատ հոսանքով անցնում էր Նեմանը և շարժեր
կազմում ռուսական ափում։ Նապոլեոնը կամուրջներից մեկի
մոտ կանգնած, բարևում էր անվերջ անցնող զնդերին։ Հին
գվարդիայի հետ անցնելով դեռը՝ նա առանց չքախմբի սլացավ
դեպի հարևան անտառը։

Ոչ մի տեղ ոչ ոք չկար։ Ամայի դաշտեր, ավազուտներ,
անտառ ու անտառ, որ ձգվում էր ինչքան աչքը կտրեր։ Քար
լուռթյուն, ոչ մի մարդ, մարդկային բնակավայր ոչ մի
նշույլ, ամբողջ հորիզոնով մեկ — մուգ, մթին, անծայրածիր
անտառներ — ահա Մեծ բանակի առաջին տպավորությունները
ռուսական տերիտորիայում։

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԵՂՈՐԸ:
ՌՈՒՍՍԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՆԱՀԱՆՋԸ**

Վիլնայում հունիսի 24-ի ուշ երեկոյան Ալեքսանդրն իր պատվին կազմակերպւած պարահանդեսում իմացալ, որ Նապոլեոնն անցել է ռուսական սահմանը: Հետեյալ օրը նա կանգնեց իր շքախմբում եղած՝ ռուսիկանության մինիստր Բալաչովին և հրամայեց նամակ տանել Նապոլեոնին: Բացի ցարի նամակը հանձնելուց, Բալաչովին հանձնարարեց Փրանսիական կայսեր հետ խոսելիս բանավոր կերպով ավելացնել, որ «Եթե Նապոլեոնը մտադիր է բանակցությունների մեջ մտնել, ապա դրանք կարող են այժմ սկսվել, միայն մեկ, բայց անխառնելի պայմանով, այսինքն, որ նրա բանակները մեր սահմանից դուրս դնան: Հակառակ դեպքում թաղավորը նրան խոսք է տալիս, քանի դեռ թեկուզ մեկ ղինված Փրանսիացի կլինի Ռուսաստանում, չխոսել և ոչ մի խոսք չընդունել հաշտության մասին»:

Բալաչովը մեկնեց նույն դիշերը և արդեն լուսաբացին հասալ Փրանսիական բանակի ավանպոստերին, Ռոսսիենի արվանը: Ֆրանսիական հուսարները նրան տարան սկզբում Մյուրաա(1), հետո Դալու(2) մոտ, որը, չնայած բողոքին, շատ կոպիտ կերպով Բալաչովից վերցրեց Ալեքսանդրի նամակը և հանձնատարի հետ ուղարկեց Նապոլեոնին: Հետեյալ օրը Բալաչովին հայտարարեց, որ նա Դալուի կորպուսի հետ միասին դնա դեպի Վիլնա: Միայն հունիսի 30-ին Վիլնայում Բալաչովին տարան կայսերական կարիները: «Այս կարիները հենց այն սենյակն էր, որտեղից հինգ օր առաջ Ալեքսանդր I կայսրը բարեհաճել էր ուղարկել ինձ», — գրում է Բալաչովը:

Բալաչովն այդ օրը երկու տեսակցություն ունեցալ Նապոլեոնի հետ: Նապոլեոնը խոսում էր այն մասին, թե ինքը բնավ մտադիր չէր Ռուսաստանի դեմ պատերազմելու, թե ինքը նույնիսկ իր բոլոր անձնական սպասակալման ուղարկելու

1) Նապոլեոնի բանակի մարշալ, 1808 թվից՝ նեապոլիտանյան թագավոր, որ այդ պոստին նշանակվել էր Նապոլեոնի կողմից:

2) Նապոլեոնի մարշալներից մեկը:

էր Իսպանիա, ուր ուզում էր մեկնել: «Ես դիտեմ, որ Ֆրանսիայի պատերազմը Ռուսաստանի դեմ՝ դատարկ բան չէ ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ Ռուսաստանի համար: Ես մեծ պատրաստութիւններ եմ տեսել և երեք անգամ ավելի ուժ ունեմ, քան դուք: Ես, ինչպես և դուք, թերևս ավելի լալ քան դուք, զիտեմ նաև, թե դուք ինչքան զորք ունեք: Ձեր հետևադորը 120 հազար մարդ է, իսկ հեծելազորը՝ 60-ից մինչև 70 հազար: Մի խոսքով, ընդհանուր առմամբ 200 հազարից պակաս: Ես երեք անգամ ավելի ունեմ»:

Այնուհետև Նապոլեոնն այնքան էլ չկարողացավ թաքցնել իր ջլախուժիւնը այն բանի համար, որ Բարկլայը¹⁾ նահանջել էր Վիլնայից: Նա կուղենար, որ Բարկլայը մնար իր տեղում, իսկ ինքն անհապաղ կջախջախեր նրան. դա շատ ձեռնտու կլիներ Նապոլեոնին: «Ես չեմ ճանաչում Բարկլայ դե Տոլլիին, — ասում էր Նապոլեոնը Բալաչովին, — բայց, դատելով ըստ կամայնիայի սկզբի, ես կարծում եմ, որ նրա ռազմական տաղանդը մեծ չէ: Ձեր մղած պատերազմներէց ոչ մեկը և երբեք չի սկսվել այսպիսի անկարգութիւնով... Գանի՛-քանի պահեստներ են վառվել, և ինչո՞ւ...» Այնուհետև Նապոլեոնն սկսեց կշտամբել Ալեքսանդրին, թե նա ինքը, չեղվելով տիլդիտյան քաղաքականութիւնից, իր՝ Նապոլեոնի հետ բարեկամութիւն անելուց, «փչացրեց իր թաղավորութիւնը»:

Վերադառնալով Ալեքսանդրի մոտ՝ Բալաչովը գեկուցեց Նապոլեոնի հետ ունեցած խոսակցության մասին: Այսպես ուրեմն, պատերազմը վերջնականապես և անդառնալիորեն վճռված բան էր: 1812 թ. հունիսի 13-ին (25) զորքերին հրաման տրվեց, որով հայտարարվեց Նապոլեոնի ներխուժման և պատերազմը սկսվելու մասին:

Երբ լուր ստացվեց, թե Նապոլեոնը Նեմանից ուղիղ ճանապարհով չարժւում է դեպի Վիլնա, և առջևից դալիս է Մյուրատն իր հեծելազորով, որոշվեց Վիլնայից անհապաղ հեռանալ դեպի Դրիսսայի «ամրացված ճամբարը», որ կառուցված էր ցարի շքամբում գտնվող գետերալ Ֆուլի պլանով: Վիլնելով ուսյալ գետերալ, թեորետիկ, յուրաքանչյուր պատերազմի սկզբում ստեղծելով ամենաընդարձակ, ճշգրիտ մշակ-

1) Բարկլայ դե Տոլլի—առասական առաջին բանակի հրամանատարը:

ված պլաններ, որոնցից երեք և ոչինչ դուրս չէր դալիս, Ֆուլին իր կարյերան սկսել էր պրուսական զորքերում, բայց անտեղ անհաջողության հանդիպելով՝ անցել էր ռուսական ծառայության: Պետերբուրգում նա Ալեքսանդր Իսիկովի անունով հայտնի էր սովորեցնում: Ալեքսանդրը հավատում էր նրա հանձարեղությանը և իր հետ պատերազմ տարավ:

Ալեքսանդրը Ֆուլի խորհրդով առանց Բարկլային ու Բաղրատիոնին հարցնելու, հրամայեց «ամբողջած ճամբար» սարքել Դվինայի ափին գտնվող Դրիսսա ավանում: Ֆուլի պլանով այս ճամբարը, դռնվելով երկու մեծ ճանապարհների միջև, կարող էր միևնույն չափով խոչընդոտ հանդիսանալ Նապոլեոնին դեպի Պետերբուրգ ու Մոսկվա գնալու: Եվ երբ Նապոլեոնն անցավ Նեմանը, ռուսական բանակին հրամայվեց նաև հանջել Դրիսսա:

«Դրիսսայի ճամբարը կարող էր հնարել կամ խելագարը կամ դավաճանը», — երես առ երես կատեգորիկ կերպով հայտարարեցին Ալեքսանդրին մի քանի համարձակ գեներալներ, երբ բանակը ցարի ու Բարկլայի զլխավորությամբ գտնվում էր Դրիսսայում: Դրիսսայի ճամբարն իր կարծեցյալ «ամբողջություններով» մի քանի օր էլ չի դիմանա, և այստեղ ռուսական բանակին չընկալալու ու խայտառակ կապիտուլյացիա է սպառնում, — ամեն կողմից սնդում էին Ալեքսանդրի մերձավորները:

Ֆուլի անհեթեթ պլանն, իհարկե, մերժվեց Նապոլեոնի ներխուժումից արդեն մի քանի օր հետո, բայց և այնպես այդ պլանն էական մնաց հասցրեց: Այդպիսի «ամբողջած ճամբարներ» իդեայի համաձայն, ենթադրվում էր, որ պաշտպանվողը անսպասան պետք է դործի երկու միմյանցից բաժան բանակների օգնությամբ. մեկը պաշտպանում է ճամբարը և կանգնեցնում է պաշարող թշնամուն, իսկ մյուսը, բաց դաշտում մանյովրներ կատարելով, դրոհներով նեղում է պաշարողներին և ալին: Բայց ռուսական բանակն առանց այս էլ լիավաճիլոուսական Պոկսյե չընկնի բնությամբ բաժանված էր երկու մասի, մանավանդ որ բոլորովին անհայտ էր, թե Նապոլեոնը դեպի ո՞ւր և ի՞նչ ճանապարհներով է շարժվել: Իսկ քանի դեռ մնում էր Դրիսսայի պաշտպանություն պլանը, ռուսական այդ երկու անջատ բանակներն առավել ևս անկարող էին որեէ ջանք դործադրել միանալու համար:

Յարը հալատում էր Ֆուլի պլանի պետանիության: Բոլոր չրջապատողները դեմ էին այդ պլանին: Բայց ոչ ոք որևէ նպատակահարմար առաջարկ չէր անում, բայց Բարկլայ դ^ժ Տոլլից, որին զիչ էին լսում: Նա խորհուրդ էր տալու նա- հանջել, ուսի չանել սահմանի մոտ դեխավոր ճակատամարտի բռնվելու, որն անշուշտ տանուլ կտրվեր: Ալեքսանդրը և նրա շքախումբը պարզապես նվաղեցնում էին Փրանսիական բանա- կի թիվը: Սակայն պատերազմի առաջին իսկ օրերից այդ մխի- թարական իլլյուզիաները չքացան և հույսերն սկսեցին տեղի տալ չիթթվածության:

Նապոլեոնի ներխուժման մոմենտին ռուսական զորքերը ցրված էին 800 վերստ տարածության վրա: Ոմանք հալատաց- նում են, թե Բարկլայ դե-Տոլլին սկզբում մտածում էր ճակա- տամարտի մատին, բայց ստիպված եղավ հրաժարվել այդ մտքից: Պարզվեց, որ Ռուսաստան մտած՝ Նապոլեոնյան զոր- քերի թիվը շատ ավելի մեծ է, քան կարծում էին ռուսական շտաբում և արքունիքում: Որոշվեց նահանջել:

Ռուսական պետական տերիտորիայի առաջին կորուստը չիթթություն առաջացրեց Ալեքսանդրի ամենամոտ չրջապա- տում: «Ինչպե՞ս, պատերազմը սկսվելուց հետո Հինգ օրում կորցնե՞լ Վիլնան: Փախուստի դիմել, թշնամուն այնքան քա- դաքներ ու հողեր թողնել և այդ բոլորով հանդերձ պարծե- նա՞լ կամպանիայի սկզբնավորությամբ: Թշնամուն էլ ի՞նչ է մնում անել: Թեթև միայն այն, որ առանց որևէ խոչընդոտի հանդիպելու մոտենա մեր երկու մայրաքաղաքներին»: Տե՛ր աստված: Տաք արցունքները խեղդում են իմ խոսքերը»: Այս- պես էր դրում պետական քարտուղար Շիշկովը պատերազմի առաջին օրերին: Ծերունի պալատականը չէր նախատեսում, որ լինի ու կոչնչացնի նվաճողի բանակը և կազատի իր երկիրը:

Անցնելով Նեմանը՝ Նապոլեոնը կարծում էր, թե անմի- ջականորեն իր դեմ գործող ռուսական բանակը հալատար է մոտավորապես 200 հազար հոգու: Նա սխալվում էր: Իրակա- նում, եթե չհաշվենք զենեքալ Տորմասովի հարավային բանա- վը, որի դեմ կանգնած էր Շվարցենբերգի ավստրիական կոր- պուսը, Նապոլեոնի ներխուժման օրը ռուսական հրամանատա- րությունն ուներ հետեյալ ուժերը. Բարկլայի բանակում (1-ին բանակում) կար 118 հազար մարդ, Բադրատինի բանակում

(2-րդ բանակում)—35 հազար, ընդամենը 153 հազար մարդ։ Նահանջի ժամանակ այդ բանակները համալրվում էին, բայց և այնպես Սմոլենսկում, երբ, վերջապես, Բարկլայն ու Բաղրատիոնը միացան, նրանք ունեին ընդամենը 113 հազար մարդ։ Հիվանդություններն ու կռիվները պակասեցրել էին բանակի թիվը։

Ռուսական բանակն ուներ բավականաչափ հրետանի և լավ հրետավորներ։ Կարելի է ասել, որ XIX դարի ամբողջ առաջին կեսում ռուսական հրետանին իր մարտունակությամբ երբեք այնքան մոտ չէր եղել Փրանսիական հրետանուն, ինչպես հենց 1812, 1813, 1814 թվականներին։

Այն պահին, երբ Նապոլեոնն անցնում էր Նեմանը, ռուսական զորքերը, համեմատաբար ասած, ավելի լավ էին մատակարարված հրետանիով, քան նապոլեոնյան բանակը. ռուսների յուրաքանչյուր հազար զինվորին ընկնում էր մոտավորապես յոթը թնդանոթ, իսկ Նապոլեոնի յուրաքանչյուր հազար զինվորին՝ չորս թնդանոթից ոչ ավելի։ Ի հարկե, այս հաշվով թնդանոթներն ըստ քանակ թիվը նրա մոտ այնուամենայնիվ ավելի մեծ էր, քան ռուսների մոտ, որովհետև նրա բանակը պատերազմի սկզբում ավելի շատ էր, քան ռուսական բանակը։

Ռուսական բանակի թույլ կողմը սպառյալան և նույնիսկ գնեներալական կազմի մի մասի ռազմական (և ընդհանուր) տղիտությունն էր։ Մյուս թույլ կողմն էր բարբարոսաբար դաժան, իսկական դավադանային դիպցիալիստան։ Երբորդ թույլ կողմը մոլի դեշատություն էր, — ոչ միայն զանազան «կոմիսիոներներ» և այլ ինտենդանտական աստիճանավորների գողությունը, այլև—իհարկե ոչ բոլոր—բայց շատ և շատ գնդային, վաչտային, դումարտակային և այլ մասն տեսակ հրամանատարների դանձադողությունը—որոնք հաբստանում էին զինվորների պարենավորման հաշվին։ Ծանր էր զինվորի դրությունը, բայց պատերազմի ժամանակ երբեմն ավելի լավ էր լինում, քան խաղաղ ժամանակ։ Կոպտում հաշմանդամ դառնալն ու մեռնելն ավելի ցանկալի էր թվում, քան ծնոտների ջարդելն ու մեռնելը շարաձողիման (իբր պատիժ չարքերի միջով անցկացնելու) ժամանակ։ Պատերազմի ժամանակ պետերն էլ այնպիսի դադանություններ չէին անում, ինչպես խաղաղ ժամանակ։ Բացի դրանից, սպաների մեջ կային, իհարկե, նաև այնպիսիները, որոնք զինվորների հետ եղբոր պես

էին ապրում, կային և գեներալներ, որոնց պաշտում էին զին-
վորները, օրինակ, Հենց նույն Բաղրատիոնը կամ Կուլչինը,
կամ Կոնովնիցինը, Ռաեսկին կամ Նեյկերովսկին:

Բարկլայը Վիլնայից դուրս եկավ հունիսի 26-ին և գնաց
Դրիսսայի ճամբարի ուղղութեամբ, թեպետ արդեն երբ նա
դուրս էր գալիս Վիլնայից, թե՛ նա ինքը և թե՛ Ալեքսանդրը
և ցարի բոլոր մերձավորները համոզված էին, որ Դրիսսայի
այդ ճամբարն անչորհք փուլի անմիտ հնարանքն է:

Հուլիսի 10-ին Բարկլայը հարյուր հազարանոց բանակով
մտավ Դրիսսա, իսկ 16-ին արդեն բոլոր զորքերով, ամբողջ
գումակով, ամբողջ պաշարով և ցարի հետ միասին թողեց
Դրիսսայի ճամբարը և գնաց Վիտեբսկի ուղղութեամբ:

Հուլիսյան տասը չոգ ու տաղակալի օրերի ընթացքում
Բարկլայը Դրիսսայից Պոլոցկի վրայով գնում էր դեպի Վի-
տեբսկ, լրտեսներից ու հետախուզութունից հաջորդաբար տե-
ղեկություններ ստանալով, որ Նապոլեոնը դիտավոր ուժերով
նույնպես գնում է դեպի Վիտեբսկ: Նապոլեոնը կարող էր
Վիտեբսկ բերել մինչև 200 հազար մարդ, իսկ Բարկլայը նույ-
նիսկ լրիվ 75 հազար էլ չուներ. նա ստիպված էր իր 100
հազարից առանձնացնել ամբողջ քառորդ մասը (25000 հոգի),
հազարից Վիտեբսկի, որը պաշտպանում էր Պետեր-
բուրգի ճանապարհը:

Պաշտպանել Պետերբուրգին իր կառավարական հիմնարկու-
թյուններով ու ցարական ընտանիքով—ահա այն խնդիրը, որ
Բարկլայը հանձնարարել էր Վիտեբսկեյին:

Վիտեբսկեյն միջակ ու անվճռական զորավար էր, բա-
ցի այդ, Պետերբուրգի պաշտպանի պատասխանատու զերը
սատիկ ճնշում էր նրան: Վիտեբսկեյի զորքերում կային
աշխարհագրորի շատ ջոկատներ, և աշխարհագրականները բը-
նավ չէին զիջում կանոնավոր զորքերին իրենց քաջութեամբ,
համառութեամբ, դեպի թշնամին տածած ատելութեամբ: Ահա
համառութեամբ, դեպի թշնամին հետևազորին հրամայում է
բնորոշ մի դեպք: Վիտեբսկեյն հետևազորին հրամայում է
նահանջել, ու տեղի է ունենում հետևյալը. «Կանոնավոր զոր-
քերն իսկույն հնազանդվեցին, բայց աշխարհագրորը ոչ մի
կերպ չէր ուզում համաձայնվել նահանջին: Մեզ այստեղ բե-
րել են կռիվը,— ասում էին աշխարհագրականները,— և ոչ
թե նահանջելու: Սույն հրամանը կրկնեց երկրորդ և նույնիսկ
երրորդ ագլուտանտը, բայց աշխարհագրորն այդ լսել անգամ

չէր ուղում: Քաջ աշխարհադորականները, որ դեռ անծանոթ էին ղինյորական ստորագասության, վառվում էին միայն մի ցանկութեամբ—Չարդել սիդծ թշնամուն, որ եկել էր ավերելու նրանց սիրած հայրենիքը»:

Բանն այնտեղ հասավ, որ հյուսիսային Փրոնտի հրամանատար Վիտդենշտեյն ինքը ստիպված եղավ ժամանել՝ աշխարհադորականներին համոզելու: Հո չէին կրակելու նրանց վրա: Դիմենք նորից ականատեսի պատմածին. «Վերջապես, ժամանում է նաև ինքը դեներալը: «Տղերք,— ասում է նա,— միայն դուք չեք կռվելու թշնամու դեմ: Երեկ մենք նրանք ընդմ էինք, իսկ այսօր նահանջելու հերթն լին է: Ձեր հետևում թնդանոթներ են դրված. եթէ դուք հեռ չգնաք, անկարելի կլինի կրակել»:

«Իմացիր, հայր,— պատասխանեցին նրանք,— թող մենք խանդարենք թնդանոթներին, բայց թշնամուց չենք նահանջի»:

Վերջի վերջո Վիտդենշտեյնը մի կերպ համոզեց նրանց: Աշխարհադորականները «սրտնեղելով հեռ քաշվեցին, ասելով դեներալին. դու հրամայեցիր, դու էլ պատասխան տուր»:

Հրետանային կրակից հեռ աշխարհադորականները հարձակվեցին Փրանտիացիների վրա: «Աշխարհադորականներն, ինչպես դայրացած առյուծներ, նետվեցին թշնամիներին վրա և նրանց խոշոր կորուստներ պատճառեցին»:

Հետագայում մենք կտեսնենք, որ Կուտուզովի բանակին միացած աշխարհադորականները ոչնչով չէին ղիջում այն աշխարհադորականներին, որոնք ղանվում էին Վիտդենշտեյնի տրամադրության տակ: Դրանք դյուղացիներ էին, շատերն արդեն հատկավոր, հենց մի քանի օր առաջ արորի մահը թողած, տրեխներով կամ պատառոտված կռիվներով, համադրեստի ու շինելի փոխարեն դեղձկական վերնահագուստով, սրերի ու հրացանների փոխարեն տեղերով, նախանձում էին կանոնավոր դորամասերի ղինյորներին, որոնք կռվով էին ղնում սպառազինված, բայց այդ դյուղացիները նրանցից պակաս չէին կռվում:

Պատերազմի առաջին, Ռուսաստանի համար ամենածանր և փտանդավոր շրջանում պրուսական դեներալները, որ Ռուսաստան էին ներխուժել մարշալ Մակդոնալդի ընդհանուր հրամանատարության տակ և նրա կորպուսի կազմում, Նապոլեոնի կամքը կատարում էին այսպես արած՝ ոչ թե անհից, այլ

խղճից դուրված: Նրանք, ինչպես և իրենց բարեպաշտ միապետ Ֆրիդրիխ-Վիլհելմ III-ն ինքը, հույս ունեին Նապոլեոնից իբր պարզե ստանալ ռուսական տերիտորիայի մի զգալի մասը,— այն է՝ ամբողջ Մերձբալթյան երկիրը: Ռուսներն սկզբում կարծում էին, թե պրուսացիները պատերազմին մասնակցում են միայն ձեռնադուրս, որպեսզի չլքանացնեն Նապոլեոնին, թե նրանք իսկական կռիվ չեն մղի ռուսների դեմ,— բայց ռուսները զարմանքով հասկացան, որ սխալվել են: Պրուսացիները ոչ միայն հանդիստ խղճով սպանում էին ռուս զինվորներին, այլև, ինչպես արտահայտվել է մի ականատես, «ավլում», թալանում էին այն ամբողջ երկրամասը, որ նրանք դրավել էին 1812 թվին: Հետագայում, հենց որ Նապոլեոնը հեռացավ Ռուսաստանից, պրուսացիներն անհապաղ թռանալուցան ռուսների կողմը: Հուլիսի 30-ին (18) Վիտենշտեյնը հասցանքով Ռուսաստանից, որպեսզի չմարչալ Ուդինոյի հետ ընդհարվելիս և նրան հետ չսլորանց դեպի Պոլոցկ:

Նապոլեոնն արդեն հյուսիսային թևում տեղի ունեցած բոլոր դեպքերի մասին իմացավ, երբ արդեն դռնվում էր Վիտենշտեյնը: Նա շատ դժգոհ էր այդ բոլորից: Նա, իհարկե, իմացավ, որ Վիտենշտեյնը մարչալ Ուդինոյի դեմ ոչ մի իսկական հաղթանակ չի տարել, որի մասին խոսում էին Պետերբուրգում և Մոսկվայում, բայց նա ստիպված էր հաշտվել այն հանգամանքի հետ, որ հյուսիսում դործող նրա երկու մարչալներն էլ, Ուդինոն և Մադդենալդեն իրեն ոչ մի էական օգնություն չեն հասցնի և որ ռուսները կարող են չվախենալ Պետերբուրգի նկատմամբ լուրջ զինվածությանից:

Իր հերթին Պետերբուրգում էլ միանգամայն պարզ եղավ, որ վճռական դործողությունները բոլորովում են ոչ թե Պետերբուրգի, այլ Մոսկվայի ճանապարհներում, դուրս և Մոսկվայի ճանապարհներում:

Բարկլայն ու Բաղրամյանը, ներգրավված թշնամուց, դեպի Վիտենշտեյն ու Մոսկվայի էին նահանջում սարսափելի շոգին, նրանց զորքերը կիսաքաղց էին, ամբողջ օրերով թարմ ջրից զուրկ:

Վիենայից ռուսական զորքերի հեռանալուց ընդամենը մեկ ժամ անց այնտեղ ժամանեց Նապոլեոնն իր ավանգարդով: Այստեղ նա մնաց հունիսի 28-ից մինչև հուլիսի 16-ը:

Հուլիսի հենց առաջին օրերից Նապոլեոնն սկսեց իրեն հա-

չիլ տալ, թե ինչպիսի անհարմարություններ ունի կոնստինեն-
տալ կլիման՝ Ռուսաստանի ճանապարհադրիկության պայման-
ներում: Սարսափելի շողին հաջորդեցին հորդ անձրևները, ո-
րոնք զորքերի տեղափոխությունների ժամանակ դժվարու-
թյուններ էին ստեղծում: Արշավանքի հենց առաջին օրերից
հիվանդությունները հնձում էին Նապոլեոնի բանակի շարքերը:

Բայց ամենից վատը, նույնիսկ ամենաուժեղ շողից էլ վա-
տը մարդկանց ու ձիերի պարենավորման անսպասելի, չափա-
դանց ծանր դրությունն էր: Բանակի շարժման արագությու-
նը, բանակ, որի հետևից չէր կարողանում հասնել դուժակը,
սով առաջացրեց: Զուրկ լինելով պարենի ու կերի կանոնավոր
մատակարարումից՝ զինվորները սկսեցին թալանել բնակչու-
թյանը, երբ դեռ գնում էին «դաշնակցի» երկրով, Պրուսիա-
յով: Սակայն նապոլեոնյան պատերազմներից ոչ մեկի ժա-
մանակ, բացառությամբ 1796—1797 թվականների իտալական
կամպանիայից և 1798—1799 թվականների Նեդերլանդների նվաճու-
մից, — Նապոլեոնի զորքերն այնպես անպատկառորեն չէին
թալանում և դրաված վայրն այնպես չէին ավերում, ինչ-
պես 1812 թվին Ռուսաստանում:

Հուլիսի 2-ին, ռուսական սահմանները ներխուժելուց ութն
օր հետո Նապոլեոնն ստորագրեց բանակին ուղղված մի խիստ
հրաման. ձերբակալել այն բոլոր զինվորներին, որոնք բռնվում
են թալանի ու կողոպուտի մեջ, նրանց տալ ռազմա-դաշտային
դատի և մեղադրական դատավճռի դեպքում անհապաղ դնա-
կահարել: Բայց նույնիսկ հաճախակի դեպահահարություննե-
րը չխանդարեցին կողոպուտները շարունակելուն: Մեծ բանա-
կում եղած գիսցիպլինան բոլորովին նման չէր նապոլեոնյան
զորքերի մշտական գիսցիպլինային:

Առհասարակ բանակն այն չէր, ինչ որ եղել էր առաջ:
Նրանում չկային առաջվա կամավորները, նա նույնիսկ զուտ
Փրանսիական չէր, այլ բազմազգ—համաեվրոպական: Ավադա-
դույն սպաներն արշավանքի հենց առաջին օրերից շատ փոր-
ձանքներ նախատեսեցին և շարունակ անհանդստությամբ
կրկնում էին, թե բանակն արան-թալանով է դադարում, մա-
րադյոքություն է անում, կան բազմաթիվ հետ մնացողներ,
դասավորված և դործը կարող է խիստ տխուր վերջանալ:

Գոնալելով վիլնոյում՝ Նապոլեոնը պետք է մտածեր ու
ձեռնարկեր երկու գործողություն՝ Բազրատոնի դեմ, որը

2-րդ բանակով նահանջում էր դեպի Նեավիթ, և Ռաբկլայի դեմ, որն արդեն հունիսի 26-ից էր 1-ին բանակով Վերնայից դուրս էր եկել Դրիսսայի ճամբարի ուղղությամբ:

Ամենայն դժվարն էր Բաղրատիոնի դրությունը, և Նապո-
լեոնն խելույն հրամայեց նրա դեմ մեծ ուժեր հանել: Նրա
հրամանով մարչալ Դալուան 50 հազարանոց զորքով Վիննայից
դուրս եկավ Բաղրատիոնին հետապնդելու: Դալուան Օչմյա-
նիի վրայով դնում էր դեպի Մինսկ, չուրջանցելով Բաղրա-
տիոնին և կտրելով նրա նահանջի ճանապարհը: Նապոլեոնն
էր եղբորը՝ վեստֆալյան թագավոր Ժերոմ՝ Բոնապարտին, ո-
րը մոտ 16 հազար զորք ուներ, հրամայեց դնալ դեպի Նո-
վոդրուդոկ, կանխելով Բաղրատիոնի չարժուժը դեպի այն-
տեղ, Բաղրատիոնի, որը հունիսի 29-ին դեռ Նեմանի մոտ էր:
Բաղրատիոնին սպառնում էր կապիտուլյացիա կամ լիակատար
ոչնչացում:

Բաղրատիոնի դրուժյունը հուսահատական էր թվում: Շա-
ուները ընդամենը մոտ 40 հազար զորք, որովհետև հեռապնդու-
մը սկսվելու ժամանակ երկու դիվիզիա հետ էին չարավել
դեպի Վոլին: Նրան հեռապնդում էին մարշալ Դալուն 70 հա-
զար հոգուց բաղկացած զորքով, Պոնյատովսկին՝ 35 հազար,
վեստֆալյան թաղավոր ժեքոմը՝ 16 հազար, Գրուչան՝ 7 հա-
զար և Լաուսեր-Մորուերը՝ 8 հազար հոգուց բաղկացած զոր-
քով: Այնուամենայնիվ Բաղրատիոնը հեռացավ...

Նապոլեոնը թուեղ բարկացավ իր ապաշնորհ եղբոր վրա, որը չէր կարողացել հասնել ու ջարդել Բագրատիոնին:

Հուլիսի 8-ին Դավուեն գրավեց Մինսկը և այնտեղից գնաց
դեպի Բերեզինա: Բազմաթիվ զարգայլ կրիտիկական դրու-
թյան մեջ ընկավ: Խիստ ձգված իր բանակով նա նահանջում
էր նեղ ճանապարհներով, ճահիճների արանքով: Երբ Նապո-
լեոնն իմացավ Բազմաթիւնի բանակի դրության մասին, բա-
ցականչեց. «Նրանք իմ ձեռքումն են»: Այդ մոմենտին նա ըստ
Էրեւելյիին մոռացել էր, որ Հենց ինքը Բազմաթիւնին անվա-
նում էր ռուսական բանակի լավագույն գեներալ: Դավուեն
Մինսկում անցկացրեց չորս օր: Բազմաթիւնը շնորհալի ման-
յովրով դարձավ դեպի հարավ, Բոբրույսկ քաղաքի մոտ Հո-
սով Բերեզինային, այնտեղ անցավ Բերեզինան ու գնաց դե-
պի Դնեպր: Նա ուզում էր Դնեպրն անցնել Մոզելյովի մոտ,
բայց իմանալով, որ Մոզելյովն արդեն զրավված է Դավուեն

գործերով, որոնք դուրս էին եկել Մինսկից, հետ քաշվեց
կռվով, որի ժամանակ ոչնչացրեց Փրանսիացիները թեթե հե-
ծեղագործի մի ամբողջ դուռը: Այնուհետև Ռաեսկուն հրամա-
յնելով Դաշկովիկա ավանի մոտ կանգնեցնել Դավուր ուժերը՝
ինքը շարժվեց դեպի Նովիյ Բիխով, ուր և հուլիսի 25-ին ան-
ցավ Դնեպրը: Նրա գործերի մյուս մասը Դնեպրն անցավ
Ստարի Բիխովի մոտ:

Հուլիսի 23-ին Ռաեսկին Դաշկովիկայի մոտ մեկ կորպու-
սով տասը ժամվա ընթացքում համառ կռիվ մղեց իրեն նեղող
Դավուր և Մորայեի կորպուսները հինգ զինվորիայի դեմ:
Երբ այդ ծանր ճակատամարտում, զնդակները կարկուտի տակ
մուսկետավորների մեջ մի ակնթարթում չփոթվեցուն առա-
ջացավ, Ռաեսկին, ինչպես այն ժամանակ խոսում ու գրում
էին, բռնեց իր երկու որդիները ձեռներեց և նրանք երեքով
դեպի առաջ նետվեցին՝ իրենց հետևից տանելով զինվորնե-
րին: Ռաեսկու գործը ընավ Հէք զիջում իր հրամանատարին:
Ռաեսկին, որ զովասանքների նկատմամբ ժխտ էր, ահա թի
ճակատամարտից հետո ինչ հաղորդեց իր պետ Բադրատիոնին.
«Ես ինքս տեսա, որ շատ սպաներ և զինվորներ, երկուսական
վերք ստանալով և կապելով դրանք, վերադառնում էին կռվե-
լու, ինչպես խնձույքի կղնային: Անկարող եմ ինչպես հարկն
է գովել հրետանավորների քաջությունն ու ճարտարությունը.
բոլորն էլ հերոսներ էին»:

Դնեպրի ձախ ավում Բադրատիոնն արգեն դուրս էր եկել
Փրանսիացիները օղակից: Մարշալ Դավուն միայն մեկ օրից
հետո իմացավ, որ Բադրատիոնն անցել է Դնեպրը, և այդ
մասին անհապաղ հաղորդեց կայսրին: Նապոլեոնը խիստ
դժգոհ եղավ, որ Բադրատիոնն այդպես անապատելի կերպով
փրկվել է անխուսափելի թվացող ջախջախումից ու դերի ընկ-
նելուց կամ լիակատար ոչնչացումից:

Դնեպրից Բադրատիոնի անցնելու տեղեկության հետ դեռ-
թե միաժամանակ Նապոլեոնին հասավ նաև մի ուրիշ լուր.
պարզվեց, որ Բարկլայն իր ամբողջ զորքով հանկարծակի թո-
ղել է Դրլիսայի ամրացված ճամբարը և զնացել դեպի Վի-
տեբսկ:

Հերալդի, հենց որ որոշվեց թողնել Դրլիսայի ճամբարը,
Բարկլայն հուլիսի 14-ին դուրս եկավ Դրլիսայից և հուլիսի
18-ին ժամանեց Պոլոցկ: Նա որոշեց այստեղից զնալ դեպի

Վիտերբսկ, որպեսզի կանխի այդ քաղաքի դրավումը Նապոլեոնի կողմից: Բարկլայն իր Ա-ին բանակով Վիտերբսկ հասավ հուլիսի 23-ին, դրավեց քաղաքը և ճամբար կազմեց: Նա մեռած էր այստեղ սպասել Բաղբատիոնին, և, ինչպես նա ասում էր, ճակատամարտի բռնվել դեպի Վիտերբսկ չարժվող Մեծ բանակի հետ: Ֆրանսիացիներին առաջխաղացումը կանգնեցնելու համար Բարկլայն նրանց դեմ ուղարկեց 4-րդ հետեմակային կորպուսը՝ կոմս Օստերման-Տոլստոյի առաջնորդութամբ:

Մոտենալով Օստրովնին՝ Օստերման-Տոլստոյն իր առաջ տեսավ հեծելազորի մի խիտ դանդաժած. այդ ինքը Մյուլբաուն էր, որն իր հեծելազորով դնում էր Մեծ բանակի առջևից: Սկսվեց համառ կռիվ, որը փոփոխակի ճակատամարտերով տևեց հուլիսի 25-ի ամբողջ օրը: Իմանալով Օստրովնի մոտ տեղի ունեցող կռիվի մասին՝ Բարկլայն չտապեց Կոնովնիցինի հրամանատարութամբ օժանդակ ուժ ուղարկել, և հուլիսի 26-ին կռիվը վերակսվեց կրկնակի թափով, այս անգամ արդեն Օստրովնուց Տ վերստ հեռավորութամբ:

Կոնովնիցինը, ինչպես և Օստերմանը, պետք է միայն կանդնեցներ Ֆրանսիացիներին, որպեսզի Բաղբատիոնին թափանակ տար մոտենալու Վիտերբսկին, ուր Բարկլայն ուղարկ էր զլխավոր ճակատամարտի բռնվել: Այդ ամենածանր դեպքը—կանդնեցնել թշնամու ճնշող ուժերը, լինել կենդանի առաջակալ, որ վաղօրոք մատնված է ոչնչացման, առանց ունենալու հաղթանակի ամենաչնչին շահեր, — Պյոտր Պետրոնիսի Կոնովնիցինը և նրա ղեկավորները 1812 թվի հուլիսի 26-ի արյունոտ օրը կատարեցին նույնպես հաջող, ինչպես նախորդ օրն Օստերմանը և ինչպես մի քանի օրից հետո արդեն Սմոլենսկի ճանապարհներում կատարեցին Նեվերովսկին և Ռաբնակին: Կոնովնիցինի մասին նրա հետ ծառայողներն ասում չեն: Կոնովնիցինի մասին նրա հետ ծառայողներն ասում էին, որ նա արտասովոր բարի մարդ էր: Ռուսական բանակը մինչև Մոսկվա հասնաձևելիս նա իր ղեկավորներին թույլ էր տալիս իրենց հետ տանել այն բնակիչներին, որոնք ցանկանում էին մեկնել իրենց ունեցվածքով, այնպես որ, նրա ղեկերը հեռվից նմանվում էին ինչ-որ շարժվող տաբուրների: Զինվորներին հետո նա ընկերաբար էր վարվում:

Օստերմանի և Կոնովնիցինի ջոկատները, իրենց գլխինեղով ծածկելով Օստրովնից մինչև Լուչոսա տանող ճանապարհը,

կատարեցին իրենց դործը. նրանք Բարկլային և Բադրատիոնին հնարավորութիւն տվին երկու ամբողջ օր շահել վերջնական որոշումներ ընդունելու համար:

Հուլիսի 26-ի ամբողջ օրը Բարկլայը տեղեկութիւններ էր սպասում նաև Կոնովնիցինից— թե արդյոք որքա՞ն ժամանակ կրավականանան ուժերը՝ կանդենցնելու վրա տվող Ֆրանսիացիներին, և Բադրատիոնից, — թե արդյոք հույս կա՞, որ նա, ճեղքելով թշնամու օղակը, Մոզելյովի վրայով անցնի Վիտերսի: Գիշերը պատասխան բերեց այդ երկու հարցին, — Հուլիսի 26-ի ուշ երեկոյան Օստերմանի և Կոնովնիցինի հետ եկան այն ղինլորներն ու սպաները, որոնք փրկվել էին Օստրովնի մոտ և դեպի Վիտերսի նահանջելիս իրենց ջոկատների սխտեմատիկ կոտորածի ժամանակ: Իսկ Հուլիսի 27-ի լուսաբացին մոտ Բարկլայի ճամբարը ժամանեց Բադրատիոնի սուրհանդակը. Բադրատիոնը հաղորդում էր, որ իրեն չի հաջողվել անցնել Մոզելյովի վրայով և նա խմացել է, որ մարշալ Դավուն սկսում է շարժվել դեպի Մոզլենակ:

Բադրատիոնից լուր ստանալուց դեռ մի քանի ժամ առաջ Բարկլային ղեկուցեցին, որ Վիտերսիի մոտ հանկարծակի երեւացել է ինքը Նապոլեոնն իր հին դավադրիայով: Ռուսական ճամբարից երեկոյան կարելի էր տեսնել Ֆրանսիական դավադրիայի դրամած վայրում, անտառի եզրին, Վիտերսիի մոտ վառված լույսերը: Հարկավոր էր որևէ որոշում ընդունել:

Նապոլեոնի հետ ճակատամարտի բռնվել, այն էլ առանց Բադրատիոնի, այդ նշանակում էր ուղղակի տանուլ տալ ճակատամարտը և, հետևաբար, ոչնչացման ենթարկել ռուսական բանակը: Բարկլայը որոշեց Վիտերսիից հեռանալ դեպի Մոզլենակ, Վիտերսիից 5 վերստի վրա թողնելով միայն առաջակալ, — 3 հազարանոց հետևազորը, 4 հազարանոց հեծելազոր, 40 թնդանոթ, — կոմս Պալենի ընդհանուր հրամանատարութեան տակ: Այս առաջակալը պետք է թեկուղ կարճ ժամանակով կանդենցներ Նապոլեոնին, և թե սա ցանկանար անհաղաղ ընթանալ Վիտերսիից Մոզլենակ տանող ճանապարհով:

Հուլիսի 27-ի գիշերը ռուսական բանակին անադմուկ, առանց լույսեր վառելու դուրս եկավ ճամբարից և հեռացավ:

Նապոլեոնն այնքան էր ուղում Վիտերսիի մոտ գլխավոր ճակատամարտի բռնվել, որ դեռ երթի ժամանակ, Վիտերսիի ճանապարհին Մյուլբատին և փոխարքա Եվդենին հրամայում

էր արդեւք չլինել ուսական բանակի առանձին ջոկատները և ուսական դիւտավոր ուժերը միացմանը:

Հուլիսի 25-ին Ֆրանսիացիները չարժւեցին դեպի Վիտերակ: Սարսափելի չոգը չարունակչում էր, զինվորները դընում էին «վառվող փոշու մեջ», Մեծ բանակի վետերանները վերհիշում էին Նեպոլեոնը և Սիբիայի անապատները:

26-ի ուշ դիշերով Ֆրանսիական առաջավոր էշելոնները ժամանեցին անոռուի եզրը, որ կէց է Վիտերակի հարթավայրին: Գիշերը կայսրը դիտում էր քաղաքի շուրջը և քաղաքում վառված բազմաթիւ լույսերը—այնտեղ էր դրոշմում ուսական բանակը:

Ինչ է անելու Բարկլայը: Արդյոք նա կռվե՞ր է Վիտերակի մոտ: Արդյոք վաղը կամ վաղը չէ մյուս օրը տեղի կունենա՞ մի նոր Աուստերլից, որն իր նշանակութեամբ կհասնէ մայնի ալպտրիական Աուստերլիցը, Նապոլեոնի 1805 թվի հաղթանակը հենց այս ուսաների դեմ:

Եկալ Հուլիսի 27-ի առավոտը: Քաղաքի շուրջը և քաղաքում չարժումը չէր դադարում: Ռուսները դրոշ չտվին Նապոլեոնի վրա, իսկ Նապոլեոնն էլ իր հերթին որոշեց հարձակվել Հուլիսի ոչ թե 27-ին, այլ 28-ին: Երբ բանակը պատկում էր քնելու, կայսրը հրաժեշտ տալով Մյուլբաուին, առաց որ վաղը առավոտյան ժամը հնգին նա կսկսի դիւտավոր ճակատամարտը: Ռուսական բանակի գրաված վայրում վառվում էին լույսերն ինչպես նախընթաց դիշերը: Նապոլեոնը դնաց իր վրանը: Մյուլբաուը մեկնեց իր հեծելազորի ալանադոստերը, որ ամենից մոտիկ էին ուսաների գրաված վայրին:

Լուսաբացին Նապոլեոնի մոտ եկալ հանձնատարը և Մյուլբաուից լուր բերեց, թե Բարկլայը դիշերը հեռացել է:

Նապոլեոնը հաստատ դիտեր, որ անհրաժեշտ է, անդ չառնելով Վիտերակում, ընկնել Բարկլայի և դեպի Սմոլենսկի դնացող Բադրաուինի հետևից և թույլ չտալ, որ նրանք միահանգեցնեն իրենց և որ մնացել է ընդամենը 5—6 օր, որոնց նա Սմոլենսկում և որ մնացել է ընդամենը 5—6 օր, որոնց նա Սմոլենսկում կարելի է այդ անել: «Բայց չոգն այնքան սաստիկ էր և բանակն այնքան մեծ էր, որ կայսրը որոշեց նրան մի քանի օր հանգիստ տալ»:

Կայսրը Վիտերակում մնաց մեկ, երկու, երեք, չորս օր: Շքախումբը և դվարդիան տեսնում էին, որ նա ինչ-որ բանից ջղայնացած և դժգոհ է: Պատերազմն այդ տարում և ոչ թե

դալիք տարում վերջացնելու համար միտքն անհաղթահարելիորեն իշխում էր նրա հոգու վրա, իսկ այդ տարում այն ժարելի էր վերջացնել միայն մի եղանակով, — ուռուակն բանակը ջախջախելու միջոցով:

Նշանակում է, պետք է հասնել Բարկլայի հետեից և, եթե դեռ հնարավոր է, նրան ջարդել մինչև Բալթաստինին հանդիպելը: Եթե նրանք արդեն հանդիպել են, — ջարդել երկուսին էլ:

Անհամար ու հրատապ հոգսերի մեջ, որ վերաբերում էին նախ՝ բանակի պարենավորման, երկրորդ՝ դեպի Սմոլենսկ ղնացող Բաղրաստինի հետապնդումը կաղճակեցվելուն, երրորդ՝ Լիտվայի քաղաքական կառուցվածքին, չորրորդ՝ հեռավոր իսպանիայում մղվող պատերազմին, — ուր զորքերն ալեկի ու ալեկի վատ էին ղնում, — հինգերորդ՝ Բրեմենում և Հոլանդիայում եղած կայսերական տեղավորություններին, — այդ բոլոր հոգսերի մեջ կայսեր առաջ շարունակ ծառացած էր և ամեն ինչ ստվերում էր կենտրոնական մի հարց, — արդյոք պատրաստվե՞լ այստեղ ձմեռելու, թե՞ առաջ դնալ:

Օգոստոսի առաջին օրերին Նապոլեոնը մարշալներին առաջ, թե դնալու է Սմոլենսկի վրա: Մյուսրոսը միանգամայն կողմնակից էր ուռուակն բանակին հետապնդելը շարունակելուն: Բայց Բերտյեն, Դյուրոիկը, Դարյուն, Կոլենկուրը վճռականապես դեմ էին նոր հարձակման: Հաղթադեպ էր լինում, որ նրանք համարձակվեին այդպես որոշակի և համառորեն չհամաձայնվել իրենց տիրակալի հետ: Գնեկրալ և օբեր-հոֆմարշալ Դյուրոիկը քաղաքավարի, բայց հաստատապես պնդում էլ, որ ուռուները պարզապես Մեծ բանակը քաշում են երկրի խորքը, որ այստեղ նրան կործանում է սպասում: Բերտյեն պաշտպանում էր Դյուրոիկին: Նրանք երկուսն էլ կայսրին առում էին ձիերի դարհուրեցուցիչ կոտորածի, կերի բացակայության, բանակի պարենավորումը կաղճակուժվելու, աղքատ, ուռուական զորքերի կողմից դիտավորյալ կերպով ավերված երկրի, վերջինիս անծայրածիր տարածությունների մասին... Դյուրոիկը համառորեն մատնացույց էր անում այն փաստի չարագուշակ նշանակութունը, որ Ալեքսանդր կայսրը հաշտություն չի խնդրում: Նապոլեոնը պատասխանեց, թե ինքը հաշի է առնում բոլոր վտանդները, բայց 1812 թվի արշավանքը կվերջացնի Սմոլենսկում:

Պետական քարտուղարը, Մեծ բանակի ղեկավար ինտեն-
դանտ կոմս Դարյուհն, որ բոլորից ավելի լավ գիտեր մատա-
կարարման գործերը, ոչ միայն հաստատեց Բերայեի ու Դյու-
րոկի հայտարարութիւնները, այլև արտահայտեց այն ամե-
նը, ինչ որ կար եւ՝ Դյուրոկի, եւ՝ Բերայեի, եւ՝ Կոլենկուրի հո-
դուժ եւ ինչ որ նրանք չէին համարձակուիմ պարզ ասել: Ին-
չի՞ համար է մղվում այս ծանր եւ հեռավոր պատերազմը:
«Ոչ միայն մեր զորքերը, արքա, այլև մենք ինքներս էլ չենք
հասկանում այս պատերազմի ոչ նպատակը, ոչ էլ անհրաժեշ-
տութիւնը»:

Հետեյալ օրերին կայսրը վերջնական հրաման չէր տալիս
ոչ ամբողջ բանակը Վիտերբիկից դուրս դալու, ոչ էլ Վի-
տերբիկում երկար մնալու պատրաստութեան մասին: Արդէն
զորքը վճռած լինելով՝ կայսրը հապաղում էր եւ կարծես առի-
թի էր սպասում:

Սուիթը ներկայացաւ: Օգոստոսի 10-ին կայսրին հաղոր-
դեցին, որ գեներալ Սերաստիանին ռուսական հեծելազորի
կողմից հանկարծակի հարձակման է ենթարկվել եւ կորուստ-
ներ է ունեցել: Դեպքը տեղի էր ունեցել Ինկովի մոտ: Հարու-
թիւն առաւ այն հուլիսը, թե ռուսները կանգ են առել Դնեպ-
րի մերձակայքում, դեռի ձախ արին:

Նապոլեոնն անհապաղ հրաման տվեց բանակին. դուրս
գալ Վիտերբիկից եւ դնալ ռուսների դեմ:

Օգոստոսի 12-ին Նապոլեոնի բանակի առաջին զորամասե-
րը դուրս եկան Վիտերբիկից:

Նվաճողը մտնում էր կենտրոնական Ռուսաստան: Մոռ-
լենսկը, որ անցած դարերում շատ անգամ էր կանգնեցրել
Ռուսաստանի վրա գնացող թշնամիներին, հնադարյան այդ
քաղաքը, որ երկու հարյուր տարի իր պատերի տակ թշնամի
չէր տեսել, պատրաստվում էր հանդիպելու ամենաահաբեկու
թշնամուն, եւ նրա աշտարակներին ու պարիսպներին վիճակ-
ված էր վիչել այնպիսի հարվածներէ, որ նրանք դեռ երբեք
չէին զգացել:

Քողարկվելով անտառներում և իր մարչըռուտն ուռաներից թաքցնելու նպատակով բարդ մանյովրներ կատարելով՝ Նապոլեոնն ուզում էր արագ չվերթերով դնայ դեպի Սմոլենսկ։ Նեվերովսկու փոքր ջոկատը համառ ղեմադրությամբ դանդաղեցնում էր նրա ընթացքը։

Դուրս մղվելով թե լյադա ավանից և թե Կրասնից, հերոսաբար պաշտպանվելով Ֆրանսիական աւժերից, որոնք առնվազն մի հինգ անգամ ավելի էին իր ջոկատից, — Նեվերովսկին նահանջում էր դեպի Սմոլենսկ։ Ֆրանսիայի ակադեմիկոսը (կոմս Սեդյուրը) խոսում է Նեվերովսկու «առյուծային նահանջի» մասին։ Նեվերովսկին ղեկավորների ուսուցման համար այսպիսի ձև էր գործադրում. կռվից առաջ նա ինքը ղեկավորներին տանում էր դերձը նայելու և բացատրում էր առաջիկա գործողությունների իմաստը։ Նեվերովսկու ղեկավորներն այդ սպանիչ նահանջի ժամանակ կռվում էին վտանգը լիովին արհամարհելով, նահանջի յուրաքանչյուր քայլափոքինց ձիերով կարծես թաղված լինեին դեռնի մեջ... Մեր մի շարք առաջին գրոհներն անհաջող վերջացան... ուռաները (նապի մեղ և մեղ հետ էին մղում հրացանային կրակով», — այսպես էին գրում Ֆրանսիացիներն այդ հերոսական պաշտպանության մասին։

Իմանալով, որ Սմոլենսկը չուրջանցելու համար Նապոլեոնի կողմից մեծ ուժեր են ուղարկված Սմոլենսկից դեպի արևելք, հյուսիս-արևելք ու դեպի Դորոգոբուժ, Բադերաուրոնն անհապաղ շարժվեց դեպի այնտեղ, որպեսզի դրավի Դորոգոբուժը և թշնամուն հնարավորություն չտա կտրելու Մոսկվայի մեծ ճանապարհը։ Նա քիչ զորք ուներ, բայց գլխավորը, որ նրան անհանգստացնում էր, դա այն համոզմունքն էր, թե Բարկլայը կհանձնի Սմոլենսկը։

Բադերաուրոնը Ռաեևսկու կորպուսին հրամայեց դուրս գալ Սմոլենսկից և դնալ հարձակվող Ֆրանսիացիներին դեմ։ Հենց այդ ժամանակ էլ իմացան, որ Կրասնիում օգոստոսի 15-ին Ֆրանսիական բանակը հարձակվել է Նեվերովսկու կորպուսի

վրա, ջարդել է նրան, կրասնից հետ է չարտել: Նեվերովսկին
կռվով նահանջելով, Բազրատիոնին զենույց ուղարկեց, որով
անհապաղ օգնություն էր խնդրում: Բայց օգնությունն ու-
շացավ:

Նեվերովսկու ջոկատի մնացորդները միացան Ռաեսկու 13
հազարանոց ջոկատին:

Գիշերը Ռաեսկին և Նեվերովսկին հորիզոնում տեսան
խարույկների անվերջ մի դիծ. այդ լինքը Նապոլեոնն էր ամ-
բողջ բանակով տեղավորվել գիշերելու և պարզ էր, որ նա
ուղիղ ճանապարհով գնում էր դեպի Սմոլենսկ: Սակայն հաս-
տատ հայտնի է, որ արդյոք նա գիշերը մնալու էր այնտեղ,
թե՞ դուրս էր գալու ճամբարից և հարձակվելու քաղաքի
վրա:

Ռաեսկին ուներ ընդամենը 13 հազար մարդ, Նապոլեոնը
Սմոլենսկի վրա հարձակվելու մոմենտին ուներ մոտ 182 հա-
զար: Ռաեսկին ոչ հրաման, ոչ էլ լիազորություն էր ստացել
Սմոլենսկը պաշտպանելու: Ռուսական բանակն արդեն սկսել
էր իր հետադարձահանջը Սմոլենսկից դեպի Մոսկվա: Ռաեսկին
որոշեց պաշտպանվել:

Օգոստոսի 16-ի առավոտյան Նապոլեոնն արդեն կանգնած
էր Սմոլենսկի պարիսպների տակ: Այդ ժամանակ Ռաեսկին
խափացավ, որ Բազրատիոնն շտապում է օգնության գալ: Երե-
կոյան դեմ Բազրատիոնն արդեն մոտիկ էր Սմոլենսկին:
Բարկլայը նույնպես սկսեց շարժվել դեպի այնտեղ:

Օգոստոսի 16-ի առավոտյան ժամը 6-ին Նապոլեոնն սկսեց
ամրակոծել Սմոլենսկը և շուտով տեղի ունեցավ առաջին դրո-
հը: Քաղաքը պաշտպանվում էր առաջին գծում գտնվող
Ռաեսկու դիվիզիայով: Ճակատամարտը տեղի էր ունենում
ամբողջ օրը, մերթ մեղմանալով և մերթ ուժեղանալով: Բայց
օգոստոսի 16-ի ամբողջ օրը Նապոլեոնն իրոք ջանքեր էր թա-
փում տիրանալու Սմոլենսկին: Վրա հասավ գիշերը: Երկու
կողմերն էլ պատրաստվում էին նոր, մահացու գոտեմարտի:
Գիշերը Բարկլայի հրամանով Ռաեսկու կորպուսը, որ հսկա-
յական կորուստներ էր ունեցել, փոխարինվեց Դոխտուբովի
կորպուսով: Օգոստոսի 17-ի առավոտյան ժամը չորսին Սմո-
լենսկի պարիսպների տակ վերսկսվեց ճակատամարտը և գրե-
թե անընդհատ հրետանային մարտը տևեց 13 ժամ, մինչև
նույն օգոստոսի 17-ի երեկոյան ժամը հինգը: Երեկոյան ժամը

հնգին Սմոլենսկի ամբողջ «Փորշտադեր» բոցերի մեջ էր։ Սկսեցին բռնելիւ քաղաքի առանձին մասերը։ Սարսափելի թնդանոթաձուլթյունից հետո, որ ծառայում էր իբրեւ հարձակման նախապատրաստություն, դրոհները հաջորդում էին միմյանց և ամեն անգամ ուսուսկան զորքերը հետ էին մղում այդ կատաղի դրոհները։ Վրա հասալ օգոստոսի 17-ից լույս 18-ի դիշերը։ Սյդ դիշեր թնդանոթաձուլթյունն ու հրդեհներն ուժեղացան։ Կես դիշերին հանկարծ ուսուսկան թնդանոթները լուցին և ապա Փրանսիացիները լուցին չլաված ուժ ունեցող սարսափելի պայթյուններ։ այդ Բարկլայն էր հրաման տվել բանակին՝ պայթեցնել վառուղի պահեստները և դուրս դալ քաղաքից։ Սմոլենսկի մոտ զորքերը կոխում էին մեծ օղևորությամբ և այն պահին, երբ հրաման եկալ քաղաքը թողնելու մասին, իրենց ամենեւին էլ հաղթված չէին համարում։ Բայց Բարկլայն տեսնում էր, որ Նապոլեոնը ձգտում է այստեղ, Սմոլենսկում ստիպել իրեն, վերջապես, գլխավոր ճակատամարտի բռնվել, մի նոր Աուստերլից սարքել Դնեպրի ափերին, վառվող Սմոլենսկի ավերակների մեջ, այն ժամանակ, երբ Բաղրատիոնը բանակի մի մասով դնում է դեպի Դորոգոբուժ և ակներևաբար անկարող կլինի ժամանակին հասնել ճակատամարտի դաշտը։

Օգոստոսի 18-ի լուսաբացին, երբ Նապոլեոնն արթնացալ Սմոլենսկի մոտ, մտածելով, որ այդ օրը, վերջապես, տեղի կունենա գլխավոր ճակատամարտը, և նրան ի պատասխան ցույց տվին անդրդնեպրյան հեռուները և Սմոլենսկից դեպի ալեկելք չարժվող զորքերի հոծ մասնանիքը, նա հասկացալ, որ Բարկլայն կրկին խուսափել է ճակատամարտից և որ Սմոլենսկը ուսուսկան հրամանատարության տեսակետով սոսի առաջակալ է, որը պետք է որոշ չափով կանդնեցնի հետապնդումը։ Ռուսական բանակը զարձալ դուրս պրծալ նրա ձեռքից։

Ռուսական զորքերը Սմոլենսկի մոտ այնպես էին կռվում, որ նույնիսկ Փրանսիական ամենաթուլի, ամենադորժարական ու չոր հաշվեամլություններում և հուշերում հեղինակները հաճախ և հաճախ զարմանալի էպիդոդներ են հիշատակում։ Սմոլենսկի այսպես կոչված արվարձանը վաղուց արդեն վառ բոցերի մեջ էր։ Սմոլենսկն արդեն թողնված էր ուսուսկան կողմից, և Փրանսիական զորքերը ծայրամասերի մի քա-

նի փողոցներից միաժամանակ մտան վառվող քաղաքը։ Ռուսական արյերգարողը դեններալ Կոնովնիցինի և դեղապետ Տոլի առաջնորդութեամբ քաջաբար պաշտպանվելով, չարունակում էր կանգնեցնել թշնամուն։ Ռուս հրաձիգները ցրվում էին այդ դիներում և մեն-մենակ խիում էին Փրանսիական հարձակվող խիտ շղթային ու Փրանսիական հրետանին սպաարկողներին։ Ռուսները ոչ մի կերպ չէին ուզում հեռանալ այնտեղից, թեև, իհարկե, դիտելն, որ անխուսափելի է մոտալուտ մահը։ «Այդ հրաձիգների մեջ իր քաջութեամբ ու տոկունութեամբ առանձնապես աչքի ընկավ մի ռուս եղբոր, որ տեղավորվել էր հենց մեր դիմաց, հենց դետալին, ուռենիների հետևում և որին մենք չէինք կարողանում լռեցնել ոչ նրա վրա կենտրոնացված հրացանային կրակով և ոչ էլ նույնիսկ հատկապես նրա վրա ուղղված թնդանոթի դործողութեամբ, որը ջարդեց բոլոր ծառերը, որոնց հետևից կրակում էր նա, բայց եղևիլ չէր լուծվում մինչև դիչեր, իսկ երբ հետևյալ օրը, անցնելով աջափը, մենք հետաքրքրութունից դրդված՝ դիտեցինք ռուս հրաձիգի հիշատակութեան արժանի այդ դիրքը, ջարդ ու փշուր եղած ծառերի կույտում տեսանք երեսնույնյոթ ընկած, ուռած թույ սպանված մեր հակառակորդին, եղբրական դուդի մի ենթասպայի, որ արևաբար ընկել էր այտեղ, իր դիրքում», — ասում է իր հուշերում Փրանսիական մի սպա։

Աղանատեսները զարմանքով մատնանշում էին, թե Միոլենակի մոտ զինվորներն այնպես էին կռիվ տենչում, որ պետերը ստիպված էին լինում նրանց սրով հետ քշել այնտեղից, ուր նրանք արդեն չափից դուրս ամփիտ կերպով էին իրենց մատնում Փրանսիական կարտեզներին ու սփնններին։ «Անկարելի է արտահայտել այն համառությունը, որով մեր զորքերը, մանավանդ հետևադորը, կռվում էին Միոլենակի մոտ՝ դրում է մի ժամանակակից։— Թեթև վերքերի վրա ուշադրություն չէին դարձնում այնքան ժամանակ, մինչև որ այդ վերքերը ստացողներն ընկնում էին ուժասպառ լինելուց և արյունահոսությունից...»։

Օգոստոսի 19-ի լուսաբացին մարշալ Նեյն անցավ դարձուղի ճանապարհով, մի կողմ թողնելով Միոլենակի վառվող արվարձանը, և դուրս եկավ քաղաքից։ Իմանալով, որ ռուսական կան բանակը նահանջում է Մոսկվայի ճանապարհով, Նեյն իսկույն ընկավ նրա հետևից։ Վալյուտինա սարի մոտ ռուսա-

կան արյերդարդը կանգնեցրեց Նեյին: Տեղի ունեցաւ ճակատամարտ, որը տեւեց օգոստոսի 19-ի ամբողջ օրը: Ռուսները մեծ համառութեամբ էին դիմադրում: Ֆրանսիացիները կորցրին 7 հազար մարդ, ռուսները—մոտ 6 հազար: Մուլթն ընկնելուն պես հրետանային հրաձգութիւնը դադարեց: Գիշերը Բարկլայը թողեց դիրքերը և հեռացաւ դեպի արևելք:

Վալյուտինայի մոտ եղած այդ ճակատարտում «ռուսների պարտութեան մեջ համարյա նույնքան փառք կար, որքան և մեր հաղթանակի մեջ»,— ասաց կայսեր մոտ գտնվող կոմս Սեդուրը: Հենց այդ էլ չարադուշակ նշան էր Նապոլեոնի համար: Մի՞թե ռուսները թեկուզ մեկ անգամ փախել էին այն ժամանակներից սկսած, երբ բռնկվել էր պատերազմը: Մի՞թե կարելի էր Կրասնիի մոտ եղած ճակատամարտը և Նեյի ընդմիջումը նախանշող ոչ թե հասարակութեան համար, այլ ընդրեն համարել Մեծ բանակի հաղթանակ: Մի՞թե որեէ տեղում, բացի Իսպանիայից, եղել էր այնպիսի դեպք, որ մարդիկ մենմենակ կրակելով պաշտպանվեին մի ամբողջ վաշտից և որ միայնակ, թշնամիներով շրջապատված զինվորի դեմ հարկավոր լինեին թնդանոթ ուղղել, ինչպես այդ արվեց ռուսական մի եզերի դեմ, Սմոլենսկում: Առհասարակ, Վալյուտինա լեռան մոտ եղած ճակատամարտը պետք է դիտել իբրև Փրանսիական բանակի ոչ թե հաղթանակ, այլ արվելի շուտ իբրև ստրատեգիական անհաջողութիւն:

Նապոլեոնը գեներալ Ժյունոյի կորպուսը վաղօրոք ուղարկել էր Սմոլենսկը շուրջանցելու, նպատակ ունենալով խոչընդոտել Բարկլայի ու Բադերտիոնի զորքերի միացումը Մոսկվայի ճանապարհին: Բայց Ժյունոն ուշացաւ. երբ նա ճահիճների արանքով դուրս եկավ Մոսկվայի ճանապարհը, ռուսական միացյալ բանակին արդեն դնում էր դեպի Դորոգոբուժ:

Օգոստոսի 24-ից լույս 25-ի դիշերը Նապոլեոնը դուրս եկավ Սմոլենսկից: Նա ռուսական բանակի հետեւից դնում էր արկելի ճանապարհով: Հեռվում, ճանապարհի երկու կողմերում երևում էին հրկիզվող դյուղերի ու դեղերի հրդեհների ցուրքերը:

Օգոստոսի 29-ի առավոտյան Նապոլեոնը վաղմայում էր: Ռուսական բանակն առանց կանգ առնելու դնում էր դեպի արևելք:

Օգոստոսի 17-ին (29) ռուսական բանակի զլխավոր հրահանար նշանակվեց Միխայիլ Իլարիոնովիչ Կուտուզովը։ Ոչ միայն երկու մայրաքաղաքի աղնվականության մեջ, այլև բանակում և նույնիսկ ղինվորների մասսայի մեջ վաղուց խոսում էին Կուտուզովի մասին։ Բայց բոլորը գիտեին, որ ցարը տանել չի կարողանում Կուտուզովին և Կուտուզովն էլ նրան պատասխանում է լիակատար փոխադարձությամբ։ Սակայն հիմա եկել էր այնպիսի մի մոմենտ, երբ ցարը ստիպված էր մի կողմ թողնել իր անձնական ղեագումները։

Կուտուզովը 67 տարեկան էր, երբ ստացավ այդ նշանակումը։ Դեռ ևս Սուվորովը նրան իր մյուս ղինակիցներից շատ ավելի բարձր էր դասում։ «Խորամանկ է, խորամանկ։ Խելացի է, խելացի»։ Նրան ոչ ոք չի խաբէր, — ասում էր Սուվորովը Կուտուզովի մասին։ Ստրատեգիական հսկայական ընդունակությունները, անձնական անընկճելի, հանդիստ քաջունությունը, ռազմական շատ մեծ փորձը, ամենալայն ժողովրդականությունը բնակչության միջև բանակում, — այս ամենը բոլորովին բացառիկ տեղ էր տալիս ծեր գեներալին։

Կուտուզովը հաշվի էր առնում այն, որ ռուս զյուղացին ավելի շուտ կվառի իր հացը, իր խոտը և իր բնակարանը, քան պարեն կծախի թշնամուն և որ այդ այրված անապատում թշնամին ինքն իրեն կկործանվի։ Բայց նա գիտեր, որ ոչ ոքի, այդ թվում նաև իրեն էլ չեն թույլ տա առանց կռվի հանձնել Մոսկվան։ Ժողովրդի և ամենից առաջ զյուղացիների տրամադրությունը, բանակի տրամադրությունն այնպես էր, որ Կուտուզովի համար ուղղակի անկարելի էր չբռնվել թեկուղ մեկ զլխավոր ճակատամարտի։ «Ով որ առաջարկեր Մոսկվան տալ առանց կրակոցի, անկասկած դավաճան կհամարվեր ամբողջ ժողովրդի աչքում» — ասում է ժամանակակիցներից մեկը։

Ներ ռուսական նահանջող բանակը Գժատուկից չարժվում էր գեպի Մոժայսկ, նրան օժանդակելու համար տեղ հասավ 15 հազարանոց զորքը Միլորադովիչի հրամանատարությամբ և Մոսկվայի 10 հազարանոց միլիցիան՝ կոմս Մարկովի առաջ-

նորդուծյամբ: Ստանալով այդ օժանդակ ուժը, Կուսուղովը վերջնականապես նրոջնց կռիվի բռնվել: Ռուսական բանակը կանգ առավ ու երեսը դարձրեց դեպի հարձակվող Նապոլեոնը:

Սեպտեմբերի 2-ին, մտնելով Գժատակ, Նապոլեոնը հրամայեց քաղաքում և նրա մերձակայքում չտնվող մարտական ուժերի ընդհանուր ստուգում կատարել: Պարզվեց, որ կա 103 հազար հետևազոր, 30 հազար հեծելազոր և 587 թնդանոթ: Բայց դեռ չարունակում էին մոտենալ հետ մնացած զորամասերը:

Սեպտեմբերի 4-ի զիշերվա ժամը մեկին Նապոլեոնը դուրս եկավ Գժատակից և առաջ զնայ արագ թափով, խիստ նեղելով Կուսուղովի արյևդարդը, պարզապես ցանկանալով կամ նոր գլխավոր հրամանատարին ստիպել, որ գլխավոր ճակատամարտի բռնվի, կամ ռուսական բանակի հետևից կրնակիոխ դնալով՝ մտնել Մոսկվա: Ռուսական արյևդարդն անընդհատ և դաժան զիմադրուծյուն էր ցույց տալիս Փրանսիացիներին:

Պաշտպանվելով գեներալ Կոնտյնիցինի գլխավորած, արեղարդի հաջող և համառ զիմադրուծյամբ՝ Կուսուղովը Բարկլայի և Բադրատիոնի հետ սեպտեմբերի 3-ին մոտեցավ Կուբուցկի վանքին և այտեղ սկսեց ամրություններ կառուցել:

Նապոլեոնը դնում էր Կոնտյնիցինի հետևից, համարյա անընդհատ կռիվ մղելով նրա դեմ: Եվ հանկարծ նրան ղեկուցեցին, որ առջևում ռեզուտ կա: Նապոլեոնը Շեվարդինոյի այդ ռեզուտին մոտեցավ սեպտեմբերի լույս 5-ի զիշերը, երբ ռեզուտում դեռ մնում էին փոքրաթիվ ռուսական զորամասեր, որոնք չէին կարողացել հեռանալ: Ռեզուտի պաշտպանները հետ մղեցին Փրանսիական հեծելազորի մի քանի զրոհները: Վրա հասած Փրանսիական երկու հետևակ զիվիդիաները և 3-րդ զիվիդիայի երեք զնդերը հետ մղեցին Նեվերոյիսկու զիվիդիան, որ գրավում էր ռեզուտի մատույցները, և զրոհ տվին Շեվարդինոյի ռեզուտի վրա: Ռեզուտի ռուս պաշտպանները Փրանսիական զորքերին, այսինքն իրենց անխուսափելի մահվանը գիմավորեցին «ուռա» ղուռալով և սվինային հակադրոհով: Շեվարդինոյի պաշտպանությունը հանձնարարված էր իշխան Գորչակովին, որի արամադրության տակ կար 11 հազար մարդ: Նապոլեոնը Շեվարդինոյի ռեզուտի դեմ ուղարկեց ավելի քան երեսուն հինգ հազար ընտիր

դորք, խմկ կռվի եռուն պահին էլի օժանդակ ուժ ուղարկեց
զրոհող զորասյանը: Կռիվը շարունակվեց սեպտեմբերի 5-ի
ամբողջ օրը: Ռուսական հրետավորները շարունակում էին
կրակել մինչև վերջին րոպեն, և երբ Փրանսիացիները ներխու-
ժեցին ռետրանչմենտները¹⁾ նրանք չփախան, թեև դրա հա-
մար լիակատար հնարավորություն ունեին, — այլ ձեռնամար-
տի բռնվեցին և իրենց թնդանոթների մոտ սրախողխող արվե-
ցին: Միայն կես դիչերից քիչ առաջ Բադերտիոնը Կուսու-
ղովից հրաման ստացավ դադարեցնել գլխադուրթյունը և հետ
քաշվել: Ֆրանսիացիները չէին կարողանում հասկանալ, թե
ինչպես այդ կռիվը, որ այնքան անհավասար էր, կարող էր
այնքան երկար տևել:

Նույն օրը, սեպտեմբերի 5-ին ռուսական արյերգարդը,
որի հրամանատարը Կոնովնիցինն էր, Կոկոցկի վանքի մոտ
նորից զրոհի ենթարկվեց Փրանսիացիների կողմից և անցավ
դեպի Բորոգինո գյուղը:

Նապոլեոնը ռուսական բանակի դեմ գնում էր երեք խիտ
զորասյուներով: Վալուևիով գյուղի մոտ կայսերական շտաբը
կանգ առավ: Այստեղ Նապոլեոնը ղեկուցադիր ստացավ, որ
Շեվարդինովի ռեզուզում «ոչ մի գերի չի բռնվել»:

Սեպտեմբերի 6-ին Նապոլեոնը մոտենալով Շեվարդինովի
ռեզուտին և ըստ երևույթին ցանկանալով ստուգել նախորդ
օրը ստացած լուրը, հարցրեց. «Երեկ քանի՞ ռուս են գերի
բռնվել»: — «Նրանք գերի չեն հանձնվում, թաղավոր» — եղավ
պատասխանը:

Սեպտեմբերի 6-ի ամբողջ օրը Փրանսիացիները կռվի էին
պատրաստվում: 6-ից լույս 7-ի դիչերը Նապոլեոնը չքնեց:
Նուսարացին նրա վրանը մտավ մարչալ Նեյի հանձնատարը:
Մարչալը հարցնում էր՝ արդյոք սկսե՞լ կռիվը: Ռուսները
կանգնած էին իրենց տեղում: Նապոլեոնը դռնեց. «Վերջապես,
մենք նրանց բռնել ենք: Դեպի առաջ: Բա՛ց անենք Մոսկվայի
դռները»: Այդ ժամանակ ռուսական հեռավոր ճամբարի հետե-
վում սկսեց բարձրանալ արևը: «Ահա Առևտերլեյի արևը» —
բացականչեց կայսրը:

Համալսարհային պատմության մեջ չառ քիչ են այն ճա-
կատամարտերը, որոնք կարողանան համեմատվել Բորոգինովի

¹⁾ Ժամանակավոր ամբուլթյուններ:

ճակատամարտի հետ թե մինչև այդ ժամանակ չլսված արյունահեղությամբ, թե դաժանությամբ և թե հսկայական հետևանքներով:

Այդ ճակատամարտում Նապոլեոնը ո՛չ միայն չընկճեց ռուսական բանակի ոգին, այլև չվախեցրեց ռուս ժողովրդին, որը հենց Բորոդինոյից հետո և Մոսկվայի անկումից հետո ուժեղացրեց ցասկոտ դիմադրությունը թշնամուն:

Առավոտյան ժամը հնդից ամենակատաղի կռիվ սկսվեց ռուսական բանակի ձախ թևում, ուր Սեմյոնովսկի ձորակի մոտ կանգնած էր Բաղրատիոնը: Նապոլեոնն այնտեղ ուղարկեց իր մարշալներ Դավուլին, Մյուլրատին ու Նեյին: Առաջին դրոհները հետ մղվեցին ռուսական հրետանիով և հրացանային խիտ կրակով: Մարշալ Դավուլն ղլխից կանտուզիա ստացավ ու ընկավ, նրա ձին սպանվեց: Բաղրատիոնի դիրքի դեմ ուղղված առաջին խիղճալի դրոհներում Փրանսիացիներին կոտորվեցին խիստ չատ հրամանատարներ, — մի քանի գեներալներ և գնդերի հրամանատարներ: Սեմյոնովսկի ձորակի շուրջը եղած ամբողջ լեռները, այսպես կոչված՝ «Բաղրատիոնի Փլեշները» կառուցված էին հարձակորդին, վատ, բայց նրանց պաշտպանությունն այնքան ուժեղին էր, որ Փրանսիացիները բոլոր կատաղի հարձակումները առավոտյան ժամը հնդից մինչև 11-ը անհաջողություն էին մատնվում և ջարդ ու փշուր լինում այդ Փլեշների վրա: Նապոլեոնն արդեն առավոտյան ժամը յոթին հրամայեց առաջ տանել համարյա 150 թնդանոթ և դրանցով ուժեղացնել Բաղրատիոնի Փլեշները: Հրետանային երկար պատրաստությունից հետո հսկայական ուժեր նետվեցին Սեմյոնովսկի ձորակի և Փլեշների վրա: Ճնշող ուժեր հարձակվեցին Վորոնցովի դիվիզիայի վրա, հետ չարտեցին ու ճգմեցին այն, հարձակվեցին Նեվերովսկու դիվիզիայի վրա, նրան էլ ճգմեցին: Նեվերովսկին քաջաբար դիմադրում էր և նրա գումարտակները մի քանի անգամ ավինամարտի էին նետվում վրա տվող Փրանսիացիներին հսկայական մասսայի դեմ:

Մյուլրատը, Նեյը և Դավուլն Նապոլեոնից օժանդակ զորք ուղեցին: Բայց նա մերժեց, դժգոհ լինելով, որ Փլեշները դեռ չեն գրավված:

Եռաց ամենաարյունահեղ մարտը: Բաղրատիոնը և Փրանսիական մարշալները մի քանի անգամ միմյանցից դրավում

էին բազրատիոնյան Փլեշները, որոնք ծածկված էին մարդկանց ու ձիերի դիակներով: Այն մարդկանց համար, որոնք լավ էին ճանաչում Բազրատիոնին և նրան տեսնում էին այդ սարսափելի ժամերին, չէր կարող կասկած լինել, որ կամ Փլեշները կամ Բազրատիոնի ձեռքում, կամ նա չարքից դուրս կգա մեռած կամ ծանր վիրավորված:

Նապոլեոնը նույնպես չէր կարող և չէր ուզում հետ կանգնել իր դիտավորութիւնից— սկզբում ուռաական գիծը ճեղքել նրա ձախ թևից, իսկ հետո բոլոր ջանքերն ուղղել դեպի կենտրոնը:

Բազրատիոնի Փլեշների դեմ հիմա կայսրն ուղղեց արդեն ոչ թե 130 և ոչ թե 150, այլ 400 թնդանոթ, այսինքն իր ամբողջ հրետանու երկու երրորդից ալիւին: Հրամայվեց նոր, ընդհանուր դրոշ տալ Փլեշների վրա: «Չենց այստեղ էլ տեղի ունեցաւ կարևոր մի դեպք,— ասում է կովի մասնակիցներէից մեկը:— Հասկանալով մարշալների դիտավորութիւնը և տեսնելով Ֆրանսիական ուժերի ահարկու չարժուժը, իշխան Բազրատիոնը մեծ դործ մտածեց: Հրամանները տրված են, և մեր ամբողջ ձախ թևն իր ամբողջ երկարութեամբ չարժվեց տեղից և արագ քայլերով նետվեց «վինամարտի»: Ռուսական դրոշը հետ մղվեց և Դավուն պատառիանց հակադրոհով: Ֆրանսիական դրենագերներն առանց կրակելու— որպեսզի ժամանակ չկորցնեն,— նետվեցին Փլեշների վրա: Ռուսական զնդակները հնձում էին նրանց: Ֆրանսիական մարտիցից կարտեչի կարկուտ թափվեց Փլեշների ուռս պաշտպանների վրա:

Այդ մոմենտին Բազրատիոնին դիպաւ թնդանոթի ուժերի մի բեկոր և ջարդեց նրա ոլոգի ոսկորը: Նա դեռ ջանք էր դործադրում մի քանի ակնթարթ դորքերից թաքցնել իր վերքը, որպեսզի չչլիթթեցնի նրանց: Բայց արյունը հոսում էր վերքից և նա սկսեց լուռ, դանդաղ կախվել ձիուց: Նրան կարողացան բռնել, պառկեցրին գետնին, հետո տարան:

Դա ճակատամարտի կրիտիքական, ամենաճակատադրական մոմենտն էր: Խնդիրը միայն այն չէր, որ զինվորները սիրում էին Բազրատիոնին, ինչպէս այդ պատերազմում նրանց հրամանատարները եղած գեներալներից ոչ ոքի, բացի Կուտուզովից: Նրանք, բացի այդ, նաև հավատում էին նրա անպարտելիութեանը: Այդ մարդու անկումից հետո «կարծես թռաւ»

դնաց ամբողջ ձախ թեւի հողին», ասում են մեզ աղանաւանները:

Գեներալ Սեն-Պրիի կողմից Ալեքսանդր կայսրին ուղղված հետագա ղեկուցադրում Բաղրատիոնի Փլեչներն ու ուղղուները Փրանսիացիներին կողմից դրավիկը նույնպէս բացատրվում է Բաղրատիոնի ծանր վերքով, որը նրան ստիպեց թողնել ճակատամարտի դաշտը:

Ձախ թեւը խորտակվեց: Ճակատամարտի զանազան կետերից Կուտուզովին հաղորդում էին ծանր կորուստների մասին: Զինվորները կռիւմ էին ապշեցուցիչ անկունությամբ և ընկնում էին հաղարներով: Ինչպես և Մմուլենսկի մոտ, վերավորված զինվորները մինչև վերջին հնարավորությունը դիմանում էին տանջանքներին և չէին հեռանում շարքից, չհնազանդվելով սպանելին, որոնք նրանց ուղարկում էին լաղարեթ: Հրամանատարական կազմն այդ օրը ոչնչով չէր զիջում զինվորներին:

Վյուրտեմբերգի պրինց Նիպենին, որ Բորոդինոյի օրը գտնվում էր ուսանական բանակում, հաղորդում է իրեն ապշեցրած մի գեպը. գեներալ Միլորատովիչը ճակատամարտի եռուն պահին իր ազգուստանո Բիբիկովին հրամայեց դանել Նիպենի Վյուրտեմբերգցուն և ասել, որ նա դեռ Միլորատովիչի մոտ: Բոլոր վկայություններից մենք դիտենք, որ այդ ամբողջ օրվա ընթացքում հրետանային որոտմունքը զարհուրեցուցիչ էր, ավելի ուժեղ, քան Ելլաուի մոտ, քան Վադրամի ճակատամարտում, ավելի ուժեղ, քան Էրբէ Նապոլեոնի տված ամեն մի ճակատամարտում: Նույնիսկ հրացանային կրակոցները չէին լսվում և բոլորովին կորչում էին թնդանութային այդ խլացուցիչ որոտներում ու ճայթյուններում: Ըստ երևույթին Բիբիկովը չկարողացավ դուռնով Նիպենին լսելի դարձնել այն, ինչ որ հրամայված էր, և դրա համար բարձրացրեց ձեռքը, ցույց տալով, թե որտեղ է գտնվում Միլորատովիչը: Այդ մոմենտին թնդանութառումը կարեց նրա ձեռքը: Ընկնելով ձիուց, Բիբիկովը բարձրացրեց մյուս ձեռքը և կրկին ցույց տվեց նույն ուղղությունը:

Փլեչների դրավումից հետո Բորոդինոյի ճակատամարտի երկրորդ կենտրոնական մոմենտը դարձավ պայքարն, այսպէս կոչված, կուրգանային մարտկոցի կամ Ռաւսկու մարտկոցի համար, որ գտնվում էր ուսանական ճակատի կենտրոնում,

և նրան փախուստի մատնել: Բայց դրանից ոչինչ չէր դուրս գալիս: Ռուսական բանակը հետ էր քաշվում լիակատար կարգով:

Չորրորդ ժամի սկզբին մարտիոցի ռուս պաշտպանները երեք քառորդ մասը կոտորվել էր, մնացածները հետ էին մղվել: Մարտիոցը մնաց Փրանսիացիներին: Բայց ռուսները չէին հեռանում կռվի դաշտից և նրանց հրետանին չէր լուծւմ:

Վրա հասավ երեկոն: Նապոլեոնի տված ճակատամարտերից մեծագույնը մոտ էր վերջանալուն, բայց ինչպես անվանել այդ վերջավորութունը: Այդ պարզ չէր ոչ Նապոլեոնի, ոչ էլ մարշալների համար: Նրանցից ոչ ոք հաղթանակի ղդացում չէր ապրում: Մարշալները խոսում էին իրար հետ և դժգոհ էին: Մյուսրատն ասում էր, թե կայսրն ամբողջ օրը նրա համար անճանաչելի էր դարձել: Նեյն ասում էր, թե կայսրը մոռացել է իր արհեստը:

Երկու կողմից էլ մինչև երեկոս յորտում էր հրետանին և շարունակվում էր արյունահեղութունը, բայց ռուսները ոչ միայն փախչել, այլ և նահանջել չէին մտածում: Արդեն սաստիկ մթնել էր: Բարակ անձրև սկսվեց: «Ի՞նչ են անում ռուսները» — հարցրեց Նապոլեոնը: — «Կանդնած են տեղում, ձերդ մեծութունը»: — «Ուժեղացրեք կրակը, նշանակում է նրանք էլի՛ են ուղում այդ, — կարդադրեց կայսրը, — դարձյալ հարվածեցեք նրանց»:

Նապոլեոնը երեկոյան շրջում էր ճակատամարտի դաշտում, նա մտալ էր, ոչ ոքի հետ չէր խոսում, նրան ուղեկցում էին չքախումբն ու ղեկերալները, որոնք չէին համարձակվում ընդհատել նրա լուռութունը: Դաշտի բոլոր ծայրերից լսվում էին վիրավորների հառաչանքներն ու ճիչերը: Ռուս վիրավորներն ապչեցրին չքախմբին: «Նրանք բոլորովին չէին հառաչում, — դուրս է այդ ժամանակ կայսրին ուղեկցողներից մեկը, — դուրս հեռու լինելով յուրայիններից՝ նրանք այնքան էլ զթուլթուն չէին սպասում: Բայց ճիշտ է այն, որ նրանք ցավին դիմանալու մեջ ալելի տոկուն էին թվում, քան Փրանսիացիները»:

Ռուսական բանակի կորցրած 58 հազար սպանվածներին ու ծանր վիրավորվածներին ընկնում էր ընդամենը 700 ռուս զեբի... «Իմ բոլոր ճակատամարտերից ամենաապրտալիին — դա այն ճակատամարտն է, որ ես տվի Մոսկվայի մոտ»:

աջ թեւով շուրջանցում է ուստական ճախ թեւը: Առանց ճակատամարտի բռնակերու աշլես անհնարին էր մնալ տեղում, իսկ այդ ժամանակ կռվել նուշնպես անկարելի էր: Կուտուղովը որոշեց նահանջել դեպի Մոսկվա:

Մտան Ֆելի գյուղը: 1812 թվի սեպտեմբերի 13-ին Ֆելի գյուղի բնակիչ Սեվաստյանովի խրճիթում Կուտուղովը խոչոր զորամասերի հրամանատար գեներալներին հավաքեց խորհրդակցության: Կուտուղովն առաջարկեց քննարկել հետեւյալ հարցը. արդյոք նոր ճակատամարտի՞ բռնակել, թե՞ նահանջել Մոսկվայից դեմք, քաղաքը թողնելով Նապոլեոնին: Հենց այստեղ էլ նա արտահայտեց մինչ այդ թարցրած իր միտքը. «Քանի դեռ զոյություն կունենա բանակը և ի վիճակի կլինի դիմադրելու թշնամուն, այդքան ժամանակ հույս կունենանք պատերազմը բարեհաջող կերպով ավարտելու, բայց երբ ոչնչանա բանակը, կկործանվեն Մոսկվան և Ռուսաստանը»: Խորհրդակցությունը տեւեց ընդամենը մի ժամից քիչ ավելի: Ֆելդմարշալն, ըստ երեւոյթին, ներկաների համար անսպասելի կերպով հանկարծ տեղից վեր կենալով ընդհատեց նիստը և հայտարարեց, թե հրամայում է նահանջել: Այդ օրվա մնացած ժամերին, խորհրդակցությանից հետո, Կուտուղովը ոչ ոքի հետ չէր խոսում: Գիշերը վերդառնալով իրեն հաղկացված խրճիթում գիշերելու, Կուտուղովը չքնեց: Այդ գիշեր մի քանի անգամ լսեցին, որ նա լալիս է:

Արդեն սեպտեմբերի 13-ի երեկոյան բանակն իմացավ Ֆելդմարշալի որոշման մասին. այդ մասին նրան հաղորդել էին այն գեներալները, որոնք եղել էին Ֆելի խորհրդակցությանը: «Ամենուրեք տխրություն էր տիրում», — գրում է ականատեսը: Մոսկվայում միայն չառ քչերը գիտեին այն որոշումը, որ ընդունվել էր սեպտեմբերի 13-ին Ֆելիում գումարված ռազմական խորհրդում: Պետերին հայտնի դարձավ, որ գեներալներին խորհրդակցության ժամանակ եղել են երեք հիմնական կարծիքներ, գործնական ճշգրիտ առաջարկներ, — Բեննինգսենն առաջարկել էր նոր ճակատամարտ տալ Նապոլեոնին և այդ կերպ փորձել փրկել Մոսկվան, Բարկլայն առաջարկել էր նահանջել դեպի Վլադիմիր քաղաքը, մի քանի հոգի խոսել էին դեպի Տվեր նահանջելու մասին, որպեսզի կասեցվեր Նապոլեոնի հնարավոր շարժումը դեպի Պետերբուրգ: Արդեն գիտեին, որ Կուտուղովը խորհրդակցության վերջում

հայտարարել էր, թե ինքը ճակատամարտի չի բռնվի, այլ կնահանջի, Մոսկվան թողնելով Նապոլեոնին: Բայց նա որոշել էր նահանջել ոչ թե դեպի հյուսիս, այլ դեպի Կալուգայի հին ճանապարհը:

Սեպտեմբերի 14-ի վաղ առավոտից ռուսական բանակն անընդհատ երթով անցնում էր մայրաքաղաքից: Լուսարացիներ հեռացող ռուսական բանակի առաջին էջերոնները մեկը մյուսի հետևից մտնում էին Մոսկվա և Արբատով ու նրան դուրահեռ մի քանի փողոցներով անցնում էին քաղաքի հարավ-արևելյան մասը, ուղղվելով դեպի Յաուզսկի կամուրջը: Նահանջող ռուսական բանակի վերջին զորամասերը դեռ նոր էին անցնում Յաուզսկի կամուրջը, երբ արյերդարդի հրամանատար գեներալ Միլորադովիչը լուր ստացավ, թե Փրանսիական հեծելազորը Դորոգոմիրովսկայա ուղեկալից մտնում է Մոսկվա:

Յերեկը և դիչերը և հետևյալ օրը մարդկային անվերջ հոսանքները Մոսկվայից դնում էին Յաուզսկի կամուրջի վրայով: Կուսուղովը ռուսական բանակը տանում էր դեպի հարավ, դեպի Կրասնայա Պախրա, իսկ Կրասնայա Պախրայից դեպի Կալուգայի հին ճանապարհը: Երեկոյան, երբ նա ուսուղում հասել ու թեյ էր խմում գյուղացիներով Ուսուղ գյուղում նստել ու թեյ էր խմում գյուղացիներով չքաղաքում և երբ նրանք սարսափահար ցույց տվին նրան հեռվում վառվող Մոսկվայի ցուրը, «Կուսուղովը խփելով իր գլուխին, ասաց. «Ափսոս է, այդ ճիշտ է, բայց սպասեցեք, ես նրա գլուխը կջարդեմ...»:

Սեպտեմբերի 9-ին Նապոլեոնը Մոծայսկումն էր: Այնտեղից նա դուրս եկավ միայն սեպտեմբերի 12-ին: Նա հասնում էր բանակին, որն առանց կանգ առնելու չարժվում էր դեպի Մոսկվա: Ավանդարդն արդեն մոտենում էր Պոկլոննայա բլուրին, երբ կայսրը հասավ նրան: Այդ սեպտեմբերի 13-ին էր:

Սեպտեմբերի 13-ից լույս 14-ի դիչերը Նապոլեոնն անցկացրեց Վյազմեի գյուղում: Գիչերը և առավոտյան Փրանսիական ավանդարդն անցնում էր Վյազմեի կողքից, Մոսկվա հեռավոր ճանապարհով: Յերեկվա ժամը երկուսն էր, երբ Նապոլեոնն իր չքաղաքով բարձրացավ Պոկլոննայա բլուրը, և նրանց աչքերի առաջ իսկույն բացվեց Մոսկվան: Պայծառ արևը ողողել էր հսկայական, անհամար ոսկեղօծ զմբեթներով քաղաքը: Շքամբրի հետևից գնացող հին զվար-

դեան, մոռանալով դիտելալինան, խոնավելով ու խախտելով շարքերը, նետվեց դեպի բլուրը և հաղարավոր ձայներ դոջեցին՝ «Մոսկվա՛ն, Մոսկվա՛ն»։ Բարձրանալով բլուրը՝ Նապոլեոնը կանգ առավ և չթաքցնելով հիացմունքը, նույնպես բացահայտեց՝ «Մոսկվան»։

Այն մարդիկ, որ ասրեցին այդ ժամերը Պոկլոննայա բլուրի վրա, պատրաստ էին հավատալու, թե ունի ժողովրդի դիմադրութունը խորտակված է և ղինադադարը, ապա նաև հաշտութունը օրերի հարց է։

Արդեն արևն սկսել էր թեքվել դեպի արևմուտք, և մի տարօրինակ երևույթ Փրանսիացիների խոսակցության առարկա դարձավ։ Մյուրատն արդեն մտել էր քաղաք և դուգահեռ հոսանքով Մոսկվա էր լցվում փոխարքա Եվդենիի կորպուսը։ Նապոլեոնն ուղում էր քաղաքից դեպուտացիա ընդունել այստեղ, Պոկլոննայա բլուրի վրա, և գիտեր, որ Մյուրատն ու Եվդենիին ամենից առաջ պետք է ուղարկեն այդ դեպուտացիան՝ քաղաքի բանալիներով։ Բայց ոչ մի դեպուտացիա չէր դալիս։ Հանկարծ բոլորովին անհավանական մի նորութուն տարածվեց նախ՝ դավադրայում, հետո չքախմբում, ու հասավ Նապոլեոնին. բնակիչները կողմից ոչ մի դեպուտացիա չի լինի, որովհետև Մոսկվայում բնակիչներ չկան։ Ամբողջ բնակչութունն արդեն հեռացել է Մոսկվայից։

Մյուրատն Մոսկվա էր մտել դեռ ցերեկվա կեսին։ Հեծելազորը դնում էր զդուշությամբ, երկյուղ կրելով դարանակալությունից, հանկարծակի հարձակումից։ Բայց մեկ-երկու ժամ շարունակ լուրթյուն էր տիրում, երբ Փրանսիական բանակն անվերջ հոսանքով լցվում էր քաղաք։ Միայն երբ հեծելազորի առաջավոր ջոկատը մոտեցավ Կրեմլին, այնտեղից, փակ դարբասի հետևից մի քանի կրակոցներ լավեցին։ Ֆրանսիացիները թնդանոթի ոռմբով ջարդեցին դարբասը և կարտեզով կոտորեցին այնտեղ դանդաղ մի քանի մարդկանց։ Մինչև այժմ պարզված չէ, թե դրանք ինչ մարդիկ են եղել։ Երբ Փրանսիացիները ներխուժեցին բերդը, պաշտպաններից մեկն արտասովոր գայլույթով նետվեց Փրանսիական մի սպայի վրա, աշխատելով խեղդել նրան, և ատամներով խոցեց նրա ձեռքը։ Նա սպանվեց, մնացածները նույնպես։

Երեկոյան դեմ Նապոլեոնին հաղորդեցին, որ Փրանսիական զորքերը քաղաքը զբաղեւ են առանց դիմադրության։

Նապոլեոնը Մոսկվայում առաջին զիջերը (սեպտեմբերի 14-ից լույս 15-ի) անցկացրեց Դորոգոմիլովսկայա ուղեկալի մոտ, լքած տներից մեկում: Նա շատ մոռյալ էր: «Ինչպիսի՜ սարսափեկ ռե սոմայություն» — բացականչեց նա՝ նայելով մեռած լիողոցներին: Դեռ նա չէր պառկել քնելու, երբ քաղաքի զանազան, միմյանցից հեռու դտնվող մասերից նրա մոտ եկան մի քանի աղյուտանտներ ու հանձնատարներ: Նրանք բոլորը ղեկուցում էին միևեռոյն բանի մասին. քաղաքում հրդեհներ են տկսվում: Կայսրը սկզբում կարծեց, որ այդ իր բանակի զինվորներն են ցրվել քաղաքում ու թալանում են լքած տները, իսկ հրդեհներն առաջանում են նրանց անողորմությունից: Բայց նա դեռ չէր քնել, երբ զիջերվա երրորդ ժամին նրան հաղորդեցին, որ արդեն վառվում է կենտրոնական թաղը, Գոստինիյ զվորը, Մոսկվայի առևտրի միջնակետը, և որ բռնկվում են այն տները, ուր ոչ միայն Փրանսիական զինվորներից ոչ ոք չի եղել, այլև այդ տների մոտ էլ ոչ մի Փրանսիացի չի եղել: Փչում էր քամին, կայծերը հրեղեն խիտ առձեռնվի նման թափվում էին ու վառում հարևան շենքերը: Ծառացի արևը, ու ցերեկվա լույսի տակ հրդեհների ցողքի փոխադեն քաղաքից ծխի քուլաներ էին բարձրանում:

տեղավորված էր նաև նախորդ օրը բերված Ֆրանսիական հրետանային պահեստը: Դա լիակատար և անխուսափելի կործանում էր սպառնում Նապոլեոնին, նրա շքախմբին, նրա շտաբին և նրա հին դվարդիային: Իսկ քամին քանի գնում սաստկանում էր և նրա ուղղությունը չէր փոխվում: Արդեն բռնկվեց Կրեմլի աշտարակներից մեկը: Հարկավոր էր հեռանալ Կրեմլից առանց մի բռնակ լորջնելու: Նապոլեոնը, որ խիստ դուռնատ էր, բայց արդեն ուշքի էր եկել հանկարծակի արթնացման ժամանակ ստրած սարսափելի հուզումից, պալատի մի պատուհանից լուռ նայեց վառվող Մոսկվային և ասաց. «Այլ նրանք իրենք են վառում: Ի՞նչ մարդիկ են: Սկսվեցին և»: Մի ուրիշ անգամ նա ասաց. «Ինչպիսի՜ վճռականություն: Բարբարոսն'ը: Ի՞նչ սոսկալի տեսարան է»:

Շքախմբը շրջապատեց կայսրին: Մարչալ Մորտյեն, որ անում էր ամեն հնարավորը, որպեսզի կրակից փրկեր Կրեմլը, կատեդրիկ կերպով հայտարարեց, որ կայսրը պետք է անհապաղ հեռանա Կրեմլից, այլապես նրան մահ է սպառնում կրակից: Նապոլեոնը հապաղում էր: Դեռ նախորդ օրը, առաջին անգամ մտնելով պալատ, նա դիմեց շքախմբին և ասաց. «Այսպես ուրեմն, վերջապես, ես Մոսկվայում եմ, ցարերի հնազարդան պալատում, Կրեմլում»: Նա դիտել, թե Կրեմլն ինչ նշանակություն ունի, ուստի ան պատմության մեջ և չէր ուղում հեռանալ այնտեղից, ուր ապրել էր միայն մի անգամ: Եվ լրիվ օր: Բայց դատողություններն տեղը չէր. հրդեհն ամեն բռնակ սպառնում էր ընդգրկել պալատը և փակել բոլոր ելքերը: Սկսեց լուսանալ, իսկ զրությունն ավելի ու ավելի էր վատանում, ծխից ու խանձահոտից, որ ամեն տեղից թափանցում էին պալատ, դժվարանում էր շնչառությունը: «Ինչպիսի՜ մոլեղին վճռականություն—կրկնում էր Նապոլեոնը:— Ինչպիսի՜ ժողովուրդ է, ինչպիսի՜ ժողովուրդ»:

Մարչալները և շքախմբը միաբերան կրկնեցին իրենց խնդրանքները, որ կայսրն անհապաղ հեռանա պալատից: Ամեն կողմից լսվում էին բարձրաձայն աղաղակներ «Կրեմլը վառվում է»: Կայսրը որոշեց տեղափոխվել Պետրովսկի պալատ, որ այն ժամանակ դեռ գտնվում էր քաղաքից դուրս, թափուտների ու ամայությունների մեջ:

Նա պալատից դուրս եկավ շքախմբի և հին դվարդիայի ուղեկցությամբ, բայց քիչ մնաց, որ բոլորն էլ կործանվեին:

փրկության այդ փորձն անելու ժամանակ: Ահա կայսրին ուղեկցողներինց մեկի—կոմս Սեդյուերի ցուցմունքը. «Մեղ պաշարել էր բոցի օվկիանոսը: Բոցը մեր առաջ փակել էր բերդի բոլոր ելքերը և մեզ հետ էր մղում: Հենց որ մենք փորձում էինք դուրս գալ: Մի քանի պրպտումներից հետո մենք քարն պարսպի մեջ դառնաք մի արահետ, որը դուրս է դալիս դեպի Մոսկվա—գետը: Նապոլեոնին, նրա սպաններին ու նրա զվարդիսային հաջողից այդ նեղ անցքով դուրս գալ կրեմլից: Բայց դուրս գալով ի՞նչ չահեցին նրանք: Ավելի մոտենալով հրդեհին՝ նրանք չէին կարող ոչ հետ դնալ, ոչ էլ մնալ տեղում: Բայց ի՞նչպես առաջ գնալ, ի՞նչպես նետով ալի ալիքների մեջ: Նրանք, որոնք վաղվում էին քաղաքում, մերկից խլացած, մոխրից կուրացած, չէին կարող լիմանալ, թե որտեղ են՝ իրենք, որովհետև փողոցները չքանում էին ծխի ու ալերակների մեջ: Սակայն հարկավոր էր չտապել: Ամեն մի ախիթարթ մեր շուրջը սաստկանում էր բոցի մոնչոցը: Միակ ոլորապտույտ և բոցերի մեջ կորած փողոցն ալելի չուտ այդ դժոխքի մոտքն էր, քան նրա ելքը: Կայսրն առանց տատանվելու, ոտքով նետվեց դեպի այդ վտանգավոր անցքը: Նա դեպի առաջ էր դնում բռնկվող խաբույկների միջով, լսելով, թե ինչպես ճըճքում էին կամարները, ինչպես իր շուրջը թափվում էին վառվող դերանները և չիկացած երկաթե կոուրները: Այդ փրկածները զժվարացնում էին նրա ընթացքը... Մենք դնում էինք հրդեհն դեպի վրա, երկու հրդեհն պատերի միջով: Այրող ջերմությունը վառում էր մեր աչքերը, որ սալից մենք բաց էինք պահում, որպեսզի տեսնեինք վտանգը: Կայն մենք բաց էինք պահում, որպեսզի տեսնեինք վտանգը: Հեղձուցիչ օդը, մոխիրն ու կայծերը, բոցի լեզուները բոլոր շեղձուցիչ օդը, մեր շնչառությունն ընդհատ էր, կողմերից վառում էին մեզ, մեր շնչառությունն ընդհատ էր, չոր, արագ, և մենք համարյա թե խեղդվում էինք ծխից...»:

առեթյուն կնքելն իր համար ոչ միայն դժվար է, այլև անկարելի, և որ պատերազմը, որը Մոսկվայի դրամամով նա ավարտված էր համարում, ուստի ժողովրդի համար Մոսկվայի անկումից հետո դեռ նոր է սկսվում:

Մոսկվայի հրդեհից անմիջապես հետո Նապոլեոնի առաջ ծառանում են երկու դլխավոր խնդիրներ. առաջինը և ամենակարևորը—հենց այստեղ, Մոսկվայում անպայման հաշտություն կնքել. երկրորդը—լինավորների կողմից վերջնականապես թալանվելուց պահպանել այն կենսամթերքներն ու հալուստը, որ կարող էր Մոսկվայում հրդեհից անխնայ մնացած լինել, և դրա հետ միասին փրկել խախտված դիսցիպլինան իր կազմով խայտարդեա բանակում: Երկու խնդիրներն էլ բոլորովին անիրագործելի էին:

Հրդեհն արդեն հանդարտվում էր քաղաքի որոշ մասերում (կենտրոնում), բայց դեռ մոլեգնում էր ծայրամասերում, երբ Նապոլեոնը Պետրովսկի պալատից նորից տեղափոխվեց Կրեմլ: Հենց Կրեմլ վերադառնալու օրը նրան հաղորդեցին, որ դենեքայ-մայոր Տուտովինը, Կրթական տան պետը, խնդրում է այդ հիմնարկության մոտ պահակ կարգել՝ Մոսկվայում մնացած սաներին պահպանելու համար: Նապոլեոնը բոլորովին անսպասելի կերպով ոչ միայն բավարարեց Տուտովինի դիմումը, այլև հրամայեց նրան հրավիրել Կրեմլ: Նապոլեոնը նրա հետ հետևյալ խոսակցությունն ունեցավ. «Ես կցանկանայի ձեր քաղաքի հետ վարվել այնպես, ինչպես վարվել եմ Վիեննայի ու Բեռլինի հետ, որոնք մինչև այժմ էլ չեն ավերված, բայց ուսաստանյակները, որ այս քաղաքը դատարկ են թողել, անօրինակ դործ կատարեցին: Նրանք իրենք ուզեցին մայրաքաղաքը մատնել կրակին և ինձ ժամանակավոր չարիք պատճառելու համար ավերեցին բազում դարերի ստեղծածը...» Այսպես է պատմում Տուտովինը Նապոլեոնի հետ ունեցած իր զրույցի մասին: Խոսակցության ժամանակ Նապոլեոնը չառողորմած էր: Տուտովինը կայսեր այն հարցին, թե արդյոք նա չի՞ ցանկանում էլի որևէ բան խնդրել, թույլտվություն խնդրեց զեկուլյց գրել կայսրուհուն, Ռուսաստանի բոլոր կըլթական տների բարձրագույն պետին: Նապոլեոնը ոչ միայն թույլ տվեց, այլև Տուտովինին առաջարկեց ավելացնել, որ նա, Նապոլեոնը, առաջվա պես հարգում է Ալեքսանդրին և կցանկանար հաշտություն կնքել: Տուտովինն այդ բոլորը

վառել: Ռուս զորավարը պատասխանեց, որ նա այդ դիտն, որ այդ արեւ են իրենք, ռուսները, որոնք Մոսկվան դնահատում են կայսրութեան ամեն մի այլ քաղաքից ոչ այլեւի: Լորխտոնն ասաց. «Դուք չպետք է կարծեք, որ մեր զորքերը հուսահատական դրութեան մեջ են. մեր ընտանիքները համարյա համարաւ են»: Երբ Կուտուզովը Լորխտոնին ասաց, որ ռուս ժողովուրդը Ֆրանսիացիներին վրա նայում է ինչպես թաթարների վրա, որոնք ներխուժել էին Չինգիզ-խանի առաջնորդութեամբ, իսկ Լորխտոնը պատասխանեց՝ «սակայն չէ՞ որ քիչ որոշ տարբերութիւն», — ապա Ֆերմարչալին առարկեց, որ ռուս ժողովուրդը ոչ մի տարբերութիւն չի տեսնում: Լորխտոնն այդ տպավորութեամբ և իր ճանապարհորդութեան լիակատար անօգտակարութեան դիտակցութեամբ վերադարձաւ Կրեմլ Նապոլեոնի մոտ: Եւ, այնուամենայնիւ, Նապոլեոնն այնքան էր ուզում հաղթողի դիրք պահպանելով հաշտութիւն ստորագրել հենց Մոսկվայում, որ նա որոշեց չտապեցնել Ալեքսանդրի պատասխանը. հոկտեմբերի 20-ին, այսինքն Լորխտոնի ու Կուտուզովի զրույցից տասնհինգ օր անց Ֆրանսիական բանակից Ֆելզմարչալի մոտ ուղարկվեց դնդապետ Բերտեմին, տանելով կայսերական շտաբի պետի—մարչալ Բերտեյի նամակը: Բերտեյն հարցնում էր, թե արդէոք ստացված է քարի պատասխանը, ու նորից խոսում էր «կարգը վերականգնելու», այսինքն հաշտութեան մասին: Կուտուզովը Բերտեյին պատասխանեց իր ձեռքով գրված նամակով, որի մեջ մատնանշում էր աշխնային ճանապարհի դժվարութիւններին, ճանապարհի երկարութեան մասին, որի պատճառով ուշանում է Ալեքսանդրի պատասխանը: Կուտուզովն ավելացրել էր. «Դժվար է զսպել ժողովրդին, որը ջղայնացած է այն ամենով, ինչ որ ինքը տեսել է, մի ժողովուրդ, որն արդեն երեք հարյուր տարի պետութեան ներսում պատերազմ չի տեսել, որը պատրաստ է իրեն զոհել հայրենիքի համար և տարբերութիւն չի դնում այն ամենի մեջ, ինչ որ ընդունված է կամ չի ընդունված սովորական պատերազմներում»:

Իսկապես ասած՝ այդ օրերին, հոկտեմբերի 6-ից, երբ Լորխտոնը վերադարձաւ Մոսկվա, մինչև հոկտեմբերի 14-ը, երբ Նապոլեոնն արդեն սկսեց այնպիսի կարգադրութիւններ անել, որոնք պարզ խոսում էին մոտալուտ էվակուացիայի մասին, նա արդեն ամենեւին էլ պատասխան չէր սպասում Պե-

տերրութիւն, ասե՛նք լավագոյն դեպքում պատասխանն ամսի 18—19—20—ից ավելի չուտ չէր կարող ստացվել: Կայսրը ջլաշնացած էր: Ամբողջ դիշերնեւով նա քայլում էր Կրեմլում, խոսում էր ամեն տեսակ նոր պլաններով մասին և կոմս Դարյուին խոստովանեց իր տատանումները խեղճան պատճառը: Ի՞նչպէս հեռանալ, ի՞նչպէս նահանջել սկսի ինքը, որ սովոր է միայն հարձակվելու ու նվաճելու:

Դարյուն այն կարծիքին էր, որ պետք է Մոսկվան վերածել ամրացւած ճամբարի, ձմեռել այնտեղ, դարձանք սպասել Ֆրանսիայից ու Եվրոպայից օժանդակ ուժերի դաշուն և այն ժամանակ վերսկսել ռազմական դործողութիւնները: Բայց մարշալները, ինչպէս և Նապոլեոնը, դեմ էին այդ պլանին:

Հոկտեմբերի 14—ին Նապոլեոնը Բերային հրամայում է, որ նա կրկին կայսեր հրամանը՝ Սմոլենսկից չանցկացնել Ֆրանսիական ոչ մի հրետանային սլաքի, որտեղից էլ որ այն ուղարկված լինի Մեծ բանակին, հոկտեմբերի 17—ից սկսած՝ ոչ մի հրետանային կամ հեծելազորային չօկատ չուղարկվի Մոսկվա, այլ միայն Մոժայսկում, Գժատսկում, Վլադիմիրում (ուր որ ստացվի հրամանը): «Բանակն ուրիշ դիրք է դրավելու», — ասված էր հրամանում:

Վերադարձներին արդեն մի քանի օր անընդհատ Մոսկվայից փոխադրում էին Մոժայսկ: 1812 թվի հոկտեմբերի 18—ին Նապոլեոնը Կրեմլի բազում մարշալ Նեյի կորպուսի դիվիզիաների ստուգատես կատարեց: Հանկարծ հրետանու հեռավոր մի դիրքուն դարմացրեց կայսրին: Կարճ ժամանակից հետո ժամանած մի արդյուտանոտ հաղորդեց, որ Կուսուկովը հանկարծակի դուրս է եկել Տարուտինից, հարձակվել է Մյուրատի վրա և նրան պարտութուն է պատճառել:

Թնդանոթների որոտը, որ հասնում էր Նապոլեոնին, իսկապէս որ դալիս էր Ֆրանսիական բանակի ավանդարդի դիրքերից, որ կանգնած էր Չեռնիշնա դետի մոտ և դառնում էր տարության տակ: Այս ավանդարդն աշտեղ կանգնած էր երտարության տակ: Այս բոլորովին անդործ: Մյուրատն կար, սեպտեմբերի 24—ից, բոլորովին անդործ: Մյուրատն էր ունեւր ընդամենը մոտ 20—22 հազար մարդ: Ոչ Կուսուկովն էր չարժւում Տանըւ վրա հարձակւում, ոչ էլ Մյուրատն էր չարժւում Տարուտինի վրա: Հենց Լորիստոնի ժամանելուց սկսած, որ հալըն էր առնվել իբրեւ Ֆրանսիական բանակի վատ դրության վի էր

անհնայա նշան, զեններալներ Բեննինգսենը, Երմոլովը, Բաղ-
դովուտը, Պլատովը չարունակ խնդրում էին Կուսուղովին
թույլ տալ, որ իրենք հարձակվեն Մյուրատի ջոկատի վրա։
Կուսուղովը նույնիսկ երկոորդական ճակատամարտ էլ չէր ու-
զում, բայց զիջեց, վաղօրոք արդեն որոշելով թույլ չտալ,
որ այդ ընդհարումը մեծ ճակատամարտի վերածվի։ Հոկտեմ-
բերի 16-ին Կուսուղովը նայեց կռվի ղեկավարիցիան, որ կաղ-
մել էր կլարտիրմեյստեր Տոլը և հաստատեց այն։ Մյուրա-
տի վրա հարձակվելը նշանակված էր հոկտեմբերի 17-ին։ Առա-
վոտյան Կուսուղովը ոչ ոքի չգտավ նշանակված տեղերում։
Առհասարակ, ջղայնացած լինելով, որ իրեն ստիպում են անել
այնպիսի մի դրոժ, որը նրա կարծիքով հարկավոր չէր, Կու-
սուղովը լիակատար կատաղության հասավ։ Նա թունդ հայ-
հոյեց իրեն հանդիպած երկու սպաների։ Կուսուղովը կար-
գադրեց Երմոլովին վտարել ծառայությունից, բայց երբ
բարկությունն անցավ, նա վերացրեց իր վճիռը։

Հետևյալ օրը, հոկտեմբերի 18-ին զեններալ Բաղդովուտը
գրոհ տվեց Մյուրատի ձախ թևի վրա, իսկ Օուլով-Դենիսովը—
աջ թևի վրա։ Ճակատամարտի ընդհանուր ղեկավարությունն
էր վրա էր վերցրել Բեննինգսենը։ Կուսուղովը չէր երևում։
Օուլով-Դենիսովի առաջին հեծելազորային հարձակումը հաջող
էր, Փրանսիացիները հեռ չպրտվեցին, թնդանոթներ զրավվե-
ցին։ Սակայն Փրանսիացիները կարողացան ուշքի դալ և հե-
տիոտ եղբրենքի երկու զնդերին ղեկավարեցին սպանիչ կրա-
կով։ Այդ ժամանակ սպանվեց նաև զեններալ Բաղդովուտը, որ
այդ զնդերի հրամանատարն էր։ Գտնելով, որ իր ձեռքի տակ
բավականաչափ զորքեր չկան Փրանսիացիների վրա հուսալի
հարձակում գործելու համար, Բեննինգսենը Կուսուղովին
խնդրեց իրեն օգնություն ուղարկել, բայց Ֆելդմարշալը մեր-
ժեց, և Երմոլովի, Կոնովնիցինի, Միլորադովիչի ոչ մի
խնդրանքը չօգնեց։ Մյուրատը դանդաղ և կարգով նահանջում
էր Չեռնիչնա գետի մյուս կողմը, դեպի Սպաս-Կուպա,
հրաձգությամբ պաշտպանելով իրեն հետապնդող Օուլով-
Դենիսովից։ Գործը վերջացավ առանց որևէ խիստ վճռական
հետևանքի և ամեն ինչ հանդեպ ուսաների սկզբնական հաջո-
ղության։

Հոկտեմբերի 18-ի ճակատամարտը, որ հայտնի է ինչու
Տարուտինի ճակատամարտ է կոչվում,— քանի որ Տարուտին

դյուղը գտնվում էր կռվի վայրից հեռու, դեպի հարավ,—այդ
ճակատամարտը, որ վերջացավ այդպիսի զուտ ուղղմական
հետևանքով, քաղաքական ու բարոյական մեծ արդյունքներ
տվեց: Բարոյական տեսակետից այն բարձրացրեց ուսանա-
նական ոգին. այդ առաջին զուտ հարձակողական ճակատա-
մարտն էր ամբողջ պատերազմի ընթացքում, այն էլ հաջող
ուսանքի համար: Քաղաքական տեսակետից այն հանդիսացավ
վերջին, վճռական խթանը, որը Նապոլեոնին հարկադրեց,
վերջապես, հեռանալ Մոսկվայից:

Նապոլեոնն այդ մեկնաբանեց այսպես. Կուտուզովն իրեն
բավականաչափ ուժեղ է դրում, և այս պատճառով պետք է
դեպի հարավ դնալ ավելի շուտ, քան ուսանական գլխավոր
հրամանատարը կիսկի դեպի այնտեղ տանող ճանապարհը:

Ամսի լույս 19-ի գիշերը Փրանսիական բանակն սկսեց
դուրս գալ Մոսկվայից: Ճանապարհին ձգվում էր ոչ միայն
100 հազարանոց զորքը (Մորտյեի կայազորը, որ բաղկացած
էր 8 հազար հոգուց, ամսի 19-ին մնում էր քաղաքում), այլև
ձգվում էին անվերջ դումակները, թալանված և Մոսկվայից
տարվող բարձրով լեկի-լեցուն սայլերը. ոտով կամ կառքով
դնում էին հազարավոր ամեն տեսակ մարդիկ—այն օտարերկ-
րացիներն իրենց կանանցով ու երեխաներով, որոնք Փրան-
սիացիների քաղաք մտնելու ժամանակ մնացել էին այնտեղ և
այժմ հեռանում էին, վախենալով ուսանքի վրեժի դրու-
թյունից:

Կայսրը գնում էր դեպի Կալուգա և բանակը տանում ու-
ղիղ դեպի Կրասնայա Պլադա, ճանապարհին վերցնելով Մյու-
րատի ջոկատի մնացորդները: Ճանապարհից նա Մորտյեին
հրաման ուղարկեց Կրեմլը պայթեցնելուց հետո անմիջապես
դուրս գալ Մոսկվայից և միանալ բանակին:

Փրանսիական զորքերի դուրս գալը չարունակվեց հոկտեմ-
բերի 20-ին և 21-ին: 21-ին էլ սկսվեցին Կրեմլի պայթեցում-
ները, որոնցից դեռ ինը ցնցվում էր Մոսկվայում: Հոգա ցնդե-
ցին՝ Զինապահեստի շենքը, Կրեմլի պարսպի մի մասը, սկսվե-
ցին հրդեհներ Գրանուլիտայա պալատում, տաճարներում,
մասնակի կերպով ավերվեցին Նիկոլսկայա աշտարակը և
գետի կողմը նայող աշտարակները: Բարեբախտաբար անձրևը
թրջեց պատրույղները, և պայթյունները չհասցրին այն ամ-
բողջ վնասը, որ կարող էր հասնել ըստ Նապոլեոնի հաշիվնե-

րի: Պայթյուններն այնքան ուժեղ էին, որ շենքերի պատերը քանդվում էին ոչ միայն Կրեմլում, այլև Կրեմլից դուրս: Իման Վելիկին պատահամբ անվնաս մնաց. դրված աղանի պատույթները թրջվել էին:

Կրեմլում և նրան կից հրապարակում յուրաքանչյուր պայթյունից հետո երկար ժամանակ լսվում էին վերալորված, կիսով չափ ճզմված, մահացու վախեցած մարդկանց ճիչերն ու հառաչանքները:

Պայթյունները շարունակվում էին: Ամսի 22-ից լույս 23-ի գիշերը դրանք այնքան ուժեղ էին, որ Կլետայ-դորոգում փրկեցին մի քանի շենքեր և նույնիսկ հեռավոր տարածքում թյան վրա ջարդվեցին պատուհանների ոչ միայն ապակիները, այլև շրջանակները:

Կրեմլի պարսպի վերջին պայթյունը տեղի ունեցավ 23-ի լուսարացին և մի քանի ժամից հետո մարչալ Մորտյի վերջին ջոկատները թողին քաղաքը:

Պայթյունները չէին լսվում ռուսական հեռավոր ճամբարում, բայց դրանք լսելի էին կադակական պարեկներին, որոնք արդեն վաղուց դադարի չէին Մոսկվայի շուրջը:

Ջոկաժմերի 22-ին պրապորչիկ Յադիկովը կադակական մի ջոկատով հետախուզության նպատակով մոտեցավ Մոսկվային: Լսելով սարսափելի դղրդոց ու ճայթյուն, որ դալիս էին քաղաքից, Յադիկովը որոշեց ձեռնարկել խիստ վտանգավոր մի դործ, — մտնել քաղաք, խմանալ պատճառը, որքան այդ հնարավոր լինի:

Կադակները փոքրիկ, հեծյալ ջոկատը մտավ Մոսկվա: Քար լուսթյունն ապչեցրեց նրանց: Փողոցներում ոչ մի Փրանսիացի չտեսնելով՝ նրանք հետզհետե մոտեցան Կրեմլին և այստեղ նրանք Ռուսաստանում առաջինն իմացան ցնցող նորությունը. Նապոլեոնը հեռացել էր:

VI

ՆԱՊՈԼԵՈՆԻ ԲԱՆԱԿԻ ՆԱՀԱՆՋԸ: ՊԱՐՏԻՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ

Անձայր, խայտաբղետ գետի նման Մոսկվայից հոսում էր Նապոլեոնի հարյուր հազարանոց բանակն իր հրետանիով և լեքեի արկղներով: Այդ բանակի առանձին մասերի հսկայական

դուժակները, կարեւորները, սայլերը թալանյաժ-բարիքով, որ պատկանում էին մարշալներին, ղեներալներին, սպաներին, շարքային ղեկավորներին, ու նորից բանակային պետական գում-մակները, նորից հրետանային պարկերը երկար ժապավենի նման ձգվում էին ճանապարհով:

Կրեմլի պալթեցումից և դեռ անմնաս մնացած մի քանի շենքերի հրկիզումից հետո, երբ Ֆրանսիական զորքերը դուրս էին դալիս Մոսկվայից, քաղաքի շուրջը վեց մղոն տարածու- թյան վրա «ամեն ինչ վառվում էր, հրկիրն ու երկինքը կար- ծես բոցերի մեջ էին», — ասում է արշավաւոր մի մասնակից։ Այնքնզհատ և լիթխարի հրդեհը մի քանի դիշեր չարունակ լուսավորում էր Նապոլեոնի բանակի ճանապարհը։ Հրացա- քեր երեսում էին թե՛ հետևում, թե՛ առջևում և թե՛ Կալու- դայի մեծ ճանապարհի երկու կողմերում։ Զինվորներին չա- րունակ թվում էր, որ վառվող կարմիր երկինքը սկսում է իջնել բոցավառված դաշտերի, անտառների, գյուղերի, հեռա- վոր եկեղեցիների զանգակատների վրա։

Գլխաւորն, որ Նապոլեոնը դժգոհ է այն բանից, որ բանակներ
իր հետ տանում է աղբայրի հակադէմական քանակութեամբ թան-
կարժեք, բայց արշավանքի համար անպիտք իրեր, և այս-
պատճառով աշխատում էին գորգերը, թանկագին գործվածք-
ները, ոսկե և արծաթե իրերը ծածկել զամբուլներով, հացի
հակերով, ալյուրով, թփով և այլն։ Բայց հենց այս վեր-
ջին առարկաները չափազանց հազվագյուտ էին։ Նապոլեոնն
իր հարկէ հասկանում էր այդ քողարկումը, բայց նա այն ժա-
մանակ սիրտ չէր անում հրամայել, որ թալանված արժեքնե-
րը թողնվեն Մոսկվայում և կիսաքաղցած զինուորները զրկվեն
այն միակերպական դիտակցութունից, թե իրենք մի օր որեւէ
բանով իրենց կվարձատրեն իրենց կրած բոլոր տառապանքնե-
րի համար։ Նրանք այն ժամանակ դեռ չգիտեին, որ իրենց
մեծամասնութիւնը Ռուսաստանում թողնելու է ոչ միայն
Մոսկվայում վերցրած ավարը, այլև իր կյանքը։

Նապոլեոնը զենու՞ էր դեպի Կալուդա, որպեսզի այնտեղից
դառնար դեպի Մոլոնեսի: Ինչո՞ւ Սմիլնսկը նրա համար այդ-
պիսի սլարտագիր էտապ էր: Ինչո՞ւ նա չորոշեց զենալ Ռու-
սաստանի հարավային հարուստ նահանգները:

Բանն այն է, որ Նապոլեոնը Մոսկենակ-Մինսկ-Վիլնա ճանապարհին ուներ կայազորներ, ուներ պարեհի պահեստներ և

պաշար, այդ ճանապարհը նախապատրաստված էր, իսկ Ռուսաստանի ամբողջ հարավում նա ոչինչ չէր պատրաստել: Որքան էլ այդ վայրերը լինեին «հարուստ», «հացառատ» և այլն, միևնույն է, անկարելի էր անհապաղ կադմակերպել 100 հազար մարդուց բաղկացած բանակի պարենավորումը, իսկ այդ մարդիկ դնում էին արագ, կոմպակտ մասսայով, մի քանի չարաթ անընդհատ:

Բայց, դուրս դալով Մոսկվայից, Նապոլեոնը հաստատապես որոշեց դեպի Սմոլենսկ դնալ ոչ թե հին, այլ նոր ճանապարհով, Կալուգայի վրայով, որովհետև միևնույն էր, մինչև Սմոլենսկ նա ոչ մի պահեատ չունեի և Մոսկվա-Սմոլենսկ հին ճանապարհը բոլորովին ավերված էր: Ընտրությունը կատարելով երկու ճանապարհների միջև, ուր նա պահեստներ չունեի, բայց նրանցից մեկի (Մոսկվա-Կալուգա-Սմոլենսկ) վրա դեռ կային «ձեռք չտված դյուղեր» (մարչալ Դավուլի արտահայտությունը), իսկ մյուսն ամբողջովին ավերված անպատ էր, Նապոլեոնն իհարկե դերադասեց Կալուգայի ճանապարհը: «Գնանք դեպի Կալուգա, և վա՛յ նրանց, ովքեր կվա՛կեն իմ ճանապարհը» — այսպես ասաց նա, երբ հոկտեմբերի 19-ին իր բանակը դուրս էր բերում Մոսկվայից:

Այս հանգամանքն ընդդժում է դեպի Տարուտինո Կուլտուղովի կատարած հռչակավոր մարշ-մանյովրի նշանակութունը. առանց այդ մանյովրի Կուլտուղովը հետո չէր կարողանա Մալոյարոսլավեյից դեպի հարավ Նապոլեոնի դեմ հանել անհաղթահարելի մի առաջակալ, որը վիակեց Ֆրանսիացիներին ճանապարհը դեպի Կալուգա:

Երբ լուր ստացվեց, թե Նապոլեոնը դուրս է եկել Մոսկվայից, այդ պահին Կուլտուղովը դառնում էր (նաև ասում էր) թե Ռուսաստանը փրկված է: Նրա բանակն ավելանում էր նորադեմների հավաքներով, օժանդակ զորքերի ժամանումով և արդեն հոկտեմբերի կեսին հավասար էր 85 հազար մարդու, չհաշվելով կազակներին: Նապոլեոնի բանակն ավելի քիչ համալրում էր ստանում:

Հոկտեմբերի 22-ին Տարուտինոյում, Կուլտուղովի գլխավոր զորակայանում երեկոյան ժամը 11-ին Դոխտորովի ուղարկած մի ձեռագիր միջոցով լուր ստացվեց, թե Նապոլեոնը դնում էր դեպի Մալոյարոսլավեյ, բայց Կուլտուղովը դանդաղեցնում էր Դոխտորովին օգնություն ուղարկելը: Մալոյա-

ցան քաղաքին, արդեն Նապոլեոնի ամբողջ բանակը վրա հասավ և եղերներին անմիջապես դուրս մղեց քաղաքի արվարձանից։ Այդ օրը Մալոյարոսլավեցն ուլթն անգամ ձեռքից ձեռք անցավ, երկու կողմից անլռելի որոտում էին թնդանոթները։ Մերթ ուսաները Փրանսիացիներին, մերթ Փրանսիացիները ուսաներին սվինամարտով դուրս էին մղում դերքերից և քշում քաղաքից։ Դոխտուրովն արդեն կործանվելու մոտ էր, երբ ցերեկվա ժամը երկուսին նրան օգնության հասավ Ռալսկին՝ իր կորպուսով, իսկ ցերեկվա ժամը չորսին—ինքը Կուտուզովը՝ ուսական ամբողջ բանակով։ Կուտուզովը չուրջանցեց քաղաքը և դերք բռնեց Մալոյարոսլավեցից Կալուգա տանող ճանապարհին։ Վրա էր հասնում երեկոն, Փրանսիացիներն ուլթերորդ դրոհով տիրանալով քաղաքին, սպասում էին գլխավոր ճակատամարտի։ Թնդանոթաձողությունը լռեց։ Քաղաքը վառվում էր։

Այդ ամբողջ սարսափելի դիչերը, նայելով վառվող քաղաքի ցուրին, լսելով աշնտեղից հասնող՝ վիրավորների ճիչերը, Փրանսիական բանակի աղմուկը և տեղ-տեղ հանկարծակի սկսվող ու ընդհատվող հրացանաձողությունը, ուսական բանակը սպասում էր հետևյալ օրվա մի նոր Բորոդինո, որովհետև այստեղ, Մալոյարոսլավեցում և նրա մոտ ամբողջ Մեծ բանակի և Նապոլեոնի իրեն ներկայությունն արդեն անկասկածելի փաստ էր։ Եվ հանկարծ 25-ի վաղ առավոտյան Փեղզմարշալը հրաման տվեց նահանջել Մալոյարոսլավեցից 2½ վերստ դեպի հարավ։ Կուտուզովի համար միակ կարևոր խոշորին էր աղատել Ռուսաստանը, ամենաքիչ վնաս հասցնելով ուսական բանակին։

Միլորադովիչի ավանդարդը քաղաքից հետ քաշվեց ամենաչնչին տարածությամբ։ Նապոլեոնը տեսնում էր, որ եթե ինքն առաջվա պես զնալու լինի դեպի Կալուգա, պետք է գլխավոր ճակատամարտի բռնվի, որն իր չափերով Բորոդինոյի ճակատամարտից պակաս չի լինի։ Եվ նա սիրտ չարեց։

Իր կյանքում առաջին անգամ Նապոլեոնը խուսափեց իրեն սպասող գլխավոր ճակատամարտից։ Ռուսական այդ արյունահեղ կամպանիայի ընթացքում առաջին անգամ նա մեջքով դարձավ դեպի ուսական բանակը, որոշեց հետապնդողի դիրքից անցնել հետապնդվողի դիրքը։

Դեռ հոկտեմբերի 24-ի երեկոյան ռազմական խորհրդում,

մի խրճիթում, որտեղից երևում էր վառվող Մարտյարոսյան-վեցը, Նապոլեոնը լուռ լուռ էր իր հավաքած մարչաների կարծիքները: Բեսսոյերը պնդում էր, թե անհնարին է Կուսուու-զովի վրա դրոշ տալ նրա դրափած դերքում: «Եվ ինչպիսի՜ դերք: Հենց նոր մենք իմացանք նրա ուժը: Եվ ինչպիսի՜ թշնամիների դեմ: Մի՞թե մենք չտեսանք երեկվա ճակատա-մարտի դաշտը, մի՞թե չնկատեցինք թե ուսսական զինվորներն ինչպիսի գայլալքով, վատ զինված, հազիվ մի կերպ հազմ-ված, այնուհեղ դեպի մահ էին գնում»: Բեսսոյերը վճռականա-պես խորհուրդ էր տալիս նահանջել, կռվի չբռնվել Կուսուու-զովի ամբողջ բանակի հետ, որը վահել էր Մարտյարոսյան-ցից Կալուդա տանող ճանապարհը:

Եվ Նապոլեոնը հեռեց նրա խորհրդին:

Մարտյարոսյանցից մինչև Սմոլենսկ Փրանսիական շահան-ջող բանակը, անցնելով ավերված, վառված քաղաքներով ու շրջուղերով, վառում էր այն ամենը, ինչ որ դեռ անմնաս էր մնացել:

Արդեն Մոսկվայից նահանջելու սկսելով Փրանսիական բա-նակը կիսաքաղց վիճակում էր: Նա դեպի Սմոլենսկ էր գնում մի ճանապարհով, որը «դրանից երեք ամիս առաջ արդեն ա-մայացած էր», ինչպես դրում է արշավանքի մասնակիցներից մեկը: Բաղցը հետզհետե սկսում էր կատաստրոֆիկ չափեր ընդունել: Հենց քաղցն էր, և ոչ թե ցուրտը, որ արագու-թյամբ քայքայում էր Նապոլեոնի բանակը Մարտյարոսյանցից Սմոլենսկ տանող ճանապարհին:

Զուտ Փրանսիական զորամասերում դիսցիպլինան դեռ ևս մնում էր: Բայց գերմանական և իտալական, մասամբ նաեւ լեհական ջոկատներում դիսցիպլինայի անկումն արդեն աբսոլ-յալում էր ամենաահարկու սիմպտոմներով:

Մինչ այս մինչ այն, Ժողովրդական պատերազմը, որ մինչ այդ մարմնավորվում էր կանոնավոր բանակի դործողութուն-այդ մարմնավորվում էր կանոնավոր բանակի դործողութուն-ներով և դյուղացիների անկաղմակերպ ելույթներով, դրանից հետո ընդունեց մի նոր ձև ևս, պարտիզանական շարժման ձև:

Ահա թե ինչպես սկսվեց այդ:

Դեռ Բորոդինոյից հինգ օր առաջ իշխան Բագրատիոնին ներկայացավ փոխ-դեղատես Դենիս Դավիդովը, որն իշխանի մոտ հինգ տարի ծառայել էր իբրև աղյուստան: Նա իշխանին մոտ հինգ տարի ծառայել էր իբրև աղյուստան: Նա իշխանին ներկայացրեց իր պլանը, այն է՝ օգտվելով Նապոլեոնի կոմու-

նիկացիոն դժի հսկայական ձգվածությունից—Նեմանից մինչև
 Գիստակ և Գիստակից ավելի հեռու, եթե Ֆրանսիացիները
 չարունակեին իրենց առաջնադասումը,— սկսել մշտական հար-
 ձակումներ և հանկարծակի դրոհներ այդ դժի վրա, պահեստ-
 ների, թղթեր տանող սուրհանդակների, պարենի գումակների
 վրա: Փոքրիկ ձիավոր ջոկատները, կատարելով իրենց գործը,
 թաքնվում են հետապնդումից մինչև նոր հարձակում կատա-
 րելը: Բացի դրանից, պարտիզաններն այդպիսի ջոկատները
 կարող են հենակետեր դառնալ գյուղացիներին խմբելու և
 զինելու համար: Կոռուղությունը, որին Բաղրատիոնը զեկուցել էր
 այդ սլանի մասին, թույլ տվեց Դավիդովին տալ 50 հուսար
 և 80 կադակ: Եվ նա ճանապարհ ընկավ՝ Նապոլեոնի թիկուն-
 քում շուրջանցելով Մեծ բանակը: Այսպես համեստ և առաջա-
 րդյունավոր աննկատելիորեն սկսվեց պարտիզանական պատե-
 րազմը, որ անվիճելիորեն իր դերը խաղաց 1812 թվի պատ-
 մության մեջ և հատկապես պատերազմի երկրորդ կեսում: Եվ
 միայն կադրային սպաները էին, որ դառնում էին պարտի-
 ղանական ջոկատների կազմակերպիչներ: Կարելի է, օրինակ,
 պատմել այսպիսի մի դեպք:

1812 թվի օգոստոսի 21-ին ռուսական արյերգարդն սկսեց
 կռվով հետ քաշվել Յարեկ-Չայմիշչևից, ուր արդեն մանում
 էին Ֆրանսիացիները: Դրադուռնական դեղի զինվոր Երմոլայ
 Չետվերտակովի ձին վերավորվեց և ձիավորը գերի ընկավ:
 Գիստակում Չետվերտակովին հաջողվեց փախչել ուղեկցող
 պահակներից և նա գնաց դեպի հարավ, Բասմանի գյուղը, հե-
 ոու Սմոլենսկի գլխավոր ճանապարհից, որով անցնում էր
 Ֆրանսիական բանակը: Այստեղ Չետվերտակովը հղանոյձ է
 նույն այն պարտիզանական պատերազմի սլանը, որը հենց
 այն օրերին կազմել էր նաև Դավիդովը. Չետվերտակովը ո-
 րոշեց գյուղացիներից պարտիզանական ջոկատ կազմել:

Բասմանիի գյուղացիներն անվստահությամբ վերաբերվե-
 ցին նրան, և նա միայն մի կողմնակից դտավ: Նրանք երկու-
 տով զնացին մի ուրիշ գյուղ: Ճանապարհին նրանք հանդիպե-
 ցին երկու Ֆրանսիացիների, սպանեցին նրանց և հագան նրանց
 շորերը: Այնուհետև հանդիպելով (Չադկովի գյուղում) Ֆրան-
 սիական երկու հեծելակների, նրանց էլ սպանեցին ու վերցրին
 նրանց ձիերը: Չադկովի գյուղը Չետվերտակովին օգնելու հա-
 մար տվեց 47 գյուղացի: Այնուհետև այդ փոքրիկ ջոկատը

Չեռովերտակովի առաջնորդութեամբ սկզբում կոտորեց Փրանսիական զորահաւորներին մի խումբ, թվով 12 հոգի, հետո մասամբ կոտորեց, մասամբ էլ փախուստի մատնեց Փրանսիական մի կիսավաշտ, թվով 59 հոգի, զբաղեց կառքերը: Այդ հաջողութիւնները հսկայական տպավորութիւն թողին և հիմար արգէն Բասմանի դշուղը Չեռովերտակովին տվեց 253 կամավոր: Չեռովերտակովը, որ անդրադէտ մի մարդ էր, դուրս եկավ պարտիզանական պատերազմի հիանալի կազմակերպիչ, տակտիկ և ստրատեգ: Հանկարծակի հարձակումներով անհանգստացնելով թշնամուն, խելացիորեն և զգուշութեամբ հետամուտ լինելով Փրանսիացիներին փոքր խմբերին և կայծակնաթափ հարձակումներով ոչնչացնելով նրանց՝ Չեռովերտակովը կարողացավ մարադշտրական ալան-թալանից պաշտպանել Գժատակի շրջակա ահագին տերիտորիան: Չեռովերտակովը դործում էր անխնայորեն, ասեւք դշուղացիներն էլ այնքան էին զայրացած, որ հազիւ թե կարելի լիներ նրանց զսպել:

Պարտիզանները շատ մեծ և անկասկածելի օգուտ բերին սկսած սեպտեմբերի կեսից մինչև Բերեզինսն, այսինքն նոյեմբերի վերջը: Նրանք հիանալի և հաճախ խելահեղութեան չափ համարձակ հետախույզներ էին: Օրինակ, Յիլդենբեր ֆրանսիական համադրեստով դնում էր ֆրանսիական ճամբարը և այդ արել է մի քանի անգամ: Սեպտեմբր մի անգամ դադարողի մոտեցավ ֆրանսիական մի ենթասպայի, նրան քաշեց դեց իր թամբին և բերեց ռուսական զորակայան: Դավիդովը 200—300 հոգուց բաղկացած խմբով խուճապահար էր անում հինգ անգամ ավելի ջոկատները, փախուստի էր մատնում նրանց, դրավում դումակը, աղատում ռուս զբերիներին, երբեմն թնդանոթներ էր դրավում: Գյուղացիները պարտիզանների և նրանց պետերի հետ ավելի հեշտ էին համակերպվում ու հարաբերութիւններ պահպանում, քան բանակի կանոնավոր զորամասերի հետ:

Պարտիզանների համար գյուղացիութեան օգնութիւնն առանձնապէս կարևոր էր պարտիզանութեան հենց սկզբում: Մոսկովայի նահանգի Բրոննիցկի գավառի գյուղացիները, վշադմա քաղաքի մոտ եղած Նիկոլա-Պոդոբելո գյուղի գյուղացիները, Բեթեցկի, Դորոգոբուժի, Սերպուխովի գյուղացիները խիստ էական օգուտ տվին պարտիզանական ջոկատներին:

րին: Նրանք հետամուտ էին լինում թշնամու առանձին խմբերին ու ջոկատներին, կոտորում էին Փրանսիական Ֆյուրաժիրներին ու մարադչոյներին, լիակատար պատրաստակամությամբ պարտիզաններին պարեն և ձիերին կեր էին հասցնում: Առանց այդ օգնութեան պարտիզանները չէին կարողանում կիսով չափ էլ հասնել այն հետեանքներին, որոնց նրանք հասան իրականում:

Հետո սկսվեց Մեծ բանակի նահանջը, և սկսվեց Կրեմլի անխմատ պայթեցումը, որը կատարուեցա՞ն հասցրեց Մոսկվոյ վերադարձող ժողովրդի բարկությունը, ժողովուրդը, որն ամբողջ քաղաքը դառավ ավերված: Այդ եղբայրակիչ ակտի—Կրեմլի պայթեցման վրա նայում էին ինչպես չարաննոյ ծաղր ու ծանակի վրա: Նապոլեոնի հրամանով նահանջի ժամանակ սխառեմատիկորեն հրկիզվում էին այն քաղաքներն ու գյուղերը, որոնց միջով շարժվում էր Փրանսիական լանակը: Վշտամայում գտնվեցին ոռոս գերիներ, որոնք Փրանսիացիների կողմից արգելափակված էին եկեղեցում, որը հրկիզված էր եղել, բայց պատահամբ չէր վառվել: Քանի դեռում, աճում էր ոռոս ժողովրդի դայրույթը Փրանսիացիների դեմ:

Գյուղացիները դործողությունները չէին սահմանափակվում միայն պարտիզանական ջոկատներին հաջորած օգնութեամբ, մարադչոյներին ու հետ մնացողներին բռնելով ու ոչնչացնելով, չէին սահմանափակվում Ֆյուրաժիրների դեմ պայքարելով և նրանց ոչնչացմամբ, թեև, նկատենք, որ հենց դա էր այն ամենասարսափելի, ջախջախիչ հարվածը, որ ոռոս գյուղացիները հասցրին Մեծ բանակին, նրան ենթարկելով սովի: Պայվոլո գյուղի (Բողորոգակ քաղաքի մոտ) գյուղացի Գերասիմ Կուրինը կազմեց գյուղացիների մի ջոկատ, կազմակերպեց նրանց, դիմեց սպանված Փրանսիացիներից գրաված զենքերով և իր օգնականի, գյուղացի Ստուկովի հետ միասին իր ջոկատը տարավ Փրանսիացիների դեմ և Փրանսիական հնծելազորայինների դեմ մղած կռվում նրանց լիախուստի մատնեց:

Բացառություն չէր տանուտիրուհի Վասիլիսան (Սմոլենսկի նահանգի Սիչևսկի գավառ), որը դերի էր վերցնում Փրանսիացիներին, եղանով ու գերանդելով քիչ Փրանսիական գերիներ չէր կոտորում, և, ինչպես նրա մասին պատմում էին, հարձակվում էր գումակների հետ մնացած մասերի վրա: Բո-

մաս-մաս մտնում էր նոյեմբերի 8-ից մինչև 15-ը: Մալոյա-
րոսլավեցից մինչև Սմոլենսկ այդ ամբողջ աղետալի ճանա-
պարհին թե՛ Նապոլեոնը և թե՛ նրա բանակն իրենց բոլոր
հույսերը կապում էին Սմոլենսկի հետ, ուր ինչպես ենթադրում
էին, պիտի լինեին պարենի պաշարներ և հողատանջ, սո-
վալլուկ մարդիկ ու ձիերը պետք է հնարավորութուն ունենա-
յին շատ թե քիչ ժամանակով կանգ առնելու և հանդստանա-
լու: Փեղծարչալ կուտուղովը չարժվում էր հարավային կող-
մից, դուգահեռ դժով, Ֆրանսիացիներին դարձացնող դանդա-
ղությամբ: Այդ «դուգահեռ հետապնդումը», որ ծրագրել էր
և իրականացնում էր կուտուղովը, հանդիսացավ ամենաճիշտ
միջոցը Նապոլեոնի բանակի կործանման համար: Ի հարկե,
այն ժամանակ Ֆրանսիական շտաբն այդ չդիտեր: Թվում էր,
թե հնարավոր կլինի Սմոլենսկում լավ հանդստանալ, ղեկավոր-
ները կկարողանան իրենց կարգի բերել, ուշքի դալ իրենց
կրած սարսափելի տանջանքներից, բայց այդպես չեղավ:
Մեռած, կիտավեր, կիսով չափ վառված քաղաքում նահանջող
բանակին սպասում էր մի հարված, որը վերջնականապես ընկ-
նեց նրա շատ զորամասերի ուղին: Սմոլենսկում դրեթե բոլոր-
ովին մթերք չկար:

Այդ մոմենտից նահանջը վերջնականապես սկսեց վերած-
վել փախուստի, և այն ամենը, ինչ որ եղել էր Մալոյարոս-
լավեցից մինչև Սմոլենսկ, պետք է նսեմալար այն անդունդի
հանդեպ, որ արդեն Սմոլենսկից հեռու բացվել էր Մեծ բանա-
կի առաջ և որը դրեթե ամբողջովին կլանեց նրան:

Վրա էին հասնում արյունոտ պայքարի վերջին օրերը:
Նոյեմբերի 17-ից, երբ Ֆրանսիական բանակը չարժվեց Սմո-
լենսկից, մինչև 1812 թվի դեկտեմբերի 14-ի երեկոն, երբ
մարչալ Նեյը, մի քանի հարյուր մարտունակ ղեկավորների և
մի քանի հազար անոն, վերապիտ, հիվանդ մարդկանց դուրսն
անցած, Պլատովի կողմից հետապնդվելով, կռվելով, Ֆրան-
սիացիներից վերջինն անցավ Նեմանը և դուրս եկավ պրուսա-
կան ափը, — չարունակվում էր Նապոլեոնի բանակի հուղե-
վարքը:

Ինչպես արդեն ասված է, Սմոլենսկում դրեթե ոչինչ
չգտնվեց այն առատ պաշարներից, որոնց վրա հույս էին դրել
Ֆրանսիացիները: Համարյա բոլոր ձիերը կոտորվեցին, որով-
հետև ոչ Սմոլենսկում, ոչ էլ Սմոլենսկի շուրջը կեր ճարելը

բոլորովին անհնարին էր: Այն անասուններին, որոնք իր ժամանակին տեղ էին հասցրված, կերան երթական գումարտակները, որոնք օգոստոսից մինչև հոկտեմբերի սկիզբը անցնում էին Սմոլենսկի միջով ու ղնում համալրելու Մոսկվայում գտնվող Մեծ բանակը: Եվ այնուամենայնիվ եթե բանակը, գալով Սմոլենսկ, դեթ հեռավոր չափով նման լիներ այն բանակին, որով Նապոլեոնը կտարում էր իր առաջվա արշավանքները, Սմոլենսկի պաշարը կբավականանար,— ճիշտ է, շատ և շատ աղքատիկ բաժիններով, բայց կբավականանար ղոնե մի 15—20 օր: Սակայն սովալլուկ, չարացած, միմյանց բոլորովին օտար մարդկանց խալտարդեա, բաղմալեղու մասան, որ արդեն սպասում էր իր վրա կախված մահացու վտանգին, մտնելով Սմոլենսկ, իրեն այնպես պահեց, որ խոսք էլ չէր կարող լինել ռադիկալների շատ թե քիչ կանոնավոր, կազմակերպված անցկացվող բաշխման մասին: Գվարդիան ստանում էր այն ամենը, ինչի կարիք ուր դեղում էր, և այնպիսի առատությամբ, որի մասին մյուս զորամասերը մտածել անգամ չէին համարձակվում: Գվարդիայի դեմ ուղղված զայրույթը, որ առաջացել էր նախանձից, ընդգրկում էր բանակի մյուս բոլոր զորամասերը, բայց որովհետև գվարդիականները լիովին պահպանել էին դիպլոմատիան, սարբին ղեկերը և ընկերական ամուր կապը, ուստի և նրանց դեմ պայքարելն անօգուտ էր: Դրա փոխարեն մյուս զորամասերը, կորցնելով կարգապահության ամեն մի դեպքմունք, վայրի և քաղցած զազանների նման նետվեցին պահեստների վրա, ջարդ ու փշուր արին զրանք և հափշտակեցին այն ամենը, ինչ որ այնտեղ գտան, և պետերի ոչ մի սպառնալիքն ու զոռոցը չէին կարողանում նրանց դապել:

Համարյա արդեն երրորդ օրը Սմոլենսկի պահեստներն այլևս գոյություն չունեին: Դիպլոմատիան ընկնում էր զարհուրեցուցիչ արագությամբ, դերմանական, լեհական, իտահական քաղցած դիպլոմատների, ինչպես նաև զուտ Ֆրանսիական որոշ զորամասերի գաղանացումը (որ Մոսկվայում չէր նկատվում) չտեսնված չափերի հասավ:

Նոյեմբերի 14-ին, Սմոլենսկում հինգ օր մնալուց հետո, Նապոլեոնն իր գվարդիայով դուրս եկավ քաղաքից դեպի Կրասնի: Նրա հետևից ղնում էին փոխարքա Եվգենիի, Դավուի, Մյուլբաուի կորպուսների մնացորդները: Այդ ամբողջ

բանակի հետեւից ղեկում էր արշերդարդը մարչալ Նեյի հրամանատարութեամբ, իսկ Նեյի հետեւից ղեկում էին ուսաները: Մոտենում էին այն օրերը, երբ Նեյին վիճակված էր հուսահատական պայքարով և ճարտար մանյովրներ կատարելով փրկել թե՛ Նապոլեոնին իրեն, թե՛ այն 30—35 հազար մարտիկներին և 30 հազար հիվանդ, համարյա անդեն, հոգնած, լուրջ կռիւի համար արդեն անպետք զինվորներին, որոնք քարշ էին դալիս Սմոլենսկից դուրս եկած բանակի հետեւից, նրա հետ միասին Կրասնիի միջով ղնալով դեպի Դուբրովնա և՛ Օրշա:

Այն մոմենտին, երբ ուսական բանակը, կռիւով մարչալ Նեյի արշերդարդի դեմ, մոտենում էր Կրասնիին, Կուտուզովի շրջութունն, իհարկէ, շատ ավելի լավ էր, ավելի հաստատուն, քան Մոսկւան հանձնելուց հետո և նույնիսկ Տարուտինից ու Մալոյարոսլավեցից հետո: Հաղթանակը Նապոլեոնի դեմ արդեն կասկածից դուրս էր: Ներխուժած բանակը, սարսափելի պակասած լինելով, շտապում էր շուտ հեռանալ Ռուսաստանից և նրա բոլոր ցանկությունները հանդում էին միայն այն բանին, թե ինչպես հասնել սահմանը, չմեռնել քաղցից ու ցրտից: Բայց մյուս կողմից Կուտուզովի համար ավելի ու ավելի դժվար էր վարել իր ստրատեգիական դիժը, Նապոլեոնին Ռուսաստանից արտաքսել առանց ավելորդ արյունահեղ ճակատամարտերի: Կուտուզովը պարզապէս չէր հալածուում, որ Նապոլեոնը հնարավորութիւն կունենա Ռուսաստանում պարտվելուց հետո լիովին պահպանել իր համաշխարհային կայսրութիւնը և չէր ցանկանում ուսական արյուն վատնել առանց այն էլ անխուսափելի այդ հետևանքին հասնելու համար: Բայց ցարը, որ առհասարակ չէր հալածուում Կուտուզովի և ոչ մի խոսքին, առավել ևս նրան չէր հալածում հիմա, երբ ամեն կողմից խոսում էին Փեղզմարչալի անհասկանալի անվճռականութեան և «վախկոտութեան» մասին:

Նեյը, արշերդարդի հրամանատարը, նոյեմբերի 17-ին վերջինը հեռացավ Սմոլենսկից: Նա ուներ մոտ 7—8 հազար մարտիկ, հեծելազորի մի փոքրիկ ջոկատ (400—500 մարդ), և նրա հետեւից ղեկում էր հիվանդների ու վիրավորների անդեն մասսան (մոտ 8 հազար մարդ): Մարչալն ուներ 12 թնդանոթ:

Կրասնիի մոտ կռիւները ձգձգվում էին այն պատճառով, որ Նապոլեոնը շարունակ սպասում էր, թե երբ է մոտենալու

արյերգարդը, բայց երբ պարզվեց, որ Նեյն այլևս չէ կաբող
դուրս դալ ոռոտական զորքերի օղակից, Նապոլեոնը հույսը
կտրեց այն ամենից, ինչ որ կապված էր արյերգարդի հետ և
նահանջեց դեպի Օրչա: Մտնելով Օրչա, թեպետև չհամար-
եցրեց, հաշվելով զորքերը, Նապոլեոնը չէր դադարում խոսել
Նեյի մասին, իր «քաջերից քաջի» մասին, ինչպես անվանում
էր նրան: Մարչալ Նեյի և նրա 7—8 հազարանոց արյերգար-
դի կործանումը կասկածից դուրս էր թվում:

Նոյեմբերի 18-ին Նեյը, որ դեռ չգիտեր, թե Նապոլեոնը
արդեն հեռացել է Կրասնից, փորձեց կռվով անցնել ոռոտ-
ական միացյալ ուժերի արանքից, բայց հետ մղվեց: Ռուսները
թիկունքումն էին, ոռոտները հրետանային կրակ բացին թևե-
րից: Առջևում անտառ էր՝ ձյունով ծածկված, առանց ճանա-
պարհների, անտառից դեմը Դնեպրն էր: Նեյն օղակված էր
բոլոր կողմերից... Այդ ժամանակ նա ասաց իր գեներալնե-
րին. «Անցնել անտառի միջով: Ճանապարհներ չկան: Անցնել
առանց ճանապարհների: Գնա՛լ դեպի Դնեպր և անցնել Դնե-
պրը: Գետը դեռ բոլորովին չի՞ սառել: Կոտրել: Մա՛րչ»:
Մոտ երեք հազար մարդ զնաց նրա հետևից: Նեյը հասավ գե-
տին: Բարակ, փխրուն սառույցը ծածկել էր Դնեպրի երեսը:
«Դնեպրի առա՛ջ», — դուռաց մարչալը և առաջինը ոտ դրեց ան-
հուսալի սառույցի վրա:

Նա անցավ Դնեպրը, 3 հազար զինվորներից ու սղաններից
կորցնելով 2200 հոգի: Նրանք, որոնք կենդանի մնացին, պառ-
մում էին, թե ինչպես իրենց ընկերներից չատերը նրանց աչ-
քերի առաջ ընկան ճեղքերի մեջ ու չքացան սառույցի տակ:
«Արդյոք մենք այն ժամանակ մտածո՞ւմ էինք, որ դեռ չառ
անդամ նախանձելու ենք նրանց, ովքեր արդեն հանգստացել
էին Դնեպրի հատակում» — ասում է Նապոլեոնի բանակի զին-
վորներից մեկը, որը մարչալ Նեյի հետ անցել էր Դնեպրը:

Բայց նահանջի երկրորդ էտապը դեռ նոր էր սկսվում...

Նոյեմբերի 20-ին Նապոլեոնը դուրս եկավ Օրչայից: Այն-
տեղից դուրս դալու արդեն երրորդ օրը նրա ավանդարդի ա-
ռաջավոր պարեկներն իրենց առաջ ջրի պղտոր մի շերտ տե-
սան: Նրանց առջև ձգվում էր բավական լայն մի գետ, չառ
տղմոտ ավերով, դեռ չսառած, սակայն արդեն քշում—տանում
էր առաջին ոչ մեծ ասուցաբեկորները, — մի դեռ, որից անցնե-

լը հեշտ չէր լինի նույնիսկ սովորական ժամանակ, իսկ սառ-
ցակալումը սկսվելիս այդ ավելի էր զգալարանում:

Այդ բերեղինան էր: Նապոլեոնն իր զվարդիայով մոտե-
նում էր մահացու կերպով վտանգավոր մի բարյերի, որը
պետք էր անպայման հաղթահարել կամ կործանվել:

VII

ԲԵՐԵՋԻՆԱՅԻՑ ԱՆՅՆԵԼԸ ԵՎ ՆԱՊՈԼԵՈՆԻ ԲԱՆԱԿԻ ՎԵՐՋԵՆԱԿԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Դեռ նոյեմբերի 18-ին Մինսկ քաղաքը, ուր Նապոլեոնին պա-
րենի ու ռադմամթերքի հսկայական պաշարներ էին սպասում,
զբաղված էր ռուսական զորքերի—Չիչագովի բանակի ավան-
դարդի կողմից: Նապոլեոնն այդ մասին իմացավ երկու օրից
հետո, նոյեմբերի 18-ին, դեռ մինչև Օրչա մտնելը: Այնու-
հետև շուտով Նապոլեոնին ապչեցրեց այն լուրը, որ Չիչա-
գովն արդեն գրավել է նաև Բորիսովը: Այդ մոմենտից Նա-
պոլեոնն շտապ հրամաններ է ուղարկում իր գեներալներին,
որպեսզի նրանք որքան կարելի է շատ ուժ կենտրոնացնեն
Բորիսովի մոտ, շտապելով այդ կերպ իրենց համար ապահովել
Բորիսովի կամուրջով Բերեզինայի աջ ափն անցնելը:

Նոյեմբերի 25-ին Նապոլեոնին հաջողվեց մի շարք ճար-
տար մանյովներով ու գեմոնատրացիաների միջոցով Չիչագովի
ուշադրությունը գրավել դեպի Բորիսով ու Բորիսովից դեպի
հարավ, և մինչդեռ Չիչագովն այնտեղ էր կենտրոնացնում իր
ուժերը, նեապոլիտանյան թագավոր Մյուրատը, մարշալ Ու-
զինոն և երկու ինժեներական գեներալ շտապ կարգով երկու
կամուրջ կառուցեցին Ստուդյանկիի մոտ:

Նոյեմբերի 25-ից լույս 26-ի գիշերը Ստուդյանկա մտավ
կայսերական զվարդիան, իսկ լուսաբացին երեաց նաև Նապո-
լեոնը: Նա հրամայեց անհապաղ սկսել անցումը: Այդ բոլորին
նրա ձեռքի տակ կար ընդամենը 19 հազար մարտիկ: Գետն
անցնելիս հրաձգություն էր տեղի ունենում գեներալ Չապլիցի
ջոկատի հետ. Չապլիցն առաջինն էր նկատել, որ Նապոլեոնն
իր զորքերը Բորիսովից տարել էր ինչ-որ ուղղությամբ: Նա-
պոլեոնը հրամայեց հաստատուն կերպով գրավել երկու ափե-
րը՝ Ստուդյանկայի վրա կառուցած երկու կամուրջների մոտ:

Նոյեմբերի 26-ի ամբողջ օրը զորքերը մոտենում էին նրան։ Ամսի 26-ից լույս 27-ի գիշերը Նապոլեոնը մարշալ Նեյին հրամայեց իր կորպուսի մնացորդներով և ամբողջ նոր դժար-գիւյտով անցնել ձախ ափը։ Նոյեմբերի 27-ի ամբողջ գիշերը և ամբողջ առաւոտը շարունակվում էր անցումը, և Փրանսիա-կան զուսմարտակները մեկը մյուսի հետեւից անցնում էին աջ ափը։ Նոյեմբերի 27-ի ցերեկվա երկրորդ ժամին շարժւեց հին դժարգիւյտն՝ Նապոլեոնի հետ։ Հին դժարգիւյտի հետեւից գնա-ցին Վիկտորի կորպուսի զեվիզիանները։

Գետն անցնող Փրանսիական բանակը շարքեր էր կազմում աջ ափում։ Երբ բանակն անցավ, Նապոլեոնի հրամանով կա-մուրջները վառեցին։

Հիմա բոլորի հայացքները դարձան դեպի մեծ բանակի մնացորդների վերջնական հոգեարքի տեսարանը։ Այդ հոգեար-քը տեղի ունեցավ հենց Բերեզինյան անցնելուց հետո։

Բանն այն է, որ վիրավորներին, թույլերին, անգններին, Մոսկվայից Փրանսիացիների հետ դնացող օտարերկրացիներին գետից անցկացնելու համար Նապոլեոնը ժամանակ չունեցավ և նրանք թողնվեցին բախտի կամքին։

Ահա թե ինչ է գրում գեպըի ակնատեսներից մեկը. «Այն օրվա (Բերեզինայի վրայով Նապոլեոնի անցնելու օրվա) երե-կոյան դեմ Վեսելովսկայա հարթավայրը, որ բաշխված էր դարձակ է, ամենադարձուրեւի, անպատմելի պատկեր էր ներ-կայացնում. այն ծածկված էր կարետներով, սայլերով, որոնք մեծ մասամբ քարդոտված էին, մեկը մյուսի վրա ընկած. այն ծածկված էր մեղած կանանց ու երեխաների դիակներով,— նրանք բանակի հետ եկել էին Մոսկվայից, փրկվելով սույն քաղաքի աղետներից կամ ցարկանայով ուղեկցել իրենց հա-րենակիցներին... Այս դժբախտներն, որոնք դռնվում էին երկու կողմը բանակների միջև, ողբալի մահ էր վիճակված. շատերին ոտնատակ արին ձիերը, շատերը ճգմվեցին ծանր սայլերի տակ, ոմանք սպանվեցին գնդակներով ու արկերով, ոմանք գետում խեղդվեցին զորքերի հետ անցնելիս... Ամե-նահավասար հաշվով կորուստը հասնում է մինչև տասը հազար մարդու...»։ Այդ մոայլ պատկերներից բացի պահպանվել են ակնատեսների ուրիշ չիշողութունները ևս, որոնք երբեմն պատկերում են ուստական զորքերի մեծահոգի, մարդասիրա-կան վերաբերմունքը գեպի հաղթված թշնամին։ «Սարսափելի

բուք էր, ես մոլորվել էի և բոլորովին մենակ էի», — դրում է ռուսական դեներալ Լեվենչտերնը: Ձին նրան արդեն ցրտահար եղած վիճակում տարավ դեպի ռուսական բժշկական կրակները: «Այն անտառում, որի մոտ գտնվում էր մեր բժշկը, կային շատ Փրանսիացիներ, որոնք պատապարվել էին այնտեղ՝ դիչերելու համար: Գիշերը նրանք առանց զենքի դուրս եկան անտառից և եկան դեպի մեր խարույկները՝ տաքանալու: Որքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ մենք առավոտյան յուրաքանչյուր խարույկի շուրջը տեսանք քառասուն-հիսուն հոգի Փրանսիացիներ, որոնք պղպել, չրջան էին կադմել և մեռնելուց առաջ բնավ երկյուղ չէին ցուցաբերում: Բարի, գեղեցիկ կարպենիկոն, որն անխնայորեն թրատում էր թչնամուռ, երբ վերջինս դեմ առ դեմ կանգնած էր լինում նրա առաջ, այստեղ երկարացրեց այդ դժբախտներից շատերի կյանքը»:

Այդ ժամանակ Փրանսիական բանակի դրուժյունը բոլորովին կատաստրոֆիկ էր: «Քամին և սառնամանիքը խիստ դաժան էին, բոլոր ճանապարհները ծածկված էին ձյունով, Փրանսիացիները խումբ-խումբ թափառում էին մոտակա դաշտում: Ոմանք տեղ-տեղ կրակ էին վառում ու նստում դրա շուրջը, ոմանք էլ մորթում էին ձիերը, միսը խորովում կամ ուտում հում-հում, կրծում ոսկորները: Շուտով ես տեսա սառած և սառչող մարդկանց...» Անտանելի քաղցն այդ ժամանակ ծայրահեղ չափերի հասավ: Իսկ նոյեմբերի 28-ից սկսվեցին դաժան սառնամանիքներ, որոնք հասան 28⁰ ըստ Ռեոմյուրի և չարունակեցին մինչև դեկտեմբերի 12-ը:

Սակայն մարչալ Նեյին էլի հաջողվեց Բերեզինայի ու Վիլնոյի միջև հալածել մի բուռն մարտունակ մարդիկ և ժամերով կրակելով՝ պաշտպանվել ռուսներից:

Ամենադաժան սառնամանիքները այդ օրերին ռուսների հետապնդումը թուլացավ: Փրանսիական մեռնող զինվորները երազում էին զերի ընկնել ռուսական կանոնավոր զորքերին:

Ահա մի տեսարան, որ նկարագրել է աղանատեսը.

Վիտգենշտեյնը Պոլոցկի ճանապարհին մի վտըր հանգիստ առնեց իր զորքերին: Ձինվորներն արդեն նստել էին չչի և կաշա ուտելու: Չոկատին գերի հանձնված Փրանսիացիներն իրար դիմի հալածված, սովալլուկ, կիսաառած (ինչպես ասում է այդ դեպքի աղանատեսը), «իբենց կիսամեռ աչքերը հառում

Սեղալուրը, որ Փրանսիական բանակի հետ միասին ապրել է այդ օրերը, հաստատում է, որ Նապոլեոնը հետ Բերեղինյան անցավ ընդհանուր առմամբ մոտ 60 հազար մարդ, որ արդեն աջ ափում նրանց միացավ մոտ 20 հազարանոց զորք այն կորպուսներին, որոնք մնացել էին թևերում, բայց այդ 80 հազար հոգուց 40 հազարը կոտորվեց Բերեղինայից մինչև Վիլնա անցնելիս: Եվ դեռ շատ շատերին էլ վիճակված էր մեռնել Վիլնայի ու Նեմանի միջև:

Դեկտեմբերի 9-ի կեսասուած, սովալուկ մարդկանց առաջին խմբերը մտան Վիլնա: Այստեղ նրանք անմիջապես սկսեցին ջարդել ու թալանել պահեստները, որպեսզի կարողանային կշտանալ ու տաքանալ, քանի դեռ իրենց հետ չէին բռնել: Արդեն հետևյալ օրը ռուսական առաջին ջոկատներն սկսեցին մոտենալ Վիլնային: Փրանսիական զորքերը Վիլնայից նահանջեցին դեպի Կովնո, Նեման:

Նապոլեոնը դեռ դեկտեմբերի 6-ին Սմոլոուսի այլանում թողեց բանակը, նրա մնացորդների ղեկավոր Հրամանատարությունը հանձնեց նեպոլիտանյան թաղավոր Մյուրատին: Դա անձնապես իրեն փրկելու փոխուստ չէր: Այդ օրերին նրան ալլես ոչինչ չէր սպասում: Բայց նրա ներկայությունը չէր կարող բարելավել զրությունը: Նապոլեոնի մեկնումը ռադմա-քաղաքական տեսակետից անհրաժեշտ էր հենց նոր կործանված բանակի փոխարեն շուտափույթ կերպով նոր բանակ ստեղծելու համար: Պարզ էր, որ Ռուսաստանում կայսեր կրած պարտությունը նրա դեմ էր հանելու կամ ամբողջ Եվրոպան, կամ դոնե նրա մի մասը և ամենից առաջ Պրուսիան, ուր այսօր-վաղը մտնելու էին ռուսական զորքերը:

Նապոլեոնի համար այդ պահին դեպի Ռուսաստան կատարված արշավանքը պատկերանում էր միայն իբրև տանուլ տված խաղ: Նա արդեն մտահոգված էր մի նոր, պատրաստվող խաղով և մտածում էր, թե ինչպես ալելի լավ կլինի չահել այն: Նա այն ժամանակ դեռ չգիտեր, որ այն վերքը, որ նրան հասցրել է ռուս ժողովուրդը, այլևս չի բուժվի և վերջ կտա նրա համաշխարհային կայսրությանը:



Դեպի Ռուսաստան կատարված արշավանքը վերջացավ: Դեկտեմբերի երկրորդ կեսի ընթացքում Մալդոնայլեի ջոկա-

տի մնացորդները և հետ մնացածները, չլիտվական անտառներում դառնալուների փոքրիկ խմբերը չարունակում էին անցնել Պրուսիա: Ընդհանուր առմամբ 30 հազար հողուց քիչ պակաս զորք կար սկսել Մյուլբաուի տրամադրության տակ, իսկ հետո, երբ Մյուլբաուը մեկնեց, — Իտալիայի փոխ-արքա Եվդենի Բոգառների տրամադրության տակ:

Եվ դա այն ամենն էր, ինչ որ մնացել էր Մեծ բանակից, 420 հազար հողուց, որոնք 1812 թվի հունիսի 24-ին չորս կամուրջներով անցել էին նույն նեմանը, և այն 150 հազար հողուց, որոնք հետո հետզհետե միանում էին այդ բանակին:

VIII

ԵՎՐՈ ԱՅՈՒՄ ՆԱԳՈՒՆՈՒՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՏԱԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մի ամբողջ շարք սերունդների միտքն անդադար աշխատել է այն հարցի լուծման վրա, թե որո՞նք են եղել Նապոլեոնի վերջնական կործանման պատճառները, մի կործանում, որի արագությունն իտալական ապրիլից է: Վերջենք այդ համաժողովական կայսրության ամենաբարձր բարդաժաման մոմենտը—1812 թվի առաջին ամիսները: Նապոլեոնն ինքնակալ կերպով թաղափորում է կամ անմիջականորեն իր փոխանորդների ու ղեկներալ-նահանգապետներին միջոցով, կամ փաստական, իրեն միանգամայն հնազանդ թաղափորների միջոցով մի տերիտորիայում, որն սկսվում է նեման գետի մոտ, Դանցիգում, Համբուրգում, Մամսերգամում և վերջանում է Մադրիդում, Կալարիբայում, Իլլիրիայում: Նրա միայն մի խոսքը բայական է, որպեսզի ամեն մի թաղափոր փոքրիկ գաւհից, եվրոպական կոնտինենտի ամեն մի պետություն ջնջվի քաղաքական քարտեզից, իր զորքերն ուղարկվեն այն վայրերում մնալու, ուր ինքը կցանկանա, և դրանք պահվեն որևէ տեղում այնքան ժամանակ, որքան նա հարկավոր կդնի: Միայն երկու տերություն պահպանում են իրենց անկախությունը, — Անգլիան և վերոպայի արևմտյան ծայրում և Ռուսաստանը — արևելյան ծայրում: Բայց Նապոլեոնը չի կառկածում, որ նվա-

ձեռով կոնսերվեցան, նա կհաղթահարի մնացած այդ երկու խո-
չընդոտները:

1811 թվի դարնանը Նապոլեոնը Թյուրինի իր պալատում
ընդունում է բալթական գեներալ Ֆոն Վրեդերն: Գեներալը
երկչոտ և քաղաքավարի կերպով համարձակվում է արտա-
հայտել այն կարծիքը, թե՝ թերևս չպետք է կռախնդիր լի-
նել Ռուսաստանի նկատմամբ և նրա վրա հարձակում նախա-
պատրաստել: Նապոլեոնը հրամայական ժեստով ընդհատում է
խոսակցին ու հայտարարում. «Երեք տարուց հետո ես կլինեմ
ամբողջ աշխարհի տերը»: Երեք տարուց հետո մեծադույն
կայսրությունը, որ երկրում զոյություն ունեցավ Ալեքսանդր
Մեծի գլխավորությամբ, իրենից ավերակներ էր ներկայաց-
նում...

Այդ վերջին տարիները—սարսափելի, արյունահեղ պայքա-
րի ժամանակները ռազմական մասնագետներին կարծիքների հա-
մաձայն, զուտ ռազմական տեսակետից հաճախ (օրինակ՝
1813—1814 թվականները) ռազմական արվեստի կատարելու-
թյան նույնպիսի դադաթնակետ էին, ինչպես և մեծ զորավա-
րի առաջիկա անհամար պատերազմները: Այդ Ֆինալային պայ-
քարի սկզբի մոմենտին Նապոլեոնն ավելի չատ ուժ ուներ,
քան առաջիկա ամեն մի պատերազմի ժամանակ, և վիթխարի
միապետություն խորտակման բացատրությունը պետք է
փնտռել ավելի խորը պատճառներում, քան այս կամ այն ճա-
կատամարտը կամ նույնիսկ այս կամ այն պատերազմը տանու
տալն է:

Նապոլեոնի պատմություն մեջ առկա էր կատաստրոֆից
չափ առաջ նշմարվող և անչափ կարևորություն ունեցող մի
բեկում, որն այդ կատաստրոֆն անխուսափելի դարձրեց, և
առանց այդ հիմնական վրաստը հասկանալու կայսրության
կործանման ամեն մի բացատրություն կլինի միայն կրկնու-
թյուն այն անթիվ ու անհամար, միստիկական, ումանտի-
կական և իդեալիստական ֆանտազիաների, որոնք այնքան
չափ են եղել պատմադրության մեջ:

Նապոլեոնն անխորտակելի էր, և նրա դեմ ուղղված ա-
մեն մի պայքար միշտ էլ վերջանում էր նրա հակառակորդ-
ների կործանումով, քանի դեռ նա կատարում էր այն «պատ-
մություն խիրուրդի» դերը, որն արագացնում էր պատմականո-
րեն առաջադեմական սկզբունքների հաղթանակը և հրով ու

որով ոչնչացնում էր խարխլված, առանց այն էլ կործանման
դատապարտված համաբնորոպական Ֆեոդալիզմը: Երբ Մարքսն
ու էնդելսը մասնանշում էին, որ Նապոլեոնի պատերազմները
կոնտինենտալ Եվրոպայի երկրներում որոշ իմաստով կատա-
րում էին այն դործը, որ Ֆրանսիայում տեռորի տարիներին
կատարում էր Ղիլյոտինը, նրանք նկատի ունեին հենց այդ
տարիները, երբ Նապոլեոնը ջախջախում էր եվրոպական Ֆեո-
դալ-ազնվականական արսուղուտիստական միապետություննե-
րը: Եվրոպական Ֆեոդալական արսուղուտիզմն արդեն երբեք
չէր կարող լիովին ուշքի դալ այդ սարսափելի հարվածներից:
Նապոլեոնի նվաճած երկրներում եվրոպական հասարակության
առաջադիմականորեն տրամադրված շրջանների համակրան-
քը, երբեմն դադանի ու երբեմն էլ խիստ աներկիտ արտա-
հայտված, այն տարիներին Նապոլեոնի կողմն էր:

Այն բեկումը, որի մասին քիչ առաջ ասվեց, վաղուց էր
նշմարվում: Առևտուրիցից հետո սկսեցին այն հիվանդագին
դուրս գերմանական երկրներում, Բեռլինյում, Հոլանդիա-
յում, Իտալիայում, և նույնիսկ այն մարզիկ, որոնք դեռ 1804
թվին չէին պարսալվում Նապոլեոնին՝ կայսերական տիտղոս
ընդունելու համար և որոնք դանում էին, որ կարելի է Ժո-
զովուրդների ազատարարի դեր կատարել նույնիսկ արքայա-
կան ծիրանի հագած: Բայց Տիլզիտից հետո այլևս անկարելի
էր ինքնախարեությամբ տարվել ու սփոփվել:

Նապոլեոնն արդեն բոլորովին բացահայտ կերպով որպես
ղեկավար սկզբունք առաջադրեց այն դրույթները, որոնք էա-
պես նա սկսել էր իրականացնել վաղուց ի վեր: Այդ ղեկավար
սկզբունքի պատմական հիմնական արատախորությունն այն
էր, որ անշեղորեն կիրառվում էր սոսկ բռնության վրա հիմն-
ված տարբերությունը Ֆրանսիայի կամ այսպես կոչված «հին
դեպարտամենտների» և ամբողջ միացած, նվաճված Եվրոպայի
միջև, որը «նոր դեպարտամենտներ» էր կոչվում: Ֆրանսիա-
յանը համարվում էին արտոնյալ, իշխող ռասա, և հենց
միայն նրանք պետք է օգտվեին այն բոլոր արտոնություննե-
րից, այն բոլոր տնտեսական օգուտներից, որ նրանց համար
առաջնություն էր մեծ կայսեր հաղթական սուրբ: Միացած եվ-
րոպական Ժողովուրդները պետք է լինեին Ֆրանսիայի հաբկա-
առուներ: Իրեն անվանելով «Արևմուտքի կայսր», ձգտելով
հաստատել իր համալսարհային տիրապետությունը, Նապո-

լեռնը միևնույն ժամանակ միանգամայն դիտակցաբար ձգտում էր լինել Փրանսիական ազդային թաղավոր, որն ունի բոլոր հիմքերը՝ մնացած իր բոլոր հպատակներին կողոպտելու հանուն Փրանսիացիներին շահերի։ «Ազդային շահն ինձ համար ամենից բարձր է», — ասում էր նա, իբրև ազդային շահ հանկանալով Փրանսիական բուրժուազիայի շահերը, որի համար Գերմանիան, Իտալիան, Իսպանիան, Հոլլանդիան, Բելգիան, դերմանական երկրները, Վարչապալի հերցոգությունը և այլն — ամենից առաջ պետք է լինեին հարկավոր հումքի շուկաներ։ Նա միանգամայն դիտակցաբար քայքայում էր այն երկրները, որոնք կարող էին տնտեսապես մրցել Փրանսիայի հետ, և նույնիսկ չէր թաքցնում, որ Փրանսիացիները բացառիկ հովանավորություն են արժանի ոչ միայն այն պատճառով, որ նրանք ամենից «հավատարիմ» են նրա բոլոր անհամար հպատակներին մեջ, այլև այն պատճառով, որ նրանք որպես ռասա ամբողջ մարդկությունից բարձր են կանգնած։ Նա այդ միտքն արտահայտում էր այն անմիջականությամբ ու բացորոշությամբ, որոնք հատուկ էին նրան իր հիմնական սկզբունքներին անսխալականության նկատմամբ իր անսասան վստահության հետևանքով։ Օրինակ, նա պատերազմական կորուստները հաշվելիս իսկական կորուստներ էր համարում միայն այն կորուստները, որ կրում էր նրա բաղձադե գործը Փրանսիական մասը, որոնց մասին արժեր խոսել։ Ահա, օրինակ, ինչպիսի հանգստացուցիչ տոնով էր նա խոսում ռուսական ձյուններում Մեծ բանակի սոսակալի կործանման մասին։ «Ռուսաստանում մեր կորուստները խոշոր էին, բայց ոչ այնպես, ինչպես երևակայում են։ Կայսերական բանակում հաղթվել են 140 000 հոգի, որոնք խոսում էին Փրանսերեն, և 1812 թվի կամպանիան, իսկապես ասած, չին Փրանսիայի վրա նստեց միայն 50 000 մարդ»։ Նա այդ դոկտրինականությամբ մասնանշեց նաև իր հռչակավոր խոսակցության ժամանակ, որ ունեցավ իշխան Մետտերնիխի հետ, 1813 թվի հունիսի 28-ին, Դրեզդենում, երբ հրաժարվեց դաշնակիցների հետ հաշտություն կնքել։ Հիշելով 1812 թվականը, նա ընդունեց, որ ընկածների թվում «եղել են 100 000 Փրանսիական լավագույն զինվորներ։ Նրանց համար ես իրոք ցավում եմ։ Ինչ վերջին զինվորներ։ Նրանց համար ես իրոք ցավում եմ։ Ինչ վերջին, բարեբուր է մնացածներին, չէ՞ որ նրանք խաղաղիներ էին, լեհեր և գլխավորապես դերմանացիներ»։ «Գերմանացիներ»

բառն արտասանելիս կայսրն արհամարհական շարժում արեց։
«Ննթադրենք այդպես է,— պատասխանեց Մետտերնիխը,—
բայց համաձայնեցեք, թաղավոր, որ դա այնպիսի փաստարկ
կու՞մ չէ, որ ձերդ մեծությունը պետք է բերի, երբ դուք
խոսում եք դերմանացու հետ»։

Նապոլեոնը նվաճված Եվրոպայի ժողովուրդներին տնտե-
սապես ճնշում ու քայքայում էր ոչ միայն իր կոնտինենտալ
բռնկողայով, այլև այն երկաթե ճնշումով, որ նա գործա-
դրում էր հենց տնտեսական բնագավառում, ձգտելով Եվրո-
պան դնել այնպիսի դրուժյան մեջ, որ նա չկարողանա դուրս
գալ ինքնուրույն տնտեսական կյանքի ճանապարհը։ Նա արգե-
լում էր նվաճված երկրներում նոր մեքենաներ և տեխնիկական
կառարեւադործություններ մտցնելը, հրամայում էր իտալիա-
յից արտահանել մետաքսի հումքը, որը հարկավոր էր Լիոնի
Փարբիկանտներին, իսկ իտալական մետաքսավաճառներին
թողնել միայն այն պաշարները, որոնք Փրանսիացիներին հար-
կավոր չեն լինի։ Նա գիտակցաբար խոչընդոտ էր հարուցում
նվաճված Եվրոպայում առևտրի համար անհրաժեշտ ճանա-
պարհներ անցկացնելու դեմ, հրամայեց Իսպանիայից Փրանսիա
քշել հաղարավոր ու հաղարավոր նրբաբուրդ մերինոսներ,
իտալական արդյունաբերությունը գրկելով նուրբ բրդից և
այլն։ Այսպես ասած՝ «իդեոլոգիական» բնագավառում նա
բնավ չէր քաջվում ամեն հարմար առիթով մատնացույց անել
այն, որ Փրանսիացիներն այսպես ասած՝ ծննդյան իրավունքով
անսահմանորեն բարձր են մնացած մարդկությունից։ Տիրի-
տից հետո, երբ Նապոլեոնը սկսեց արագությամբ կորցնել
հնարավորի և անհնարինի սահմանների հասկացողությունը,
նա նվաճված Եվրոպայի բնակչության առաջ և հենց այն
պրոդրեսսիվ դասակարգի առաջ, որպիսին այն ժամանակ հան-
դիսանում էր բուրժուազիան, պատկերացավ ոչ թե իբրև աղա-
տարար, այլ դաժան բռնակալ, որը մարդկանց բաժանում է
երկու կատեգորիայի—տերերի և ստրուկների, ըստ որում ա-
ռաջին կատեգորիային պատկանում են Փրանսիացիները, իսկ
երկրորդին՝ մնացած բոլոր նվաճված ժողովուրդները։ Նրա
վրա սկսեցին նայել որպես անողորմ մի բռնակալի վրա, որը
գիտակցաբար քայքայում է այն երկրները, որոնք դժբախտու-
թյուն են ունեցել ընկնելու նրա լծի տակ, և այդ հրեշավոր

բռնակալությունից ադատվելը դարձավ եվրոպական ամբողջ առաջադեմ ժառանգութեան բաղձանքը:

Հակադաս հետաքրքրություն է ներկայացնում այն ֆե- նոմենը, որը կարելի է անվանել մեծ բանակի կործանում և սրն ամենասերտ կերպով կապված էր Նապոլեոնի պատմա- կան դործունեութեան մեջ առաջացած բեկման հետ, որը քիչ առաջ մատնանշվեց: Նապոլեոնի բանակն անպարտելի էր նրա թաղամորտութեան առաջին տարիներին: Բայց այն չափով, ինչ չափով նրա մեջ լցվում էին Ֆրանսիացիներին օտար տարբե- րը, փոխվում էր և այդ բանակի ուղին, չքանում էր նրա առաջվա կուռ միասնությունը, որը նրան ափսոսելի անդուգա- կան դործիք էր դարձնում իր առաջնորդի ձեռքում: Նապո- լեոնյան բանակի երբեմնի անպարտելիութունն սկսեց չքանալ դեռ 1812 թվից շատ առաջ: Բացարձակապես ոչ մի բան հաշ- վի չառնելով՝ Նապոլեոնը Ռուսաստանի վրա էր զբոսում՝ ոչ միայն ամբողջ բազմացեղ, իր նվաճած եվրոպայի ղեկավորնե- րին, այլև նույնիսկ Պիրենեյան լեռնաշղթա իր դրաված մտ- սի իսպանացիներին, թեպետ իսպանական ժողովուրդը դեռևս ամենևին չէր կարող նվաճված համարվել և շարունակում էր նվաճողին ոչ մի օր չդադարող կատաղի դիմադրություն ցույց տալ: Պատերազմել օտար դործի համար, հայրենիքը ճնշողի և ավերողի համար, հասկանալով, որ նրա յուրաքան- չյուր հաղթանակն է՛լ ավելի է ամբաջնում ստրկութեան չղթաները, որ նա դրել է ամբողջ եվրոպայի վրա, — այդ վեր էր մարդկային ուժերից: Երբեմնի անպարտելի բանակի այդ քայքայումը նկատում էին Նապոլեոնի բոլոր ղեկավարները, դեռ այն ժամանակից էլ շատ առաջ, երբ սաքսոնացիները, նրա կողմից բռնութեամբ քշված լինելով Լայպցիգի արյունոտ դաշտը, կռվի եռուն պահին հանկարծ ամբողջովին անցան Նա- պոլեոնին թշնամի կողմից իրադրված, անմիջապես շուռ տվին իրենց թաղանթները և սկսեցին դեմ առ դեմ կոտորել Ֆրան- սիացիներին: Այսպիսով Ֆրանսիական բանակի անպարտելիու- թյունը չբացավ հենց այն ժամանակ, երբ Նապոլեոնը երես զարձրեց այն պատմական պրոգրեսիվ առաջադեմների ավար- տումից, որը նա կատարում էր, երբ ընկել էր ֆեոդալական սեփականության դեմ պայքարող լուսապաղը և երբ նրա ձեռք բերած ամբողջ անսահման հզորութունը սկսել էր ծառայել ոչ միայն սեփական, այլև ըստ էության բոլորովին անիրադր-

ծելի խնդիրներին, — Ֆրանսիացիներին դարձնել տիրապետող ժողովուրդ, իսկ մյուս բոլոր ալլացիներին — իրավագուրի և անկեղծ օբեկտներ, աշխատող բեռնատար անասուններ։ Այստեղ հարկավոր է նաև ասել, որ բանակի քայքայումը երկար ժամանակ դանդաղում էր որոշ բացառիկ պայմաններով, որոնց մեջ անցնում էին Նապոլեոնի տիրակալության այդ վերջին տարիները։

Բանակը, եթե չհաշվենք 1812 թվականը, ապրում ու կռվում էր նյութապես բավարար պայմաններում, 1813, 1814 և 1815 թվականներին ևս Նապոլեոնի ղեկավարները սովորաբար ունենում էին լիակատար չափով միս, յուղ, ճարպ, հաց, գինի։

Այդ բանակի հրամանատարն էր համալսարհային պատմության խոշորագույն գործավարը։

Նապոլեոնի դեմ պատերազմող երկրների հրամանատարությունը Կուսուզովի մահից հետո ոչ 1813, ոչ 1814, ոչ էլ 1815 թվին նույնիսկ չնչին չափով էլ չէր կարող Նապոլեոնի հետ մրցել ռազմական արվեստում։

Այդ ամբողջ կատաղի պայքարի ընթացքում Ֆրանսիան (հին դեպարտամենտները) բոլորովին հնազանդ էր Նապոլեոնին և Ֆրանսիական թիկունքն անում էր այն ամենը, ինչ որ կախված էր իրենից, որպեսզի օժանդակեր ռազմաճակատին։

Այլ կերպ ասած՝ առկա էին այն հանգամանքները, որոնք նվաճողի համար նպաստավոր էին Ֆինալային պայքարի ժամանակաչափանում և որոնք պատմության մեջ այդպիսի դեպքերում բնավ երբեք անցյալում չեն կրկնվել և ապագայում էլ չեն կարող կրկնվել։

Եվ այդ դեռ բոլորը չէ։ Առկա էր նաև մի այլ պատմական հանդամանք, նույնպես անկրկնելի. չէ՞ որ չենք մոռանա, որ հասարակական դարդացման այն ժամանակվա ստադիայում որ հարգացման պայմանները Նապոլեոնի դեմ ուղղված ըստ այդ դարդացման պայմանների Նապոլեոնի հին ֆեոդալական արքայատադրական պայքարը ղեկավարեցին հին ֆեոդալական արքայատադրական Նապոլեոնի մյուս ժողովուրդների հասցրեց ղեկավարության վայրի կատաղության և վուրդներին հասցրեց ղեկավարության վայրի կատաղության և նրանք սկսեցին քաջաբար կռվել... Այս անգամ ռազմական դեռ պոտիզմին հաղթեց ֆեոդալական դեպոտիզմը»։ Հետևաբար

Նապոլեոնի համար նպաստավոր հանգամանք էլ նաև այն էր նրա դեմ ուղղված պայքարը ղեկավարող պետական մարդիկ ոչ մի յնքնուրույն առաջադիմական իդեոլոգիա չէին կարող հակադրել նրան։ Եվ, չնայելով այս բոլոր քարենպաստ պայմաններին, Նապոլեոնն այնուամենայնիվ չէր կարող չկործանվել։ Մատնանշված բոլոր պայմանները կարող էին միայն ժամանակավորապես հետաձգել նրա կործանումը, այնպես, ինչպես նրա կործանումը ժամանակավորապես հետաձգեցին այն ֆինանսական միջոցները, որոնք մինչև վերջին մոմենտը գտնվում էին նրա տրամադրության տակ, — լիարժեք ոսկե-դրամով տրվող վճարները պարենի և այն ամենի համար, ինչ որ հարկավոր էր բանակին և ինչ որ ֆրանսիական ղեկավարական իշխանությունները 1813 թվին գնում էին բնակչությանը։ Չօգնեց նաև ֆրանսիայի, Արևմտյան և Կենտրոնական Գերմանիայի ու Բելգիայի դյուղացիական բնակչության այն «կշտությունը», որն իր վրա էր դարձնում դաշնակիցների ուշադրությունը, — որոնք նախնորդ Նապոլեոնի հետևից շարժվում էին դեպի նրա կայսրության խորքերը։ Այս բոլոր պայմանները բավական եղան միայն նրա համար, որպեսզի երկարացնեին Նապոլեոնի ղեկավարությունը, բայց ոչ թե կանխեն կայսրության քայքայումն ու կործանումը։ Լիակատար արհամարհանքը նվաճված ժողովուրդների նյութական շահերի և մարդկային արժանապատվության նկատմամբ, բաժանումը՝ ոչխարների և այծերի, մարդկանց բաժանումը տերերի ուսույթի և ստրուկների ուսույթի՝ քայքայեց բանակը, ինչպես քայքայեց նաև Նապոլեոնի կառուցած քաղաքական մեծ շենքի հիմքը։ Եվ պետք է արդարացի համարել այն պատմաբանների հայացքը, որոնք ասում են, թե զարմանալի է ոչ թե Նապոլեոնյան ղեկավարության անկումը, այլ նրա 'սոցիալիկ արտասովոր երկարատևությունը։ Այդ երկարատևությունը բացատրվում է ամենից առաջ հենց նոր հիշատակված Նապոլեոնի համար նպաստավոր պայմաններով, որոնց մեջ տեղի էր ունենում նրա վերջին պայքարը։ «Միակ ռեռուցիան, որն իրոք սարսափելի է, — ասում էր Նապոլեոնը, — դա այն ռեռուցիան է, որն առաջանում է դատարկ ստամոքսից»։ Այդ ռեռուցիայից նրան հաջողվեց պաշտպանվել, բայց այդ էլ կատաստրոֆը հետագիծը և ոչ թե՛ կանխող հանգամանք էր։ Այն բազմադան պատճառների կողքին, որոնք իրենց դե-

բը խաղացին ներխուժման նախապատրաստութեան մեջ, նշա-
նակութիւն ունեւ նաև երբեմնի պայծառ քաղաքական մտքի
մթաղնումը. այդ նապուլեոնի համար այնքան բնորոշ դարձաւ
այն ժամանակներից, երբ նա ընկաւ այն կեղծ իդէալի աղ-
ղեցութեան տակ, թե իբր ֆրանսիան կոչւած է իշխելու երկ-
րի բոլոր ժողովուրդների վրա և ինքն էլ «միասիւ» ունի
կազմակերպելու և ղլխավորելու ֆրանսիական ռասայի այդ
ախրապետութիւնը: Ինչ է, Ռուսաստանը: Նա, ինչպես և բո-
լոր մյուս ժողովուրդները, պետք է հնազանդվի: Եթե նա
համարձակվի հալախել ինքնուրույն քաղաքականութիւն
վարելու, ապա այդ միայն նշանակում է, որ «Ռուսաստանը
խաղում է ճակատագրի հետ»: Ահա այս միտքը մի քանի վա-
րկանտներով նա կրկնում էր մի քանի անգամ մինչև այն մո-
մենտը, երբ այն շարադրվեց նրա կոչում՝ Ռուսաստանի դեմ
արշավանք սկսելու մասին: Ինչո՞ւ չկոտորել մի քանի հա-
րյուր հազար սորուկ, եթե կարելի է այդ ճանապարհով մէ նոր
դադուր ձեռք բերել: Իսկ միակ կորուստը, որի մասին ար-
ժե խոսել, մեծ չի լինի, որովհետև բանակում առհասարակ
չառ չեն «Հին դեպարտամենտների» իսկական ֆրանսիացիները:
Նապուլեոնի չլուծած հաղթանակներից հետո նրա մեջ անձ-
նական անսահման հպարտութիւնը սերտորեն կապւած էր
ռասայական էգոիզմի այն խելահեղութեան հետ, որը նվաճ-
ված ժողովուրդների համար սարսափելի և առելի էր նրա-
նով, որ ներշնչւում և իրականացւում էր երկաթե հետևողա-
կանութեամբ:

Նապուլեոնը եվրոպական ժողովուրդների առաջ դրեց մի
ինդեթ. կամ հրաժարվել այն մտքից, թե մի ժամանակ Եվ-
րոպան ունեցել է իր անցյալը և ունենալու է իր ապագան,
որն անկախ է օտարերկրացի նվաճողներից, կամ կենաց և մա-
հաւ պայքար ձեռնարկելով տապալել բոնապարտին և ապացու-
ցել, որ ֆրանսիական ռասայի կոչումը համաշխարհային տի-
րակալութեան նկատմամբ՝ լոկ քաղաքական զառանցանք է:

Անձ պայքարի ամենածանր մասը բաժին ընկաւ հենց ռուս
ժողովրդին: Հենց Ռուսաստանում էր, որ առաջին անգամ
ուրվականի պես չքացաւ այնքան երկար ժամանակ դոյու-
թիւն ունեցած համոզմունքը Նապուլեոնի բանակի անպարտե-
լիութեան մասին:

«Ահա քո առաջ կիսափայրենի
Մոսկովյան բուրգերն արեգակի տակ
Շողում են պայծառ, բայց ավաղ, հիմա
Դո վերջալուսի արեգակն է այդ»—

ասել է Բայրոնը, գլմեկով Նապոլեոնին: Բայրոնը պատկանում էր այն անգլիացիներին թվին, որոնք հակվում էին այն մտքին, որ ուստ ժողովուրդը այն ժամանակ վերկեց ոչ միայն ցամաքային եվրոպան, այլև Անգլիան:



1812 թվի հունիսի 24-ին Նապոլեոնը, համաշխարհային պատմության մեծագույն զորավարը, մտավ ուստական պետության տերիտորիան,— և ըստ Տալեյրանի արտահայտության, վրա հասավ նրա համաեվրոպական տիրակալության «մալուճանի սկիզբը»: 1941 թվի հունիսի 22-ին ողորմելի ավանտուրիստը, որ ձգտում է Նապոլեոն դառնալ, իր բանակներն անցկացրեց մեր սահմանը: Նենգ ու չարամիտ թշնամին, դողի նման հարձակվելով Սովետների մեծ երկրի վրա, սխալվեց իր հաշիվների մեջ: Բայց վախեցած մարդկանց վրա չէր, որ հարձակվեց Հիտլերը, որը սովորել էր հաղթանակներ տանել անգլեն ժողովուրդների կամ այն բանակների դեմ, որոնց դավաճանել էին իրենց կառավարողներն ու գեներալները, և որը երբեք ուրիշ ոչ մի հաղթանակ չի տարել:

Նրա երկիրը քաղցած է այնպես, ինչպես Նապոլեոնի օրով երբեք քաղցած չեն եղել նրա հակադասական կայսրության ամենախուլ անկյունները, որոնք չնորհադրված էին ընկալելու նից: Այն բանակում, որը գեո զնդակահարման երկյուղից հնազանդվում է նրան, նույնիսկ «գուտ» ազգային կորպուսների ու դիվիզիաների յուրաքանչյուր զնդում, յուրաքանչյուր վաշտում տիրում են միջբասակարկային ատելությունն ու դժառնությունը, որոնք այդպիսի չափով երբեք չեն եղել Ֆրանսիական Մեծ բանակում:

Նապոլեոնի օրինակը մի ավելորդ անգամ ստիպում է համոզվել, թե որչափ նույնիսկ ամենաբացառիկ, մեծագույն զորավարը դառնում է անզոր և անխուսափելիորեն կործանվում է, երբ իր առաջ դնում է համաշխարհային տիրակալության և իր ժողովրդի ու նվաճված ժողովուրդների անողոր չահա-

դործման բոլորովին անիրագործելի, բացառապես քաղաքական կողմից է գործվել ընդհանուր խնդիրները:

Մեր օրերում ուստ մեծ ժողովրդին նորից վիճակված է աղատագրել նվիրույթն և աղատագրել անհամեմատ ազնիվ վատթար, ամենանողկալի և ամենամոթարի լծից, որը դրված է բորսայականների, լրտեսների, ծախվող քաղաքականների, բանկիրների, չահագործողների և պարազիտների ձեռքով:

«Փաշխտական Գերմանիայի դեմ մղվող պատերազմը,— ասում է ընկեր Ստալինը,— չի կարելի սովորական պատերազմ համարել: Նա միայն երկու բանակների միջև մղվող պատերազմ է: Նա միաժամանակ ամբողջ սովետական ժողովրդի մեծ պատերազմն է՝ դերման-Փաշխտական դորքերի դեմ: Փաշխտական կեղեքիչները դեմ մղվող համաժողովրդական այս հայրենական պատերազմի նպատակն է ոչ միայն վերացնել մեր երկրի վրա կախված վտանգը, այլև օգնել նվաճող բոլոր ժողովուրդներին, որոնք հեծում են դերմանական ֆաշիզմի լծի տակ: Այս աղատագրական պատերազմում մենք մենակ չենք լինի: Այս մեծ պատերազմում մենք հավատարիմ դաշնակիցներ կունենանք հանձինս Եվրոպայի և Ամերիկայի ժողովուրդների, այդ թվում ի դեմս դերմանական ժողովրդի, որին ստրկացրել են հիտլերյան պարագլուխները: Մեր հայրենիքի ազատության համար մղվող մեր պատերազմը կմիաձուլվի Եվրոպայի ու Ամերիկայի ժողովուրդների պայքարի հետ հանուն իրենց անկախության, հանուն դեմոկրատական ազատությունների: Այդ կլինի ազատության կողմնատակից ժողովուրդների միասնական ֆրոնտ ընդդեմ ստրկացման և ստրկացման սպառնալիքի՝ Հիտլերի ֆաշիստական բանակների կողմից»:

Ի մեծ երջանկությու՜ն մարդկության, վախճանի սկիզբն արդեն նշմարվել է...

Հանդիստ անձնագործությունը՝ սպառնացող վտանգի մոմենտին, որ հատուկ է ուստ ժողովրդին, այժմ էլ մնացել է նույնը, ինչ որ այն ժամանակներում, երբ Նապոլեոնը հայտարարեց, թե ուստ զինվորներն իրենց քաջությամբ դերացան ցում են այն բոլոր ազգերի զինվորներին, որոնց հետ նա կռիվներ էր մղել: Բայց որչա՛փ փոփոխվել են մյուս բոլոր պայմանները:

Սովետական Միության բանակը տեխնիկական տեսակետից այս անգամ ոչ միայն չի դիմում ներխուժած թշնամուն, այլև շատ տեսակետերով ավելի լավ է դինված ու հազեցված։ Պզտադործելով համաշխարհային պատմության բոլոր խոշորագույն պատերազմների ու ճակատամարտերի, այդ թվում նաև վերջին եվրոպական պատերազմի վերջը, կարմիր Բանակը ջախջախիչ հարվածներ է հասցնում սանձարձակ թշնամուն։

Հիտլերյան բանակների «անպարտելիության» առասպելը կմերկացվի։

«... Պատմությունը ցույց է տալիս, որ անպարտելի բանակներ չկան և չեն եղել։ Նապոլեոնի բանակն անպարտելի էին համարում, բայց նա ջախջախվել է մերթ ուռսական, մերթ անդլիսական, մերթ գերմանական զորքերի կողմից» (Ստալին)։

Ինչ վերաբերում է Հիտլերի գերման-ֆաշիստական բանակին, ապա «Այդ բանակը դեռ լուրջ դիմադրության չէր հանդիպել Եվրոպայի մայր-ցամաքում։ Միայն մեր տերիտորիայում նա լուրջ դիմադրության հանդիպեց։ Եվ եթե այդ դիմադրության հետևանքով գերման-ֆաշիստական բանակի լավագույն դիվիզիաները ջախջախվեցին մեր կարմիր Բանակի կողմից, ապա այդ նշանակում է, որ Հիտլերյան ֆաշիստական բանակը նույնպես կարող է ջախջախվել և կջախջախվի, ինչպես ջախջախվեցին Նապոլեոնի և Վիլհելմի բանակները» (Ստալին)։

«Կարմիր Բանակի դինամիկների քաջությունն անօրինակ է։ Թշնամուն հասցվող մեր հակահարվածն ամբողջում ու աճում է։ Կարմիր Բանակի հետ միասին Հայրենիքը պաշտպանելու համար ոտքի է ելնում ամբողջ սովետական ժողովուրդը» (Ստալին)։

Գարշելի ոճրագործներին, որոնց մասին գերմանական հռչակավոր դրող Հենրիխ Մանն ասել է, թե նրանք անց են կացրել մարդկային ստորությունների չափը, — չի հաջողվել լծի ասի տառապող ոտրուկներ դարձնել Կրկու հարյուր միլիոն սովետական ազատ քաղաքացիներին։ Սեր դործն արդար է։ Թշնամին կջախջախվի։ Հաղթանակը մեկը կլինի։



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032623

(704)

გზ. 2 მ.

